

ԱՆԿԱԽ ՀԱՇՎԵՏՎԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԻ:

Հայաստան ՍԵՂՄԱԳԻՐ 2014–2015ԹԹ

Արտակ Քյուրումյան
Անկախ հետազոտող
Second Progress Report

Open
Government
Partnership

INDEPENDENT
REPORTING MECHANISM

ԱՆԿԱԽ ՀԱՇՎԵՏՎԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԻ :

ՀԱՅԱՍՏԱՆ

ՍԵՂՄԱԳԻՐ 2014-2015ԹԹ



EXECUTIVE SUMMARY	3
Սեղմագիր. Հայաստան	11
I Հայաստանի մասնակցությունը ԲԿԳ-ին	21
ԲԿԳ մասնակցության պատմությունը	21
Ինստիտուցիոնալ հիմնական կոնտեքստը	22
Մեթոդաբանական նշում	23
II Գործընթաց. Գործողությունների ծրագրի մշակում	25
Խորհրդակցությունների վերաբերյալ նախնական ծանուցումը և հանրային իրազեկումը	27
Խորհրդակցությունների խորությունն ու ընդգրկվածությունը	27
III Գործողությունների ծրագրի իրականացումը	31
ՀՀ կառավարությունը ԲԿԳ-ին վերաբերող միջոցառումներ կազմակերպել է միայն մայրաքաղաքում և չի օգտագործել մարզային ՀԿ-ների հետ հանդիպելու ՀԿ-ների ստեղծած հնարավորությունները: ԲՀԿ հանրության կողմից կազմակերպած միջոցառումներին կառավարության ներկայացուցիչների մասնակցության աստիճանը բավարար չէ:	31
Պարբերական, բազմակողմանի խորհրդակցություններ	31
IV Գործողությունների ծրագրի բովանդակության վերլուծություն	35
Պարտավորությունների ընդհանուր վերլուծությունը	39
Պարտավորությունները	40
1. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի կողմից հավաքագրված տվյալների թվայնացում և հրապարակում	40
2. Հանքարդյունաբերության թափանցիկության ապահովում	43
3. Առողջապահության ֆինանսավորման տեղեկատվության հանրային մատչելիության ապահովում	46





4. ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերի թափանցիկության ապահովում 49

5. Պետական գնումների բողոքարկման խորհրդի նիստերի առցանց հեռարձակում 53

6. Համայնքային միկրոհարցումներ 56

7. Պետական քաղաքականությունների և օրենսդրական բարեփոխումների թափանցիկություն 59

8. Պետական կառավարման մարմինների օրինաստեղծ գործունեության մասին հանրության իրազեկում 62

9. ՀՀ հանրակրթական պետական ուսումնական հաստատությունների կառավարման խորհուրդների ընտրության կարգում փոփոխությունների կատարում 65

10. Տեղեկատվության ազատության և հակակոռուպցիոն ոլորտում կարողությունների զարգացում 70

11. Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկություն 73

V | Ինքնագնահատման զեկույցի գործընթացը 77

VI | Երկրի առանձնահատկությունները 79

 VI.2: Շահառուների առաջնահերթությունները 81

 Գործողությունների ծրագրի շրջանակը երկրի առանձնահատկությունների համատեքստում 81

 Առաջարկություններ 83

VII | Ընդհանուր բնույթի առաջարկություններ 85

 VII.1: Խաչաձև առաջարկություններ 85

VIII | Մեթոդաբանությունը և աղբյուրները 87

IX | Ընտրության չափանիշների հավելված 91



EXECUTIVE SUMMARY

INDEPENDENT REPORTING MECHANISM (IRM): ARMENIA PROGRESS REPORT 2014-2015

Armenia has made progress in advancing access to information in government decision-making processes, including at the sub-national level. Further efforts are necessary to ensure a greater degree of commitment implementation through establishing a multi-stakeholder dialogue mechanism and ensuring autonomy from the current over-reliance on donor funding.

The Open Government Partnership (OGP) is a voluntary international initiative that aims to secure commitments from governments to their citizenry to promote transparency, empower citizens, fight corruption, and harness new technologies to strengthen governance.

Armenia began its formal participation in the OGP in October 2011. In January 2012, a working group was set up by an Armenian Prime Minister decree to draft the action plan.

As a result of a change in government, the newly appointed prime minister created a new OGP working group on 15 July 2014 chaired by the new deputy chief of the Staff of the Government. The working group originally included fifteen representatives of different public bodies and seven representatives from CSOs. The implementation of OGP commitments and preparation of self-evaluation reports is supervised by the OGP working group.

OGP PROCESS

Countries participating in the OGP follow a process for consultation during development of their OGP action plan and during implementation.

The second action plan preparation started in August 2013. On 23 March 2014, the Government announced the launch of the consultations on the second draft action plan. The action plan development process was briefly interrupted by the resignation of the government in April 2014, with proceedings resuming in July 2014.

The Government only organized online awareness-raising activities via www.gov.am and www.ogp.am. The government subsequently organized group and in person consultations. The draft of the second action plan was available online on www.ogp.am for the entire time of the consultations. In total seven face-to-face, invitation only meetings were organized by the government and CSOs during action plan development.

AT A GLANCE

MEMBER SINCE: 2011
NUMBER OF COMMITMENTS: 11

LEVEL OF COMPLETION

COMPLETED: 3 of 11
SUBSTANTIAL: 1 of 11
LIMITED: 6 of 11
NOT STARTED: 1 of 11

TIMING

ON SCHEDULE: 4 of 11

COMMITMENT EMPHASIS

ACCESS TO INFORMATION: 7 of 11
CIVIC PARTICIPATION: 4 of 11
PUBLIC ACCOUNTABILITY: 1 of 11
TECH & INNOVATION FOR TRANSPARENCY & ACCOUNTABILITY: 3 of 11

NUMBER OF COMMITMENTS THAT WERE:

CLEARLY RELEVANT TO AN OGP VALUE: 10 of 11
OF TRANSFORMATIVE POTENTIAL IMPACT: 0
SUBSTANTIALLY OR COMPLETELY IMPLEMENTED: 4 of 11

ALL THREE (★): 0

The second action plan changed substantially compared to the draft presented to OGP working group members in August 2013. Majority of commitments in the approved action plan were based on proposals received from CSOs. The second action plan was officially approved on July 31, 2014. The government did not organize any public events outside of the capital city. During the period covered by this report, the working group had one meeting related to implementation of commitments.

The Government published its midterm self-assessment report in September 2015.

COMMITMENT IMPLEMENTATION

As part of OGP participation, countries make commitments in a two-year action plan. The Armenia action plan contains eleven commitments. The following tables summarize for each commitment the level of completion, potential impact, whether it falls within Armenia's planned schedule and the key next steps for the commitment in future OGP action plans.

The IRM methodology includes starred commitments. These commitments are measurable, clearly relevant to OGP values as written, of transformative potential impact, and substantially or completely implemented. Armenia's action plan contains no starred commitments. Note that the IRM updated the star criteria in early 2015 in order to raise the bar for model OGP commitments. In addition to the criteria listed above, the old criteria included commitments that have moderate potential impact. Under the old criteria, Armenia would have received no starred commitments. See <http://www.opengovpartnership.org/node/5919> for more information.

Table 1 | Assessment of Progress by Commitment

COMMITMENT SHORT NAME	POTENTIAL IMPACT				LEVEL OF COMPLETION				TIMING
	NONE	MINOR	MODERATE	TRANSFORMATIVE	NOT STARTED	LIMITED	SUBSTANTIAL	COMPLETE	
1. Digitization and publication of data collected by the "Republican Geological Fund"									Behind Schedule
2. Ensure transparency in mining									Behind Schedule
3. Public awareness of health care financing									Behind Schedule
4. Asset and income declarations of high-ranking officials									On Schedule

COMMITMENT SHORT NAME	POTENTIAL IMPACT				LEVEL OF COMPLETION				TIMING
	NONE	MINOR	MODERATE	TRANSFORMATIVE	NOT STARTED	LIMITED	SUBSTANTIAL	COMPLETE	
5. Broadcasting State Procurement Appeals Board sessions									On Schedule
6. Community micro-surveys									Behind Schedule
7. State policies and legislative reforms									On Schedule
8. Public awareness on the law-making activity of state governance bodies									Behind Schedule
9. Transparency of secondary education institutions' Governing Boards elections and annual budget planning									On Schedule
10. Freedom of information and anti-corruption training									Behind Schedule
11. Transparency of local self-government bodies									Behind Schedule

Table 2 | Summary of Progress by Commitment

NAME OF COMMITMENT	SUMMARY OF RESULTS
<p>1. Digitization and publication of data collected by the “Republican Geological Fund”</p> <ul style="list-style-type: none"> • OGP value relevance: Clear • Potential impact: Moderate • Completion: Not started 	<p>This commitment aims to digitize the data stored at the Republican Geological Fund to become a publicly accessible repository of geological information, including mining rights, geological research, mineral maps as well as financial reports from the exploration of natural resources. No measures have been taken to implement this commitment, as the ministry is still negotiating with the USAID to get financial support for this project, which is why it has been evaluated as not started. If the commitment on making information accessible about mines and mineral resources is implemented, it will constitute a positive step and would have a moderate potential impact in the respective policy area. It is recommended that the government implement this commitment and provide details concerning the nature of information to be included on the repository.</p>
<p>2. Ensure transparency in mining</p> <ul style="list-style-type: none"> • OGP value relevance: Clear • Potential impact: Moderate • Completion: Limited 	<p>This commitment aims to enhance transparency in the extractive industries by joining the Extractive Industries Transparency Initiative (EITI). During the first session of the Anti-Corruption Council, the government proclaimed its readiness to join EITI. The government is negotiating with the USAID to get funding necessary for organization of the process. Low specificity of the commitment language has limited the potential impact of this otherwise highly important commitment. The IRM researcher recommends ensuring that meaningful discussions concerning the extractive sector take place through establishing a platform with representatives of CSOs and private sector. This could identify the issues necessary to make the industry more transparent and compliant to EITI requirements.</p>
<p>3. Public awareness of health care financing</p> <ul style="list-style-type: none"> • OGP Value Relevance: Clear • Potential Impact: Minor • Completion: Limited 	<p>The government committed to create a health financing website where the users can get information about government-guaranteed health services and healthcare financing. This commitment has a limited completion rate, as the web page on state-guaranteed services is still under construction. The utility of this website is unclear, as it is essentially a duplication of information that is already available on existing platforms, resulting in a minor potential impact. The government can improve the relevance of this commitment by making sure the non-confidential data from the reports is properly registered in its databases and made publicly available. Furthermore, it is important that this data be available for use by the public, including research professionals and academics. Usability of the website can be improved by increasing public awareness on the functional capabilities and by including the relevant data, such as information on types of disease and mortality, treatments and surgeries by region, by sex, by age, and so forth.</p>
<p>4. Asset and income declarations of high-ranking officials</p> <ul style="list-style-type: none"> • OGP Value Relevance: Clear • Potential Impact: Minor • Completion: Complete 	<p>The improvement of the system of declaring assets of high-ranking public officials has been designated a high priority by the government. The government committed to improve the asset declaration system within the framework of Good Governance and the Fight Against Corruption Project and within the framework of the EU Eastern Partnership initiative. On 19 February 2015, the government approved the regulation eliminating reduced the threshold for certain transactions to be reported by high-level government officials. The potential impact is minor, as the commitment fails to address the major concerns related to the powers of the Ethics Commission to verify the declarations or sanction non-compliance. The IRM researcher recommends providing the Ethics Commission with the mandate and the capacities to verify asset declarations and apply sanctions for noncompliance.</p>

NAME OF COMMITMENT	SUMMARY OF RESULTS
<p>5. Broadcasting State Procurement Appeals Board sessions</p> <ul style="list-style-type: none"> • OGP Value Relevance: Clear • Potential Impact: Minor • Completion: Complete 	<p>This commitment aims to make the Procurement Appeals Board decisions publicly accessible. Procurement Appeals Board sessions are being broadcast online via www.e-gov.am, beginning June 2015. Earlier sessions of the Board are also available on the website, resulting in this commitment being evaluated as complete. This commitment is a positive step in bringing integrity in public procurement but will only have minor potential impact. For the impact of this commitment to be significant, the government could study the consequences that online broadcasting has on the number of appeals and their outcomes. It will also be necessary for the government to take action to make public procurement more competitive and efficient.</p>
<p>6. Community micro-surveys</p> <ul style="list-style-type: none"> • OGP Value Relevance: Clear • Potential Impact: Minor • Completion: Limited 	<p>This commitment aims to improve communication between local communities and local self-governance bodies to ensure that locally made decisions are transparent. The first pilot project on community micro-surveys was carried out in five communities in different provinces where participation by means of SMS messages in local community decision-making was tested. Within the framework of the second action plan, micro-surveys had been carried out in an additional 4 communities in 2014. The MTAES website did not contain information concerning those surveys, resulting in limited completion. Civil society organizations suggest removing this commitment from the action plan, with a criticism levelled at the OGP relevance and likely potential impact of this commitment. The potential impact of the commitment is minor, given that it is not sufficiently ambitious and that the goals of the pilot project are not clear. The IRM researcher recommends assessing the sustainability and impact of such pilot projects on community management, as well as public service delivery on local level.</p>
<p>7. State policies and legislative reforms</p> <ul style="list-style-type: none"> • OGP Value Relevance: Clear • Potential Impact: Minor • Completion: Substantial 	<p>This commitment aims to promote public participation in policy developments by inclusion of CSOs in the consultative bodies of governmental agencies. The commitment is substantially completed. On 30 July 2015 the Ministry of Justice (MoJ) presented the draft sample regulation of the public council. The potential impact of this commitment as minor as similar efforts in the past did not result in major involvement of CSO community in policy formulation. If implemented, this commitment could demonstrate the government's willingness to facilitate meaningful public participation, which could motivate CSOs to improve cooperation with the government. The IRM researcher recommends that the government adopt the proposed regulation that aims to ensure participatory policy-making, and that the government implement it meaningfully.</p>
<p>8. Public awareness on the law-making activity of state governance bodies</p> <ul style="list-style-type: none"> • OGP Value Relevance: Clear • Potential Impact: Minor • Completion: Limited 	<p>The commitment aims to create an online forum for the publication of draft normative legal acts developed by the government agencies. The new website will allow multiple users to access the database of draft legislation and leave their comments and recommendations related to the draft legislation. The online forum for the publication of draft normative legal acts was not available by 1 July 2015, resulting in limited completion. The Ministry of Justice is negotiating with the World Bank to get support to create an online forum. The potential impact of this commitment is minor as a result of similar regulation not currently implemented. There is no guarantee that the online platform will solve the problem of enforcement of legislation, and the IRM researcher believes that the government can put more effort to create the online forum for draft normative acts envisaged by this commitment by setting clearly measurable milestones against an implementation timeline.</p>

NAME OF COMMITMENT	SUMMARY OF RESULTS
<p>9. Transparency of secondary education institutions' Governing Boards elections and annual budget planning</p> <ul style="list-style-type: none"> • OGP Value Relevance: Clear • Potential Impact: Minor • Completion: Complete 	<p>This commitment aims to increase transparency in the election of school boards as well as in the annual school budget planning process. The Ministry of Education and Science (MES) established a working group to guide the process implementing the commitment. As a result of discussions and consultation, the MES approved two regulations: the first regulation made an amendment to the formation of school councils, and the second regulation approved the procedure of planning the annual budget of schools and the presentation of the annual budget execution report. This commitment will have a minor potential impact as a result of the government past efforts to promote transparency of financial management of schools and improving the efficiency of school boards did not result in major improvement. The IRM researcher recommends that the government enforce timely and consistent implementation of existing transparency related legislation and that it also engages with sector specific CSOs working in education.</p>
<p>10. Freedom of information and anti-corruption training</p> <ul style="list-style-type: none"> • OGP Value Relevance: Unclear • Potential Impact: Minor • Completion: Limited 	<p>The commitment intends to provide training to civil servants on topics of freedom of information and the fight against corruption. The Ministry of Territorial Administration and Emergency Situations (MTAES) has trained 780 community servants, 510 community managers and members of community councils, and 75 staff members of regional administration. The impact of this commitment is likely to be minor. In the past, the government has implemented numerous training and capacity-building activities in different areas but has not assessed the impact of these activities on the quality of services delivered by public bodies. This commitment could have been more meaningful if accompanied by actions of strengthening freedom of information legislation or the fight against corruption. It is important that government monitor and evaluate the efficacy and impact of civil servants training, and that it adjust the training needs of its employees accordingly.</p>
<p>11. Transparency of local self-government bodies</p> <ul style="list-style-type: none"> • OGP Value Relevance: Clear • Potential Impact: Moderate • Completion: Limited 	<p>This commitment aims to provide greater access to information on public discussions and hearings of community councils by creating and updating of websites and online broadcasting of sessions in communities with populations larger than 20,000 citizens. At the time of writing of this report, most communities had not acquired the equipment necessary for online broadcasting and its implementation has suffered from the lack of financial resources. Out of seventeen communities, only four broadcast sessions of elders councils and out of the four, one community doesn't broadcast the sessions regularly. Currently, the government is negotiating with the Asian Development Bank to get the necessary assistance. Most Armenians are not aware of discussions, hearings, or sessions of the Community Elders' Council. It is recommended that the government speed up the implementation of this commitment by allocating the necessary resources.</p>

RECOMMENDATIONS

Armenia has included a raft of innovative commitments that seek to advance transparency in government decision making. This is evident in access to information commitments in the mining sector, public services financing in healthcare and education, as well as in commitments that seek to develop the necessary legal and policy frameworks to ensure civic participation and public accountability at the national and local government levels. There however remains a need to improve commitment implementation, specifically addressing challenges in accessing the necessary funding for implementation. Efforts should also be directed to monitor and evaluate commitment implementation, specifically concerning legislative and regulatory related commitments. Furthermore, there remains significant scope to improve the quality and degree of civic participation and public accountability in commitments. Based on the challenges and findings identified in this report, this section presents the principal recommendations.

TOP FIVE 'SMART' RECOMMENDATIONS

1. The government can promote OGP through a well-designed national public awareness campaign, including the use of print media, radio and television, and targeted at a wide range of civil society stakeholders and citizens.
2. To reach out to a broader base of regional CSOs, government could organize meetings and have an equal distribution of consultative sessions of the OGP working group across the country.
3. To ensure meaningful participation in the development and implementation of the action plan, the government should prepare and present a timetable of OGP events necessary to ensure the transparent and participatory development and implementation of the action plan.
4. The government may adopt more holistic approach by including commitments that are addressing more comprehensive reforms in areas such as public procurement and elections.
5. Ensure that commitments from each iteration of action plan are implemented within a specific time-frame to avoid excessive carry-over, or in certain cases, the loss of commitments as a result of non-implementation. In this regard the government should re-commit to fully implement the program budgeting commitment from the first action plan by 2018.

ELIGIBILITY REQUIREMENTS

To participate in OGP, governments must demonstrate commitment to open government by meeting minimum criteria on key dimensions of open government. Third-party indicators are used to determine country progress on each of the dimensions. For more information, see section IX: Eligibility Requirements at the end of this report or visit: <http://www.opengovpartnership.org/how-it-works/eligibility-criteria>.

Artak Kyurumyan is an independent researcher in Armenia.



OGP aims to secure concrete commitments from governments to promote transparency, empower citizens, fight corruption, and harness new technologies to strengthen governance. OGP's Independent Reporting Mechanism assesses development and implementation of national action plans in order to foster dialogue among stakeholders and improve accountability.

Անկախ հաշվետվական մեխանիզմի:

ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2014-2015թթ

Հայաստանն առաջընթաց է գրանցել իշխանության որոշումների վերաբերյալ տեղեկատվությունն ավելի հասանելի դարձնելու հարցում, ներառյալ՝ տեղական ինքնակառավարման մարմինների մակարդակում: Հետագա քայլեր են հարկավոր, որպեսզի բազմաթիվ շահառուների երկխոսության մեխանիզմների օգնությամբ երաշխավորվի պարտավորությունների կատարման ավելի բարձր մակարդակ և նվազեցվի դոնոր հանրությունից ներկա ֆինանսավորման չափազանց մեծ կախվածությունը:

Բաց կառավարության գործընկերությունը (այսուհետ՝ ԲԿԳ) կամավոր միջազգային նախաձեռնություն է, որի նպատակն է ապահովել կառավարությունների կողմից իրենց քաղաքացիների առջև թափանցիկության խթանումը, նրանց լիազորություններ տալու, կոռուպցիայի դեմ պայքարելու և կառավարման որակը բարելավելու նպատակով նոր տեխնոլոգիաների օգտագործման հետ կապված պարտավորությունների ստանձնումը:

Հայաստանի Հանրապետությունը ԲԿԳ-ին պաշտոնապես անդամակցում է 2011թ. հոկտեմբերից: ՀՀ վարչապետի որոշմամբ գործողությունների ծրագիրը մշակելու համար 2012թ. հունվարին ստեղծվել է աշխատանքային խումբ:

Կառավարության փոփոխության արդյունքում, նոր նշանակված վարչապետը 2014թ. հուլիսի 15-ին ստեղծել է աշխատանքային նոր խումբ, որի ղեկավար է նշանակվել ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի նոր տեղակալը: Աշխատանքային խումբը նախապես ներառել է տարբեր պետական մարմինների տասնհինգ և հասարակական կազմակերպությունների (այսուհետ՝ ՀԿ) յոթ ներկայացուցիչ: ԲԿԳ պարտավորությունների կատարումը և ինքնագնահատման զեկույցի պատրաստումն իրականացվել է ԲԿԳ աշխատանքային խմբի ղեկավարությամբ:

ԲԿԳ գործընթացը

ԲԿԳ գործողությունների ծրագրի մշակման և իրականացման ժամանակ նախաձեռնությանը միացած երկրները հետևում են խորհրդակցությունների որոշակի գործընթացի:

ԱՄՓՈՓ

Անդամակցություն՝ 2011Թ.
Պարտավորությունների քանակը՝ 11

Կատարման աստիճանը

Կատարված՝ 11-ից՝ 3-ը
Զգալի չափով՝ 11-ից՝ 1-ը
Սահմանափակ չափով՝ 11-ից՝ 6-ը
Չսկսված՝ 11-ից՝ 1-ը

Ժամկետայնությունը

Ժամանակին կատարված՝ 11-ից՝ 4-ը

Պարտավորությունների ուղղվածությունը

Տեղեկատվության հասանելիություն՝ 11-ից՝ 7-ը
Հանրային մասնակցություն՝ 11-ից՝ 4-ը
Հաշվետվողականություն՝ 11-ից՝ 1-ը
Տեխնոլոգիաները և նորարարությունը թափանցիկության և հաշվետվողականության համար՝ 11-ից՝ 3-ը

Պարտավորությունները, որոնք՝

Հստակ կերպով կապված են ԲԿԳ արժեքներից որևէ մեկի հետ՝ 11-ից՝ 10-ը
Հնարավոր տրանսֆորմատիվ ազդեցություն կարող են ունենալ՝ 11-ից՝ 0-ը
Լրից կամ զգալի չափով կատարված՝ 11-ից՝ 4-ը
Բոլոր երեքը (★)՝ 0

Երկրորդ գործողությունների ծրագրի մշակումը սկսվել է 2013թ. օգոստոսին: 2014թ. մարտի 23-ին կառավարությունը հայտարարել է երկրորդ գործողությունների ծրագրի մշակման խորհրդակցությունների գործընթացի սկիզբը: Գործողությունների ծրագրի մշակման գործընթացը, կառավարության հրաժարականով պայմանավորված, 2014թ. ապրիլին կարճ ժամանակով ընդհատվել է, ապա վերսկսվել հունիսին:

Հանրային իրազեկման միջոցառումներ կառավարությունը կազմակերպել է միայն www.gov.am և www.ogp.am կայքերի միջոցով: Կառավարությունը կազմակերպել է խմբային և անհատական քննարկումներ: Խորհրդակցությունների ամբողջ ընթացքում երկրորդ գործողությունների ծրագիրը հասու է եղել www.ogp.am կայքում: Գործողությունների ծրագրի մշակման ժամանակ ՀՀ կառավարությունը և ՀԿ-ներն ունեցել են յոթ հանդիպում, որոնց մասնակցելու համար հրավերներ են ուղարկվել շահառուներին:

Երկրորդ գործողությունների ծրագիրը 2013թ. օգոստոսին, ԲԿԳ աշխատանքային խմբի անդամներին ներկայացված նախագծի համեմատ, էական փոփոխությունների է ենթարկվել: Հաստատված գործողությունների ծրագրում ներառված պարտավորությունների մեծ մասը հիմնվել է ՀԿ-ներից ստացված առաջարկների վրա: ԲԿԳ շրջանակներում ՀՀ երկրորդ գործողությունների ծրագիրը պաշտոնապես հաստատվել է 2014թ. հուլիսի 31-ին: Կառավարությունը մայրաքաղաքից դուրս ԲԿԳ հետ կապված հանրային միջոցառումներ չի կազմակերպել: Այս հաշվետվության կողմից դիտարկվող ժամանակահատվածում աշխատանքային խումբը պարտավորությունների կատարման քննարկման հետ կապված ունեցել է մեկ հանդիպում:

ՀՀ կառավարությունը հրապարակել է իր միջանկյալ ինքնագնահատման զեկույցը 2015թ. սեպտեմբերին:

Պարտավորությունների կատարումը

ԲԿԳ-ին միացած երկրները պարտավորություններ են ստանձնում երկամյա գործողությունների ծրագրերով: Հայաստանի գործողությունների ծրագիրը ներառում է տասնմեկ պարտավորություն: Ստորև ներկայացվող աղյուսակներն ամփոփում են յուրաքանչյուր պարտավորության կատարման աստիճանը, հնարավոր ազդեցությունը, արդյո՞ք դրանք կատարվել են Հայաստանի կառավարության կողմից ծրագրված ժամանակացույցի համաձայն և ԲԿԳ հետագա գործողությունների ծրագրերում պարտավորության հետ կապված հետագա կարևոր քայլերը:

ԱՀՄ մեթոդաբանությունը ներառում է «աստղիկով» պարտավորություններ: Այս պարտավորությունները չափելի են, հստակ համապատասխանում են ԲԿԳ արժեքների ձևակերպված սահմանումներին, կարող են ունենալ տրանսֆորմատիվ ազդեցություն, զգալի չափով կամ ամբողջությամբ կատարված են: Հայաստանի գործողությունների ծրագիրը չի ներառում աստղիկով պարտավորություններ: Պետք է ուշադրություն դարձնել, որ օրինակելի պարտավորություններին ներկայացվող չափանիշները բարելավելու նպատակով 2015թ. սկզբին ԱՀՄ-ն վերանայել է աստղիկով պարտավորություններին ներկայացվող պահանջները: Ի լրումն վերը նշվածների, նախկինում գործող չափանիշների համաձայն, օրինակելի էին դիտարկվում նաև չափավոր հնարավոր ազդեցություն ունեցող պարտավորությունները: Նախկինում գործող չափանիշների դեպքում Հայաստանը չէր ունենա աստղիկով պարտավորություններ: Այս մասին ավելի շատ տեղեկատվություն կարելի է ստանալ <http://www.opengovpartnership.org/node/5919> կայքէջում:

Աղյուսակ 1 | Պարտավորությունների կատարման գծով առաջընթացը

Պարտավորության կարճ անվանումը	ՀՆԱՐԱԿՈՐ ԱՃԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ				ԿԱՏԱՐՄԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ				ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ
	Չունի	Փոքր	Չափավոր	Տրանսֆորմատիվ	Չսկսված	Սահմանփակ չափով կատարված	Զգալի չափով կատարված	Կատարված	
1. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի կողմից հավաքագրված տվյալների թվայնացում և հրապարակում									Ժամանակացույցից հետ է մնում
2. Հանքարդյունաբերության թափանցիկության ապահովում									Ժամանակացույցից հետ է մնում
3. Առողջապահության ֆինանսավորման տեղեկատվության հանրային մատչելիության ապահովում									Ժամանակացույցից հետ է մնում
4. ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերի թափանցիկության ապահովում									Համաձայն ժամանակացույցի
5. Պետական գնումների բողոքարկման խորհրդի նիստերի առցանց հեռարձակում									Համաձայն ժամանակացույցի
6. Համայնքային միկրոհարցումներ									Ժամանակացույցից հետ է մնում
7. Պետական քաղաքականությունների և օրենսդրական բարեփոխումների թափանցիկություն									Համաձայն ժամանակացույցի
8. Պետական կառավարման մարմինների օրինաստեղծ գործունեության մասին հանրության իրազեկում									Ժամանակացույցից հետ է մնում
9. ՀՀ հանրակրթական պետական ուսումնական հաստատությունների կառավարման խորհուրդների ընտրության կարգում փոփոխությունների կատարում									Համաձայն ժամանակացույցի
10. Տեղեկատվության ազատության և հակակոռուպցիոն ոլորտում կարողությունների զարգացում									Ժամանակացույցից հետ է մնում
11. Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկություն									Ժամանակացույցից հետ է մնում

Աղյուսակ 2 | Պարտավորությունների կատարման առաջընթացի ամփոփումը

Պարտավորության կարճ անվանումը	Ամփոփ արդյունքները
<p>1. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի կողմից հավաքագրված տվյալների թվայնացում և հրապարակում</p> <ul style="list-style-type: none"> • ԲԿԳ արժեքներին համապատասխանությունը՝ պարզ • Հնարավոր ազդեցությունը՝ չափավոր • Կատարման աստիճանը՝ չի սկսվել 	<p>Այս պարտավորությունը նպատակ է հետապնդում թվայնացնել «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ում (այսուհետ՝ ֆոնդ) առկա տվյալները, որպեսզի դրանք դառնան հանրությանը հասանելի երկրաբանական տեղեկատվական շտեմարան, որը տեղեկություններ է ներառում արդյունահանման իրավունքների, երկրաբանահետախուզական հետազոտությունների, հանքային նյութերի քարտեզի, ինչպես նաև բնական պաշարների արդյունահանման հետ կապված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Այս պարտավորության կատարման ուղղությամբ քայլեր չեն ձեռնարկվել, քանի որ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության հետ դեռևս բանակցում է այս ծրագրի իրականացման համար ֆինանսական աջակցություն ստանալու վերաբերյալ: Եթե հանքերի և բնական պաշարների վերաբերյալ պարտավորությունը կատարվի, ապա դա դրական քայլ կլինի և չափավոր դրական ազդեցություն կունենա պետական քաղաքականության համապատասխան ոլորտում: Կառավարությանն առաջարկվում է կատարել պարտավորությունը և տեղեկատվություն տրամադրել տվյալների շտեմարանում ներառվելիք տվյալների բնույթի վերաբերյալ:</p>
<p>2. Հանքարդյունաբերության թափանցիկության ապահովում</p> <ul style="list-style-type: none"> • ԲԿԳ արժեքներին համապատասխանությունը՝ պարզ • Հնարավոր ազդեցությունը՝ չափավոր • Կատարման աստիճանը՝ սահմանափակ չափով կատարված 	<p>Պարտավորության նպատակն է արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությունը (EITI/ԱՃԹՆ) միանալու ճանապարհով բարելավել հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկությունը: Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի անդրանիկ նիստի ժամանակ ՀՀ կառավարությունը հայտարարեց ԱՃԹՆ-ին միանալու պատրաստակամության մասին: ՀՀ կառավարությունը բանակցում է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության հետ գործընթացը կազմակերպելու համար ֆինանսավորում ձեռք բերելու նպատակով: Պարտավորության ձևակերպման կոնկրետության ցածր աստիճանը սահմանափակել է այլ պայմաններում այս խիստ կարևոր պարտավորության հնարավոր ազդեցությունը: ԱՀՄ հետազոտողն առաջարկում է ՀԿ-ների և մասնավոր հատվածի ներկայացուցիչների ներգրավմամբ հարթակ ստեղծելու ճանապարհով ապահովել հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ իմաստալից քննարկումների իրականացում, ինչը կարող է բացահայտել ոլորտի թափանցիկության ապահովման և ԱՃԹՆ պահանջների բավարարման հետ կապված խնդիրները:</p>
<p>3. Առողջապահության ֆինանսավորման տեղեկատվության հանրային մատչելիության ապահովում</p> <ul style="list-style-type: none"> • ԲԿԳ արժեքներին համապատասխանությունը՝ պարզ • Հնարավոր ազդեցությունը՝ փոքր • Կատարման աստիճանը՝ սահմանափակ չափով կատարված 	<p>Կառավարությունը առողջապահության ֆինանսավորման վերաբերյալ այնպիսի կայքէջ ստեղծելու պարտավորություն է ստանձնել, որը օգտվողներին տեղեկատվություն կտրամադրի անվճար առողջապահական ծառայությունների և առողջապահության ֆինանսավորման վերաբերյալ: Պարտավորությունը կատարվել է սահմանափակ չափով, քանի որ պետության կողմից երաշխավորված ծառայությունների վերաբերյալ ինտերնետային կայքը դեռևս կառուցման փուլում է: Կայքի օգտավետությունը պարզ չէ, քանի որ առկա տեղեկատվությունն, ըստ էության, կրկնում է գոյություն ունեցող հարթակներում առկա տեղեկատվությունը, ինչի արդյունքում հնարավոր ազդեցությունը գնահատվել է փոքր: Կառավարությունը կարող է բարելավել այս պարտավորության ԲԿԳ արժեքներին համապատասխանությունը՝ հաշվետվություններում առկա ոչ գաղտնի տեղեկատվությունը տվյալների շտեմարաններում գրանցելով և հանրությանը հասանելի դարձնելով: Ավելին, կարևոր է, որ այդ տվյալները հասանելի լինեն հանրությանը, ներառյալ՝ հետազոտողներին և գիտնականներին: Կարելի է բարելավել կայքի օգտակարությունը դրա ֆունկցիոնալ հնարավորությունների վերաբերյալ հանրային իրազեկման միջոցառումներ կազմակերպելով և ավելացնելով կարևոր նոր տեղեկատվություն, ինչպիսիք են հիվանդությունների տեսակներ և մահացության դեպքեր, ըստ առանձին տարածաշրջանների, սեռի, տարիքային խմբերի և այլ չափանիշների բուժում, վիրահատություն և այլն:</p>

Պարտավորության կարճ անվանումը	Ամփոփ արդյունքները
<p>4. ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերի թափանցիկության ապահովում</p> <ul style="list-style-type: none"> • ԲԿԳ արժեքներին համապատասխանությունը՝ պարզ • Հնարավոր ազդեցությունը՝ փոքր • Կատարման աստիճանը՝ կատարված 	<p>Բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման համակարգի բարելավումը ՀՀ կառավարության առաջնահերթությունների թվում է: Կառավարությունը պարտավորվել է բարելավել հայտարարագրերի համակարգը Արևելյան գործընկերության և Եվրոպական խորհրդի աջակցությամբ իրականացվող «Լավ կառավարում և կոռուպցիայի դեմ պայքար» ծրագրի շրջանակներում:</p> <p>2015թ. փետրվարի 19-ին կառավարությունը հաստատել է բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից հայտարարագրման ենթակա որոշ գործարքների համար սահմանված շեմերը հանելու վերաբերյալ որոշում: Հնարավոր ազդեցությունը գնահատվել է փոքր, քանի որ պարտավորությունը չի անդրադառնում էթիկայի հանձնաժողովին ներկայացված հայտարարագրերում ներկայացված տեղեկատվության իսկությունը ստուգելու և խախտումների դեպքում սանկցիաներ կիրառելու հանձնաժողովի լիազորության խնդրին:</p> <p>ԱՀՄ հետազոտողն առաջարկում է ընդլայնել Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի լիազորությունները՝ նրան տալով հայտարարագրերում առկա տեղեկատվության արժանահավատությունը ստուգելու և հայտարարագրի չներկայացնող, սխալ կամ ոչ լիարժեք տեղեկատվություն ներկայացնող պետական պաշտոնյաների նկատմամբ պատիժներ կիրառելու լիազորություն:</p>
<p>5. Պետական գնումների բողոքարկման խորհրդի նիստերի առցանց հեռարձակում</p> <ul style="list-style-type: none"> • ԲԿԳ արժեքներին համապատասխանությունը՝ պարզ • Հնարավոր ազդեցությունը՝ փոքր • Կատարման աստիճանը՝ կատարված 	<p>Այս պարտավորության նպատակը պետական գնումների բողոքարկման խորհրդի որոշումները հանրության համար հասանելի դարձնելն է: Գնումների բողոքարկման խորհրդի նիստերը 2015թ. հունիսից ի վեր հեռարձակվում են www.e-gov.am կայքի միջոցով: Նախկինում կայացած խորհրդի նիստերի ձայնագրությունները նույնպես հասու են ինտերնետային կայքում, ինչի արդյունքում այս պարտավորությունը գնահատվել է որպես կատարված: Պարտավորության կատարումը դրական քայլ է պետական գնումների հանդեպ հանրային վստահության բարելավման տեսակետից, սակայն միայն փոքր ազդեցություն կունենա: Որպեսզի այս պարտավորության ազդեցությունը լինի զգալի, կառավարությունը կարող է ուսումնասիրել, թե առցանց հեռարձակումն ինչ ազդեցություն է ունեցել բողոքարկումների քանակի և դրանց արդյունքների վրա: Անհրաժեշտ է նաև, որպեսզի կառավարությունը միջոցներ ձեռնարկի պետական գնումներն ավելի մրցակցային և արդյունավետ դարձնելու ուղղությամբ:</p>
<p>6. Համայնքային միկրոհարցումներ</p> <ul style="list-style-type: none"> • ԲԿԳ արժեքներին համապատասխանությունը՝ պարզ • Հնարավոր ազդեցությունը՝ փոքր • Կատարման աստիճանը՝ սահմանափակ չափով կատարված 	<p>Այս պարտավորության նպատակն է բարելավել համայնքների բնակիչների և տեղական ինքնակառավարման մարմինների միջև կապը և օգնել տեղերում կայացված որոշումները դարձնել ավելի թափանցիկ: Համայնքային միկրոհարցումների առաջին պիլոտային ծրագիրն իրականացվել է տարբեր մարզերի հինգ համայնքում, որտեղ փորձարկվել են SMS հաղորդագրությունների միջոցով տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների կայացմանը հանրության մասնակցությունը: ԲԿԳ շրջանակներում Հայաստանի երկրորդ գործողությունների ծրագրի շրջանակներում 2014թ. միկրոհարցումներ են իրականացվել ևս 4 համայնքում: ՀԿ-ներն առաջարկել են այս պարտավորությունը հանել գործողությունների ծրագրից՝ կասկածի տակ դնելով ԲԿԳ արժեքներին դրա համապատասխանությունը և հնարավոր ազդեցությունը: Այս պարտավորության հնարավոր ազդեցությունը փոքր է, քանի որ այն բավարար հավակնոտ չէ և փորձնական ծրագրի նպատակները պարզ չեն: ԱՀՄ հետազոտողն առաջարկում է գնահատել համայնքների ղեկավարման, ինչպես նաև տեղերում մատուցվող հանրային ծառայությունների կայունության վրա այսպիսի փորձնական ծրագրերի ազդեցությունը:</p>

Պարտավորության կարճ անվանումը	Ամփոփ արդյունքները
<p>7. Պետական քաղաքականությունների և օրենսդրական բարեփոխումների թափանցիկություն</p> <ul style="list-style-type: none"> • ԲԿԳ արժեքներին համապատասխանությունը՝ պարզ • Հնարավոր ազդեցությունը՝ փոքր • Կատարման աստիճանը՝ զգալի չափով կատարված 	<p>Այս պարտավորությունը նպատակ է հետապնդում պետական մարմինների խորհուրդների աշխատանքներում ՀԿ-ների ներգրավման ճանապարհով խթանել հանրային մասնակցությունը: Պարտավորությունը զգալի չափով կատարված է: 2015թ. հուլիսի 30-ին արդարադատության նախարարությունը ներկայացրել է հանրային խորհուրդների վերաբերյալ փաստաթղթի նախագիծը:</p> <p>Այս պարտավորության հնարավոր ազդեցությունը դիտարկվել է փոքր, քանի որ նախկինում գործադրված համանման ջանքերը պետական քաղաքականությունների մշակման գործընթացում ՀԿ հանրության զգալի ներգրավվածության չեն հանգեցրել: Ներդրվելու դեպքում, այս պարտավորությունը ցույց կտա հանրային մասնակցությունը խթանելու կառավարության պատրաստակամությունը, ինչը կարող է քաջալերել ՀԿ-ներին բարելավել կառավարության հետ համագործակցությունը: ԱՀՄ հետազոտողն առաջարկում է հաստատել մասնակցային գործընթացը երաշխավորող փաստաթուղթ և արդյունավետորեն ներդնել այն:</p>
<p>8. Պետական կառավարման մարմինների օրինաստեղծ գործունեության մասին հանրության իրազեկում</p> <ul style="list-style-type: none"> • ԲԿԳ արժեքներին համապատասխանությունը՝ պարզ • Հնարավոր ազդեցությունը՝ փոքր • Կատարման աստիճանը՝ սահմանափակ չափով կատարված 	<p>Պարտավորության նպատակն է ստեղծել պետական մարմինների կողմից մշակվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հրապարակման առցանց հարթակ: Նոր կայքէջը օգտվողներին հնարավորություն կտա միաժամանակ ծանոթանալ շտեմարանում առկա նախագծերին և ներկայացնել դրանց վերաբերյալ իրենց մեկնաբանություններն ու առաջարկությունները: Օրենսդրական նորմատիվ ակտերի նախագծերի հրապարակման առցանց հարթակն առկա չէր 2015թ. հուլիսի 1-ին, ինչի արդյունքում պարտավորությունը դիտարկվել է որպես սահմանափակ չափով կատարված: ՀՀ արդարադատության նախարարությունը Համաշխարհային բանկի հետ բանակցում է առցանց հարթակի ստեղծման նպատակով օժանդակություն ստանալու հարցով:</p> <p>Այս պարտավորության հնարավոր ազդեցությունը փոքր է, քանի որ ներկայումս գործող համանման օրենսդրությունը չի կիրառվում: Երաշխիք չկա, որ առցանց հարթակը կլուծի օրենսդրության կիրարկման հետ կապված խնդիրը: ԱՀՄ հետազոտողը կարծում է, որ ՀՀ կառավարությունը կարող է ավելի մեծ ջանքեր գործադրել այս պարտավորությունով նախատեսված նորմատիվ իրավական ակտերի նախագծերի քննարկման առցանց հարթակն ստեղծելու ուղղությամբ՝ սահմանելով պարտավորության կատարման ժամանակացույցին համապատասխան հստակ չափելի փուլեր:</p>
<p>9. ՀՀ հանրակրթական պետական ուսումնական հաստատությունների կառավարման խորհուրդների ընտրության կարգում փոփոխությունների կատարում</p> <ul style="list-style-type: none"> • ԲԿԳ արժեքներին համապատասխանությունը՝ պարզ • Հնարավոր ազդեցությունը՝ փոքր • Կատարման աստիճանը՝ կատարված 	<p>Այս պարտավորությունը նպատակ ունի բարելավել դպրոցների կառավարման խորհուրդների ընտրության թափանցիկությունը և դպրոցների բյուջեների պլանավորման գործընթացը: Պարտավորության կատարումն ապահովելու համար ՀՀ կրթության և գիտության նախարարությունն աշխատանքային խումբ է ձևավորել: Քննարկումների և խորհրդակցությունների արդյունքում ՀՀ կրթության և գիտության նախարարությունը հաստատել է երկու փաստաթուղթ: Առաջինով փոփոխություններ են կատարվել դպրոցների կառավարման խորհուրդների ձևավորման կարգում: Երկրորդ փաստաթղթով հաստատվել է դպրոցի տարեկան բյուջեի ծրագրավորման և տարեկան բյուջեի կատարման հաշվետվության ներկայացման կարգը: Այս պարտավորության կատարումը փոքր ազդեցություն կունենա, քանի որ դպրոցների ֆինանսական կառավարման թափանցիկությանը և դպրոցների կառավարման խորհուրդների գործունեության արդյունավետության բարելավմանը նպատակաուղղված ՀՀ կառավարության նախորդ համանման փորձերը զգալի բարելավման չեն հանգեցրել: ԱՀՄ հետազոտողը կառավարությանն առաջարկում է ժամանակին և հետևողական կերպով կիրարկել թափանցիկությունը կարգավորող ներկա օրենսդրությունը և կրթության հետ առնչվող հարցերը քննարկել ու համագործակցել ոլորտում գործունեություն ծավալող ՀԿ-ների հետ:</p>

Պարտավորության կարճ անվանումը	Ամփոփ արդյունքները
<p>10. Տեղեկատվության ազատության և հակակոռուպցիոն ոլորտում կարողությունների զարգացում</p> <ul style="list-style-type: none"> • ԲԿԳ արժեքներին համապատասխանությունը՝ պարզ չէ • Հնարավոր ազդեցությունը՝ փոքր • Կատարման աստիճանը՝ սահմանափակ չափով կատարված 	<p>Պարտավորության նպատակն է տեղեկատվության ազատության և կոռուպցիայի դեմ պայքարի թեմայով ուսուցում կազմակերպել հանրային ծառայողների համար: ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունն ապահովել է 780 համայնքային ծառայողների, 510 համայնքի ղեկավարների և համայնքի ավագանու անդամների, ինչպես նաև մարզպետարանների 75 աշխատակիցների ուսուցում: Այս պարտավորության կատարման հնարավոր ազդեցությունը հավանաբար փոքր կլինի: Նախկինում կառավարությունը բազմաթիվ դասընթացներ և կարողությունների զարգացման միջոցառումներ է կազմակերպել տարբեր ոլորտներում, սակայն չի գնահատել այդ միջոցառումների ազդեցությունը պետական մարմինների կողմից մատուցվող ծառայությունների որակի վրա: Այս պարտավորությունն ավելի իմաստավոր կլիներ, եթե ուղեկցվեր տեղեկատվության ազատության օրենսդրության կատարելագործմամբ կամ կոռուպցիայի դեմ պայքարի հզորացմամբ: Կարևոր է, որպեսզի կառավարությունը մշտադիտարկի և գնահատի հանրային ծառայողների ուսուցման արդյունավետությունն ու ազդեցությունը և համապատասխան շտկումներ կատարի ուսուցման կարիքներում:</p>
<p>11. Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկություն</p> <ul style="list-style-type: none"> • ԲԿԳ արժեքներին համապատասխանությունը՝ պարզ • Հնարավոր ազդեցությունը՝ չափավոր • Կատարման աստիճանը՝ սահմանափակ չափով կատարված 	<p>Այս պարտավորության նպատակն է ինտերնետային կայքեր ստեղծելու և թարմացնելու, ինչպես նաև համայնքների ավագանիների նիստերն առցանց հեռարձակելու ճանապարհով 20.000-ից ավելի բնակչություն ունեցող համայնքների ավագանիների նիստերում ընթացող հանրային քննարկումներն ու լսումները հասանելի դարձնել հանրության համար: Այս հաշվետվությունը գրելու պահին համայնքների մեծ մասը ձեռք չէր բերել առցանց հեռարձակման համար անհրաժեշտ սարքավորում և պարտավորության ոչ լիարժեք կատարումը կրում է անբավարար ֆինանսական միջոցների կնիքը: Տասնյոթ համայնքներից միայն չորսն է հեռարձակում ավագանիների նիստերը, որոնցից մեկը՝ ոչ պարբերաբար: Ներկայումս ՀՀ կառավարությունը պարտավորության կատարման համար անհրաժեշտ ֆինանսական օժանդակություն ստանալու հնարավորության շուրջ բանակցում է Ասիական զարգացման բանկի հետ: Հայ հանրության մեծամասնությունը տեղյակ չէ համայնքների ավագանիների նիստերի ժամանակ ընթացող քննարկումներից և լսումներից: Կառավարությանն առաջարկվում է արագացնել այս պարտավորության կատարման գործընթացը՝ դրա համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ հատկացնելով:</p>

Առաջարկություններ

Հայաստանը մի շարք նորարարական պարտավորություններ է ներառել իր գործողությունների ծրագրում, որոնք նպատակ ունեն խթանել իշխանությունների որոշումների կայացման գործընթացի թափանցիկությունը: Սա ակնհայտ է հանքարդյունաբերության, առողջապահության և կրթության ոլորտներում հանրային ծառայությունների ֆինանսավորման, ինչպես նաև հանրապետական կառավարման և տեղական ինքնակառավարման մակարդակներում հանրային մասնակցության և հաշվետվողականության համար անհրաժեշտ իրավական և քաղաքական շրջանակի մշակում նախատեսող պարտավորություններից: Սակայն դեռևս անհրաժեշտ է բարելավել պարտավորությունների կատարումը, մասնավորապես անդրադառնալով պարտավորությունների կատարման ֆինանսավորման հետ կապված մարտահրավերներին: Զանքեր է պետք գործադրել նաև պարտավորությունների կատարումը մշտադիտարկելու և գնահատելու ուղղությամբ, մասնավորապես որոնք վերաբերում են օրենսդրությանը և կանոնակարգմանը: Ավելին, հանրային մասնակցությանը և հաշվետվողականությանը վերաբերող պարտավորությունների կատարման որակը և աստիճանը բարելավելու մեծ հնարավորություններ կան: Հաշվետվությունում բացահայտված փաստերի և մարտահրավերների հիման վրա, այս բաժինը ներկայացնում է հիմնական առաջարկությունները:

Գլխավոր հինգ SMART առաջարկությունը

1. ՀՀ կառավարությունը կարող է առաջ մղել ԲԿԳ-ն՝ քաղաքացիական հասարակության լայն շրջանակին ու քաղաքացիներին ուղղված լավ մշակված հանրային իրազեկման ծրագրի միջոցով՝ օգտագործելով նաև տպագիր մամուլի, ռադիոյի և հեռուստատեսության հնարավորությունները:
2. Մայրաքաղաքից դուրս գործող ՀԿ-ներին ներգրավելու նպատակով ՀՀ կառավարությունը կարող է հանդիպումներ կազմակերպել և ԲԿԳ աշխատանքային խմբի նիստերը հավասարապես անցկացնել երկրի տարբեր տարածաշրջաններում:
3. Գործողությունների ծրագրի մշակմանը և իրականացմանն իմաստալից մասնակցություն ապահովելու համար ՀՀ կառավարությունը պետք պատրաստի և ներկայացնի ԲԿԳ միջոցառումների ժամանակացույց, որպեսզի երաշխավորի գործողությունների ծրագրի մշակման և իրականացման թափանցիկ և մասնակցային գործընթաց:
4. ՀՀ կառավարությունը կարող է ավելի համապարփակ մոտեցում հանդես բերել՝ այնպիսի պարտավորություններ ներառելով, որոնք անդրադառնում են ավելի ընդգրկուն բարեփոխումների այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են, օրինակ, պետական գնումները և ընտրությունները:
5. Երաշխավորի, որ գործողությունների ծրագրերում ներառված պարտավորություններն իրականացվեն կոնկրետ ժամանակահատվածում, երկարաձգումներից, իսկ որոշ դեպքերում նաև պարտավորության չկատարման հետևանքով դրա «կորստից» խուսափելու համար: Այդ իմաստով կառավարությունը պետք է վերահաստատի առաջին գործողությունների ծրագրում ներառված մինչև 2018 թվականը ծրագրային բյուջետավորման համակարգ ներդնելու պարտավորությունը:

ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԶԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Ընտրության չափանիշները: ԲԿԳ-ին անդամակցելու համար կառավարությունները պետք է հավատարմություն ցուցաբերեն բաց կառավարության սկզբունքների նկատմամբ՝ բավարարելով բաց կառավարության չափորոշիչների նվազագույն պահանջները: Յուրաքանչյուր ոլորտում երկրի զարգացումը գնահատելու համար օգտագործվել են երրորդ տարբեր կողմերի ցուցանիշներ: Լրացուցիչ տեղեկատվությունների համար, տես ընտրության չափանիշների վերաբերյալ այս հաշվետվության բաժին IX, կամ այցելեք <http://www.opengovpartnership.org/how-it-works/eligibility-criteria> կայքէջ:

Արտակ Բյուրոյանն անկախ փորձագետն է Հայաստանում:



Բաց կառավարության գործընկերությունը նպատակ է հետապնդում նախաձեռնությանը

միացած երկրների կառավարությունների կողմից թափանցիկությանը, հանրային մասնակցությանը, կոռուպցիայի դեմ պայքարին և կառավարումը բարելավելու նպատակով նոր տեխնոլոգիաներն օգտագործելու նպատակով կոնկրետ պարտավորություններ ապահովել: Շահառուների միջև երկխոսությունը խթանելու և հաշվետվողականությունը բարելավելու նպատակով ԲԿԳ անկախ հաշվետվական մեխանիզմը (ԱՀՄ) գնահատում է ազգային գործողությունների ծրագրերի մշակման և իրականացման գործընթացը

I | Հայաստանի մասնակցությունը ԲԿԳ-ին

ԲԿԳ մասնակցության պատմությունը

Բաց կառավարության գործընկերությունը (այսուհետ՝ ԲԿԳ) կամավորության վրա հիմնված բազմաթիվ շահառուների միջազգային նախաձեռնություն է, որի նպատակը կառավարությունների կողմից այնպիսի պարտավորությունների ստանձնումն է, որոնց իրականացումը կապահովի քաղաքացիների առջև կառավարության գործունեության թափանցիկության բարելավում, կընդլայնի քաղաքացիների լիազորությունները, կխթանի պայքարը կոռուպցիայի դեմ, ինչպես նաև նոր տեխնոլոգիաները կօգտագործվեն ի նպաստ կառավարման որակի բարելավման: Այս նպատակներին հասնելու համար ԲԿԳ-ն երկխոսության և փորձի փոխանակման միջազգային հարթակ է ապահովում կառավարությունների, քաղաքացիական հասարակության կառույցների (այսուհետ՝ ՔՀԿ) և մասնավոր հատվածի ներկայացուցիչների համար, որոնք բոլորը հետամուտ են բաց կառավարության ընդհանուր նպատակին: ԲԿԳ շահառուները նախաձեռնությանը միացած կառավարություններն են, ինչպես նաև քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի այն ներկայացուցիչները, որոնք աջակցում են ԲԿԳ սկզբունքներին ու առաքելությանը:

ԲԿԳ նախաձեռնությանը միանալու համար կառավարությունները պետք է նվիրվածություն ցուցաբերեն բաց կառավարման գաղափարներին՝ բավարարելով, բաց կառավարության սկզբունքների առանցքային այնպիսի ցուցանիշների որոշակի նվազագույն պահանջներ, որոնք առավել կարևոր նշանակություն ունեն կառավարության արձագանքելու պատրաստակամությունը բարելավելու, կառավարմանը քաղաքացիների ներգրավվածությունը և կոռուպցիայի դեմ պայքարը բնութագրելու առումով: Ինչպես նշվում է այս հաշվետվության IX բաժնում (Ընտրության պահանջները) այլ կազմակերպությունների կողմից գնահատվող ցուցանիշներն օգտագործվում են

յուրաքանչյուր ուղղությամբ երկրի առաջընթացը գնահատելու համար: Տես Բաժին IX՝ Ընտրության պահանջների մանրամասների համար:

ԲԿԳ-ին միացած բոլոր կառավարությունները մշակում են ԲԿԳ գործողությունների ծրագրեր, որոնք կոնկրետ պարտավորություններ են պարունակում առաջիկա երկու տարվա համար: Գործողությունների ծրագրերը պետք է ներկայացնեն ԲԿԳ շրջանակներում կառավարության պարտավորությունները, որոնք ներկա իրավիճակի համեմատ կառավարության գործունեության առաջընթաց են նախատեսում: Այս պարտավորությունները կարող են հիմնված լինել ինչպես ընթացքի մեջ գտնվող ջանքերի վրա, այնպես էլ ներկայացնեն իրականացվող բարեփոխումներին նպաստող նոր քայլեր կամ գործողություններ նախատեսեն բոլորովին նոր ոլորտներում:

ՀՀ կառավարությունը ԲԿԳ-ին պաշտոնապես միացել է 2011թ. հոկտեմբերին: 2012թ. հունվարին ՀՀ վարչապետի որոշմամբ ԲԿԳ շրջանակներում ՀՀ մասնակցության գործողությունների ծրագրի նախագիծը մշակելու համար ստեղծվել է աշխատանքային խումբ¹: ԲԿԳ գործողությունների առաջին ծրագրով ստանձնած պարտավորությունների կատարումը և ինքնագնահատման զեկույցի պատրաստումն իրականացվել է ՀՀ վարչապետի կողմից ստեղծված աշխատանքային խմբի կողմից²: Հայաստանը իր առաջին գործողությունների ծրագիրը մշակել և իրականացրել է 2012թ. ապրիլից 2013թ. դեկտեմբերն ընկած ժամանակահատվածում: Գործողությունների այդ ծրագիրը ներառում էր հավակնոտ պարտավորություններ, որոնք ՔՀԿ ներկայացուցիչները կարևոր էին համարում (օրինակ՝ պետական գնումների, բարձրաստիճան պետական պաշտոնյաների գույքի և եկամուտների հայտարարագրերի, կոռուպցիայի դեմ պայքարի, պաշտոնական ինտերնետային կայքերի ստանդարտացման հետ կապված և այլ պարտավորություններ): ՔՀԿ հանրությունը

բավարարված չէր այս պարտավորությունների կատարման ընթացքով: Հայաստանյան քաղաքացիական հասարակության բազմաթիվ անդամներ հետաքրքրված են ԲԿԳ-ով և կարծում են, որ որպեսզի ԲԿԳ գործընթացը դառնա ավելի վստահելի և կայուն, անհրաժեշտ է իրականացնել ԲԿԳ գործողությունների նախորդ ծրագրի ազդեցության գնահատում:

Գործողությունների երկրորդ ծրագրի նախապատրաստությունն սկսվել էր դեռ 2013թ. օգոստոսին և շարունակվել մինչև 2014թ. հուլիս, կառավարության հրաժարականով պայմանավորված կարճ ժամանակով ընդհատվելով 2014ի ապրիլին: ԲԿԳ նախաձեռնության շրջանակներում ՀՀ երկրորդ գործողությունների ծրագիրը պաշտոնապես հավանության է արժանացել³ ՀՀ կառավարության 2014թ. հուլիսի 31-ի նիստի արձանագրությամբ⁴: Հետագայում ՀՀ կառավարությունը փոփոխություններ է կատարել երկրորդ գործողությունների ծրագրում: Դրանք հիմնականում պայմանավորված էին կառավարության կառուցվածքի և կոնկրետ պարտավորությունների իրականացման համար պատասխանատու կառույցների գերատեսչական ենթակայության փոփոխությամբ: Փոփոխությունները չեն քննարկվել ԲԿԳ աշխատանքային խմբի կողմից:

ՀՀ կառավարությունն իր ինքնագնահատման միջանկյալ զեկույցը հրապարակել է 2015թ. սեպտեմբերին, որն անդրադառնում է մինչ այդ ազգային գործողությունների ծրագրի մշակման և իրականացման առաջընթացին: Անկախ հաշվետվական մեխանիզմի (այսուհետ՝ ԱՀՄ) հաշվետվությունը նպատակ ունի գնահատել ՀՀ երկրորդ գործողությունների ծրագրի մշակման և իրականացման ընթացքը և բաց կառավարության սկզբունքների իրականացման ուղղությամբ երկրի առաջընթացը:

ԲԿԳ պահանջներին համապատասխան, ԱՀՄ-ն կատարել է Հայաստանի երկրորդ գործողությունների ծրագրի մշակման և իրականացման գործընթացի գնահատում: Այս հաշվետվությունն անդրադառնում է 2014թ. հուլիսին գործողությունների ծրագրի ընդունումից մինչև 2015թ. հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածին:

Ինստիտուցիոնալ հիմնական կոնտեքստը

Հայաստանն ունիտար պետություն է: Հանրապետության Նախագահը պետության ղեկավարն է⁵: ՀՀ նախագահի 2015թ. հոկտեմբերի 8-ի հրամանագրով 2015թ. դեկտեմբերի 6-ին Սահմանադրական փոփոխությունների հանրաքվե է նշանակվել⁶, որի արդյունքում Հայաստանը կդառնա խորհրդարանական Հանրապետություն: ԲԿԳ հետ կապված աշխատանքները համակարգվում են գործադիր իշխանության կողմից՝ ներկայացված ՀՀ կառավարության աշխատակազմի միջոցով, առանց պետական իշխանության մյուս ճյուղերի ներգրավվածության:

2014թ. ապրիլի սկզբին ՀՀ կառավարությունը հրաժարական ներկայացրեց⁷: Նոր նշանակված վարչապետը⁸ 2014թ.-ի հուլիսի 15-ին նոր աշխատանքային խումբ ստեղծեց⁹, որի գործունեության համակարգման պատասխանատվությունը դրվեց ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար – նախարարի առաջին տեղակալի վրա: Այս աշխատանքային խումբն սկզբից կազմված է եղել պետական տարբեր մարմինների 15 և քաղաքացիական հասարակության 7 ներկայացուցիչներից: ԲԿԳ աշխատանքային խմբում կառավարությունն ընդգրկել էր քաղաքացիական հասարակության այն կառույցների ներկայացուցիչներին, որոնք համեմատաբար ակտիվ էին գործողությունների երկրորդ ծրագրի մշակման ընթացքում կամ ցանկանում էին միանալ աշխատանքային խմբին: Աշխատանքային խումբը բաց է ՀԿ-ների համար և կազմակերպությունների մասնագիտական ուղղվածության հետ կապված սահմանափակումներ գոյություն չունեն: Կառավարությունը չի սահմանափակում ներգրավված ՀԿ-ների թիվը: Մինչև այժմ, ցանկացած ՀԿ որը դիմել է աշխատանքային խմբում ընդգրկվելու խնդրանքով, ներգրավվել է գործընթացում:

Կազմակերպական հարցերում ԲԿԳ աշխատանքային խումբն աջակցություն է ստանում ՀՀ կառավարության աշխատակազմից: ԲԿԳ գործողությունների ժամանակացույցի համաձայն պետական մարմինների և քաղաքացիական

հասարակության ներկայացուցիչները պետք է 2014թ. հունվարին խորհրդակցություններ սկսեին և մինչև ապրիլ կամ վերանայեին առաջին գործողությունների ծրագիրը կամ մշակեին գործողությունների նոր ծրագիր: 2014թ. հունիսի սկզբին ՀՀ կառավարությունը դիմեց ԲԿԳ աջակցության կառույցին՝ ԲԿԳ շրջանակներում Հայաստանի երկրորդ գործողությունների ծրագրի ներկայացման վերջնաժամկետը երկարացնելու խնդրանքով:

Երբ «Լրագրողներ հանուն ապագայի» ՀԿ-ն դիմել է կառավարության աշխատակազմին իր ներկայացուցչին ԲԿԳ աշխատանքային խմբում ընդգրկելու խնդրանքով, կառավարության աշխատակազմը պատասխանել է¹⁰, որ ԲԿԳ աշխատանքային խումբն արդեն իսկ ձևավորվել է, սակայն կառավարությունը պատրաստ է ԲԿԳ շրջանակներում համագործակցել «Լրագրողներ հանուն ապագայի» ՀԿ-ի հետ: 2015թ. մայիսին ՀՀ վարչապետը փոփոխություններ է կատարել ԲԿԳ աշխատանքային խմբի կառուցվածքում¹¹,¹² փոխարինելով պետական որոշ պաշտոնյաների և նշանակելով նոր անդամներ, այդ թվում՝ «Լրագրողներ հանուն ապագայի» ՀԿ-ի ներկայացուցչին: Այս փոփոխությունների արդյունքում ԲԿԳ աշխատանքային խումբն այժմ բաղկացած է կառավարության 16 և ՀԿ 8 ներկայացուցիչներից:

ԲԿԳ աշխատանքային խմբում ներկայացված ՀԿ-ները՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» (www.foi.am), «Թրանսպարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնը» (www.transparency.am), Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը (www.asparez.am), «Արազ» բարեգործական կազմակերպությունը (www.arazango.jimdo.com), «Վորլդ Վիժն Հայաստանը» (www.wvarmenia.am), «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» (www.prwb.am), «Երիտասարդ իրավաբանների հայկական ասոցիացիան» (www.ayla.am) և «Լրագրողներ հանուն ապագայի» (www.jnews.am) հարգանք են վայելում և ճանաչում ունեն ԲՀԿ հանրության շրջանում կոռուպցիայի դեմ պայքարի, տեղեկատվության ազատության, հեռավոր համայնքներում իրենց բարեգործական նախաձեռնություններով և այլ միջոցառումներով:

Բացի ԲԿԳ անդամակցության համար վճարած 25 հազար ԱՄՆ դոլարը կառավարությունը բյուջետային

այլ միջոցներ չի նախատեսել ԲԿԳ համար¹³: Որոշ ծրագրեր կամ ներդրվում են դոնոր հանրության ֆինանսական աջակցությամբ (ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն, Համաշխարհային բանկ, Ասիական զարգացման բանկ) կամ ՀՀ կառավարությունը դոնորների հետ բանակցում է միջոցներ ստանալու շուրջ:

Մեթոդաբանական նշում

ԲԿԳ-ին անդամակցած յուրաքանչյուր երկրի կառավարության գործողությունների ծրագրի ուսումնասիրության, հաշվետվության պատրաստման և տարածման համար անկախ հաշվետվական մեխանիզմը (այսուհետ՝ ԱՀՄ) համագործակցում է փորձառու, ազգային և անկախ հետազոտողների հետ: Հայաստանում, ԱՀՄ-ն համագործակցել է Արտակ Քյուրումյանի հետ, ով պետական կառավարման ոլորտում փորձառություն ունեցող հետազոտող է: ԱՀՄ հետազոտողն ուսումնասիրել է կառավարության կողմից տրամադրված առանցքային երկու փաստաթուղթ՝ ՀՀ կառավարության ԲԿԳ երկրորդ գործողությունների ծրագիրը և երկրորդ գործողությունների ծրագրի կառավարության ինքնագնահատման զեկույցը: ԱՀՄ հետազոտողն արձանագրել է, որ ՀՀ կառավարությունն էականորեն բարելավել է ինքնագնահատման զեկույցի որակը:

ԱՀՄ հետազոտողը հանդիպումներ է ունեցել պետական մի քանի մարմինների, ԲՀԿ-ների և այլ շահառուների ներկայացուցիչների հետ: Անհատական հանդիպումների ցանկը, ինչպես նաև խմբային հանդիպումների վայրը և օրերը ներկայացված են սույն հաշվետվության VIII (Մեթոդաբանություն և աղբյուրներ) բաժնում:

ԱՀՄ հետազոտողը հիմնվել է նաև քաղաքացիական հասարակության կողմից պատրաստված այնպիսի հաշվետվությունների վրա, ինչպիսիք են «ԲԿԳ Հայաստան. Քաղհասարակության զեկույց»¹⁴, «Բաց կառավարման գործընկերություն – Հայաստան ծրագրի զարգացումները 2012-2013թթ. և 2014-2016թթ. գործողությունների ծրագիրը»¹⁵ և «2014 ԲՀԿ կայունության ցուցանիշ – Հայաստան»¹⁶:

ԱՀՄ հետազոտողը նաև քննարկել է գործողությունների ծրագիրը և դրա առանձին պարտավորությունները քաղաքացիական

հասարակության կազմակերպությունների (այսուհետ՝ ՔՀԿ) մի շարք ներկայացուցիչների հետ անհատական և 2015թ. հոկտեմբերին կազմակերպված երկու խմբային քննարկումների ժամանակ (դրանք նշվում են որպես ԱՀՄ հետազոտողի հանդիպումներ): ԱՀՄ հետազոտողի այս հանդիպումները կայացել են 2015թ. հոկտեմբերի 12-ին Երևանում և 2015թ. հոկտեմբերի 19-ին Վանաձորում: ԱՀՄ հետազոտողը շնորհակալություն է հայտնում «Քաղաքացիական զարգացման և համագործակցության հիմնադրամին», «Լոռու զարգացման կենտրոն» ՀԿ-ին և Վանաձորի «ՀԿ կենտրոնին» այս հանդիպումների կազմակերպման գործում ցուցաբերած աջակցության համար:

¹ ՀՀ վարչապետի Աշխատանքային խումբ ստեղծելու մասին 2012 թվականի հունվարի 27-ի №50-Ա որոշում (հասանելի է <https://www.e-gov.am/decrees/item/10508/> կայքէջում)

² ՀՀ վարչապետի Աշխատանքային խումբ ստեղծելու մասին 2012 թվականի սեպտեմբերի 29-ի №931-Ա որոշում (հասանելի է <https://www.e-gov.am/decrees/item/11345/> կայքէջում)

³ ՀՀ կառավարության 2014թ.-ի հուլիսի 31-ի նիստի №32 արձանագրություն (հասանելի է http://ogp.am/u_files/file/2ndvoroshum.pdf կայքէջում)

⁴ ՀՀ օրենսդրության մեջ արձանագրային որոշումների դերի վերաբերյալ տես ԲԿԳ շրջանակներում ՀՀ առաջին գործողությունների ծրագրի առաջընթացի վերաբերյալ ԱՀՄ առաջին հաշվետվությունը:

⁵ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (փոփոխություններով) Ընդունվել է 1995 թվականի հուլիսի 5-ին, Հոդված 49 (հասանելի է <http://www.parliament.am/parliament.php?id=constitution&lang=arm&enc=utf8> կայքէջում)

⁶ Հայաստանի Հանրապետության Նախագահի «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվե նշանակելու մասին» 2015 թվականի հոկտեմբերի 8-ի ՆՀ-754-Ն հրամանագիր (հասանելի է <http://www.president.am/hy/decrees/item/2273/> կայքէջում)

⁷ Հայաստանի Հանրապետության Նախագահի «Հայաստանի Հանրապետության կառավարության հրաժարական ընդունելու մասին» 2014 թվականի ապրիլի 3-ի ՆՀ-48-Ա հրամանագիր (հասանելի է <http://www.president.am/hy/decrees/item/1122/> կայքէջում)

⁸ Հայաստանի Հանրապետության Նախագահի «Հայաստանի Հանրապետության վարչապետ նշանակելու մասին» 2014 թվականի ապրիլի 13-ի ՆՀ-49-Ն հրամանագիր (հասանելի է <http://www.president.am/hy/decrees/item/1123/> կայքէջում)

⁹ ՀՀ վարչապետի «Համակարգող նշանակելու և աշխատանքային խումբ ստեղծելու մասին» 2014 թվականի հուլիսի 15-ի №656-Ա որոշում (հասանելի է <https://www.e-gov.am/decrees/item/13492/> կայքէջում)

¹⁰ ՀՀ կառավարության աշխատակազմի 2014թ.-ի օգոստոսի 21-ի №02/12.11/13772-14 գրությունը:

¹¹ ՀՀ վարչապետի 2015 թվականի մայիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2014 թվականի հուլիսի 15-ի №656-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» №395-Ա որոշում (հասանելի է <https://www.e-gov.am/decrees/item/14477/> կայքէջում)

¹² ԲԿԳ աշխատանքային խմբի կազմը փոփոխվել է (տեղեկատվությունը հասանելի է http://ogp.am/hy/news/item/2015/05/20/WG_2015/ կայքէջում)

¹³ ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի №1515-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը գումար հատկացնելու մասին» 2015 թվականի մայիսի 14-ի №495-Ն որոշում (հասանելի է <https://www.e-gov.am/gov-decrees/item/25793/> կայքէջում)

¹⁴ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ, 2015 թվական, ԲԿԳ Հայաստան. Քաղաքացիական զարգացման կենտրոնի հետազոտության ցուցանիշները (հասանելի է http://ogp.am/hy/news/item/2015/09/30/FOICA_monitoring/ կայքէջում) և [http://ogp.am/u_files/file/OGPArmenia_MonitoringReport\(1\).pdf](http://ogp.am/u_files/file/OGPArmenia_MonitoringReport(1).pdf) կայքէջում)։ Պատրաստվել է «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի կողմից Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության օժանդակությամբ և հրապարակվել է 2015թ. հոկտեմբերի 6-ին (հասանելի է http://ogp.am/hy/news/item/2015/10/06/Monitoring_mediaceuter/ կայքէջում)

¹⁵ Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ, 2014 թվական, «Բաց կառավարման գործընկերության – Հայաստան ծրագրի զարգացումները 2012-2013թթ. և 2014-2016թթ. գործողությունների ծրագիրը»: Հրապարակվել է Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի կողմից իրականացված «Հանրային իրազեկում և մասնակցություն Բաց կառավարման գործընկերության (OGP) հայաստանյան ծրագրին» ծրագրի շրջանակներում: Ֆինանսական աջակցություն է ստացել Քաղաքացիական զարգացման կենտրոնից: Հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից ֆինանսավորվող ծրագրի շրջանակներում:

¹⁶ Քաղաքացիական զարգացման և համագործակցության հիմնադրամ, 2015 թվական, « 2014 ՔՀԿ կայունության ցուցանիշ. Հայաստան» (հասանելի է [http://www.cdpf.am/file/Armenia-%20\(2\).pdf](http://www.cdpf.am/file/Armenia-%20(2).pdf) կայքէջում)։ Ներկայացվել է 2015թ. սեպտեմբերի 11-ին Անի Պլագա հյուրանոցում (հասանելի է <http://www.cdpf.am/am/news/463/> կայքէջում)

II | Գործընթաց. Գործողությունների ծրագրի մշակում

Գործողությունների ծրագրի մշակման փուլում խորհրդակցությունների գործընթացը մասնակիորեն է բավարարել ԲԿԳ կառավարման հիմնադրույթների պահանջներին: ՀՀ կառավարությունը ԲԿԳ շրջանակներում երկրորդ գործողությունների ծրագիրը հրապարակել է ԲԿԳ Հայաստան կայքում (www.ogp.am) և խորհրդակցել է նախկինում ԲԿԳ-ում ներգրավված ՀԿ-ների խմբի հետ:

ԲԿԳ-ին միացած երկրները գործողությունների ծրագրի մշակման փուլում պետք է հետևեն խորհրդակցությունների գործընթացը կանոնակարգող ընթացակարգերին: ԲԿԳ կառավարման հիմնադրույթների համաձայն, երկրները պետք է՝

- Մինչև խորհրդակցություններն սկսելը հրապարակեն դրա մանրամասները և ժամանակացույցը (առնվազն՝ առցանց):
- Խորհրդակցեն հասարակության մեծ խմբերի, ներառյալ՝ քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի հետ, փորձեն բացահայտել տեսակետների բազմազանությունը: Միաժամանակ հանրային քննարկումների ամփոփաթեթին ու բոլոր անհատական գրավոր դիմումները հասանելի դարձնեն առցանց:
- Խորհրդակցությունների փուլում հանրային մասնակցությունն ընդլայնելու նպատակով կազմակերպեն ԲԿԳ հանրային իրազեկման միջոցառումներ:
- Բնակչության հետ խորհրդակցությունների համար բավարար ժամանակ հատկացնեն և օգտագործեն տարբեր մեխանիզմներ՝ առցանց

և անհատական հանդիպումների ձևաչափով, որպեսզի երաշխավորեն գործընթացներում քաղաքացիներին ներգրավելու հնարավորությունը:

Գործողությունների ծրագրի իրականացման փուլում խորհրդակցություններին վերաբերող հինգերորդ պահանջն ամրագրված է ԲԿԳ կառավարման հիմնադրույթներում: Դրան առանձին անդրադարձ է կատարվում սույն հաշվետվության երրորդ՝ «խորհրդակցություններ իրականացման փուլում» բաժնում:

Երկրները ԲԿԳ իրականացման հետ կապված խորհրդակցությունների համար պետք է բազմաթիվ շահառուների մասնակցությամբ հարթակ ձևավորեն, որը կարող է լինել ինչպես արդեն իսկ գոյություն ունեցող, այնպես էլ՝ նոր ստեղծվող կառույց: Խորհրդակցություններին անդրադարձ է կատարվում հաջորդ բաժնում: Սակայն մինչև իրականացման փուլը և իրականացման փուլում խորհրդակցությունների վերաբերյալ վկայությունները ներկայացված են ստորև:

Աղյուսակ 1 | Գործողությունների ծրագրի վերաբերյալ խորհրդակցությունների գործընթացը

Գործողությունների ծրագրի փուլը	ԲԿԳ գործընթացին ներկայացվող պահանջները (Կառավարման հիմնադրույթների բաժինը)	
Գործողությունների ծրագրի մշակման փուլ	Արդյո՞ք ժամանակացույցը և գործընթացի վերաբերյալ տեղեկատվությունը հասու էր մինչև խորհրդակցություններն սկսելը	Ոչ
	Արդյո՞ք ժամանակացույցը հասու էր առցանց	Ոչ
	Արդյո՞ք ժամանակացույցը հասու էր տեղեկատվության տարածման այլ խողովակներով	Ոչ
	Հղում ժամանակացույցին	Ոչ
	Արդյո՞ք նախապես ծանուցվել է խորհրդակցությունների մասին	Այո
	Քանի օր առաջ է ծանուցվել	7
	Արդյո՞ք այս ծանուցումը բավարար էր	Այո
	Արդյո՞ք կառավարությունը կազմակերպել է հանրային իրազեկման միջոցառումներ	Ոչ
	Հղում հանրային իրազեկման միջոցառումներին	Ոչ
	Արդյո՞ք կազմակերպվել են առցանց խորհրդակցություններ	Այո
	Հղում առցանց խորհրդակցություններին	www.ogp.am/hy/plan
	Արդյո՞ք կազմակերպվել են անհատական խորհրդակցություններ	Այո
	Արդյո՞ք հրապարակվել է կարծիքների ամփոփաթեթը	Այո
	Հղումը կարծիքների ամփոփաթեթին	www.ogp.am/hy/plan
	Արդյո՞ք խորհրդակցությունները բաց էին հանրության համար, թե միայն հրավերով	Միայն հրավերով
Հանրային մասնակցության միջազգային ասոցիացիայի՝ IAP2, Հանրային մասնակցության գնահատման սանդղակին համապատասխան տրված գնահատականը	Խորհրդակցել	
Գործողությունների ծրագրի իրականացման ընթացքում	Արդյո՞ք գործողությունների ծրագրի իրականացման ընթացքում գոյություն է ունեցել խորհրդակցությունների հարթակ	Այո
	Արդյո՞ք խորհրդակցությունները բաց էին հանրության համար, թե միայն հրավերով	Միայն հրավերով
	Հանրային մասնակցության միջազգային ասոցիացիայի՝ IAP2, Հանրային մասնակցության գնահատման սանդղակին համապատասխան տրված գնահատականը	Տեղեկացնել

Խորհրդակցությունների վերաբերյալ նախնական ծանուցումը և հանրային իրազեկումը

ՀՀ կառավարությունը ԲԿԳ գործողությունների երկրորդ ծրագրի մշակումն սկսել է 2013թ. օգոստոսին¹: Գործողությունների ծրագրի նախագիծը մշակվել էր պետական մարմիններից ստացված առաջարկությունների հիման վրա և քննարկվել ԲԿԳ աշխատանքային խմբի 2013թ. սեպտեմբերի 9-ի և նոյեմբերի 26-ի նիստերի ժամանակ: Աշխատանքային խմբում ընդգրկված ՀԿ-ներից երկուսը բացահայտ կերպով արտահայտել են իրենց դժգոհությունը ԲԿԳ շրջանակներում ՀՀ երկրորդ գործողությունների ծրագրի նախագծի վերաբերյալ և այդ մասին հայտարարել 2013թ. հոկտեմբերի 15-ին կայացած մամուլի ասուլիսի ժամանակ:

2014թ. մարտի 23-ին ՀՀ կառավարությունը հայտարարել է ԲԿԳ շրջանակներում ՀՀ երկրորդ գործողությունների ծրագրի նախագծի շուրջ հանրային քննարկումներ և խորհրդակցություններ սկսելու մասին² և անհրաժեշտ հանդիպումները կազմակերպելու համար օժանդակություն է խնդրել միջազգային կազմակերպություններից: Քանի որ ՀՀ կառավարությունը նախապես ծրագրավորել էր ԲԿԳ շրջանակներում ՀՀ երկրորդ գործողությունների ծրագիրը ներկայացնել մայիսի կեսերին, դրա պատրաստման վերջին փուլն սկսել էր վերջնաժամկետից երկու ամիս առաջ: Հայտարարության մեջ նշվում էր, որ գործողությունների ծրագիրը կազմվել է ԲԿԳ աշխատանքային խմբի անդամների առաջարկությունների հիման վրա: Հայտարարությամբ ՀԿ-ներին քաջալերվում էր դիտողություններ և առաջարկություններ ներկայացնել, սակայն չէր նշվում առաջիկա հանդիպումների օրերն ու վայրը: ՀԿ-ներին առաջարկվում էր իրենց կարծիքներն ու առաջարկությունները ներկայացնել www.ogp.am կայքի միջոցով (կայքը ստեղծվել է «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի կողմից): Վերոնշյալ ինտերնետային կայքի միջոցով կառավարությունն առաջարկություններ չի ստացել:

Կառավարությունը հանրային իրազեկման միջոցառումներ է կազմակերպել միայն

համացանցում և ԲԿԳ վերաբերյալ պաշտոնական տեղեկատվություն է տարածել www.gov.am և www.ogp.am կայքերի միջոցով: Երկու էջեր են ստեղծվել ֆեյսբուքում³: Կառավարությունը չի ունեցել առաջիկա հանդիպումների ժամանակացույց: ԲԿԳ շրջանակներում ՀՀ կառավարության երկրորդ գործողությունների ծրագրի նախագիծը www.ogp.am կայքում տեղակայված է եղել երկու շաբաթից ավելի: Սակայն ՀՀ կառավարությունը ԲԿԳ Հայաստանի ինտերնետային կայքի կամ էլեկտրոնային փոստի միջոցով առաջարկություններ չի ստացել:

Հեռուստատեսությամբ, ռադիոյով և տպագիր մամուլով հանրային իրազեկման միջոցառումներ չեն կազմակերպվել:

Գործողությունների ծրագրում չէին մատնանշվում պարտավորությունների կատարման համար պատասխանատու պաշտոնյաներ:

Խորհրդակցությունների խորությունն ու ընդգրկվածությունը

Գործողությունների ծրագրի մշակմանը մասնակցած ՔՀԿ-ներն այն բնութագրել են որպես մասնակցային և իմաստալից: ՔՀԿ-ների հետ քննարկումների և խորհրդակցությունների արդյունքում ԲԿԳ շրջանակներում ՀՀ երկրորդ գործողությունների ծրագիրը 2013թ. օգոստոսին ԲԿԳ աշխատանքային խմբի անդամներին ներկայացված և ԲԿԳ աշխատանքային խմբի 2013թ. սեպտեմբերի 9-ի և նոյեմբերի 26-ի նիստերի ժամանակ քննարկված նախագծի համեմատ էական փոփոխությունների է ենթարկվել: Հաստատված գործողությունների ծրագրում ներառված պարտավորությունների մեծ մասը հիմնվում են ՔՀԿ-ներից ստացված առաջարկությունների վրա: ՀՀ կառավարությունը ԲԿԳ նախաձեռնությունում Հայաստանի մասնակցության երկրորդ գործողությունների ծրագրի մշակման նպատակով ստեղծված աշխատանքային խմբում ընդգրկվելու առաջարկ է է արել ԲԿԳ աշխատանքային խմբում նախկինում ընդգրկված ՀԿ-ներին և այն ՀԿ-ներին, որոնք ԲԿԳ միջոցառումների վերաբերյալ հետաքրքրություն են դրսևորել տարբեր աղբյուրներից դրա մասին տեղեկանալուց հետո:

ՔՀԿ-ների մեծ մասը նշել է, որ հաստատված վերջնական տարբերակը շատ ավելի լավ փաստաթուղթ է, քան կառավարության կողմից 2013թ. օգոստոսին պատրաստված և մինչև 2014թ. ապրիլ շրջանառված փաստաթուղթը: ԲԿԳ աշխատանքային խումբը 2014թ. հունիսի 5-ին և հուլիսի 15-ին կառավարության մասնաշեքում քննարկել է ԲԿԳ շրջանակներում ՀՀ երկրորդ գործողությունների ծրագիրը: Փաստաթղթի նախագիծը ենթարկվել է էական փոփոխությունների՝ արտահայտելով բազմաթիվ ՀԿ-ների տեսակետներն ու կարծիքները: Որոշ ՀԿ-ներ նշել են, որ սա առաջին դեպքն է, երբ կառավարությունն իրենց հետ քննարկել է բազմաթիվ կարևոր հարցեր, ընդունել է ՀԿ-ներից ստացված առաջարկությունները կամ, մերժելու դեպքում, տրամադրել գրավոր պատասխաններ: Կառավարության կողմից կազմակերպված խորհրդակցությունները եղել են միայն հրավերի հիման վրա: Առաջարկությունների ամփոփաթեթը հասու է www.ogp.am կայքում:

Այնուամենայնիվ, բազմաթիվ ՔՀԿ-ներ հիասթափված են, քանի որ նրանց կարծիքով փաստաթուղթը չի արտացոլում վերջին երկուսուկես տարիներին ԲԿԳ շրջանակներում ՀՀ կառավարության և ՔՀԿ-ների համագործակցության արդյունքում կուտակված փորձը: Նրանք համարում են, որ այդ առումով գործողությունների ծրագիրը բավականաչափ հավակնոտ չէ: Որոշ ՀԿ-ների կարծիքով պարտավորությունների մեծ մասն անդրադառնում է առանձին ոլորտներում կոնկրետ խնդիրների լուծմանը, սակայն պարտավորությունները չեն անդրադառնում համակարգային խնդիրների լուծմանը (օրինակ՝ տեղեկատվության ազատության, պետական գնումների, դպրոցական խորհուրդների գործունեության, տեղական ինքնակառավարման մարմինների թափանցիկության և մյուս ոլորտներում): ՔՀԿ-ներն այն կարծիքին են, որ կառավարությունը փորձում է խնդիրները լուծել մեկ առ մեկ այն դեպքում, երբ բավարար միջոցներ և կարողություններ ունի միաժամանակ մի շարք մարտահրավերների անդրադառնալու համար: Ի լրումն, ՀԿ-ները կարծում են, որ անհրաժեշտ է սահմանել ավելի հավակնոտ նպատակներ:

Գործողությունների ծրագրի մշակման ընթացքում կառավարությունը և ՔՀԿ-ները կազմակերպել

են յոթ հանդիպում: Պետական պաշտոնյաները մասնակցել են կառավարության կողմից առանձին կամ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի (այսուհետ՝ ԻԱԿ) հետ համատեղ կազմակերպած բոլոր միջոցառումներին: Կառավարության կազմակերպած միջոցառումներին մասնակցել են միայն հրավեր ստացած ՀԿ-ներ: Չնայած ՀԿ-ները ներկայացնում են տարբեր ոլորտներ, այնուամենայնիվ, գործընթացում ներգրավված չեն եղել ՀԿ-ներ այնպիսի կարևոր ոլորտներից, ինչպիսիք են, օրինակ, շրջակա միջավայրի պաշտպանությունը կամ առողջապահությունը՝ թեև կառավարությունն այդ ոլորտներում պարտավորություններ է ստանձնել: Չնայած այդ հանգամանքին, ԱՀՄ հետազոտողի կարծիքով ներկայացվել է տեսակետների լայն շրջանակ:

2014թ. ապրիլի 5-6ին Աղվերան լեռնային հանգստի գոտում ՀՀ կառավարությունը, ԻԱԿ հետ համատեղ, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի ֆինանսական օժանդակությամբ^{4, 5}, կազմակերպել է երկօրյա աշխատանքային քննարկում: Միջոցառմանը հրավիրվել է պետական մարմինների և ընտրված ՀԿ-ների մի խումբ: Մինչև Աղվերանում աշխատանքային քննարկումն սկսելը՝ 2014թ. ապրիլի 3-ին, ՀՀ կառավարությունը հրաժարական ներկայացրեց: Հաջորդ կառավարությունն իր պարտականությունների կատարումը ստանձնեց 2014թ. ապրիլի երկրորդ կեսին:

Զուգահեռաբար, ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից ֆինանսավորվող և «Քաունթերփարթ ինթերնեյշնլ» կազմակերպության կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում, նախաձեռնել է հանրային իրազեկման և խորհրդակցությունների գործընթաց: «Ասպարեզը» հանդիպումներ է կազմակերպել Գյումրիում՝ 2014թ. մարտի 31-ին, Վանաձորում՝ 2014թ. ապրիլի 1-ին և Երևանում՝ 2014թ. ապրիլի 8-ին: «Ասպարեզը» հրավեր է ուղարկել իրեն հասու ՔՀԿ-ների ցանկի⁶ 800 ՀԿ-ների և մտահոգ քաղաքացիների և տեղեկատվությունը տարածել սոցիալական ցանցի միջոցով: «Ասպարեզ» ակումբը հանդիպումներ է կազմակերպել Հայաստանի բնակչության քանակով երկրորդ և երրորդ քաղաքներում (Գյումրի և Վանաձոր), ինչպես նաև մայրաքաղաքում և այդ

միջոցառումների վերաբերյալ տեղեկատվություն հրապարակել իր կայքում: ՀՀ կառավարությունը մայրաքաղաքից դուրս ԲԿԳ-ին նվիրված հանրային միջոցառումներ չի կազմակերպել և չի օգտագործել «Ասպարեզ»-ի կողմից կազմակերպած միջոցառումների ընձեռած հնարավորությունը մայրաքաղաքից դուրս գործող ՀԿ-ների հետ հանդիպելու համար: Կառավարությունը բացատրել է, որ կմասնակցեր վերը նշված միջոցառումներին, եթե նախապես տեղեկատվություն ստանար դրանց մասին և համապատասխան պետական պաշտոնյաները մասնակցության հրավեր ստանային: Հանդիպումների վերաբերյալ տեղեկատվությունը հասու է ԲԿԳ Հայաստան ինտերնետային կայքում (www.ogp.am):

ԻԱԿ-ը հրավիրել է այն ՀԿ-ներին, որոնք համեմատաբար ակտիվ են եղել ԲԿԳ գործընթացում կամ դրան վերաբերող հարցերում կամ հետաքրքրություն են ցուցաբերել ԲԿԳ նկատմամբ: Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (այսուհետ՝ ԵԱՀԿ) ֆինանսական աջակցությամբ կառավարությունը և ԻԱԿ-ը 2014թ. հուլիսի 18-ին Երևանում կազմակերպել են ՀՀ երկրորդ գործողությունների ծրագրի նախագծի քննարկում⁷: ԲԿԳ շրջանակներում ՀՀ երկրորդ գործողությունների ծրագիրը ՀՀ կառավարությունը հաստատել է 2014թ. հուլիսի 31-ին⁸: 2015թ. ՀՀ կառավարությունը փոփոխություններ է կատարել երկրորդ գործողությունների ծրագրում⁹, որոնք կառավարության կառուցվածքում տեղի ունեցած փոփոխությունների հետևանք էին: Մասնավորապես՝

- Գնումների ոլորտին վերաբերող պարտավորության կատարման համար այժմ ՀՀ ֆինանսների նախարարության փոխարեն պատասխանատու է ՀՀ կառավարության աշխատակազմը (պարտավորություն 5)
- Երկու պարտավորության դեպքում դրանց կատարման համար պատասխանատվությունը ՀՀ կառավարության աշխատակազմից տեղափոխվել էր ՀՀ արդարադատության նախարարություն (7-րդ և 8-րդ պարտավորություններ)

- Երեք պարտավորության կատարման համար ՀՀ տարածքային կառավարման նախարարության փոխարեն այժմ պատասխանատու է ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունը (6-րդ, 10-րդ և 11-րդ պարտավորություններ):

Կառավարության ստացած առաջարկությունների ամփոփաթերթը և մերժումների հիմնավորումները հասու են www.ogp.am կայքում: Գործընթացում ընդգրկված ՀԿ-ների մեծ մասը բավարարված չէին իրենց բազմաթիվ առաջարկությունների մերժումների հիմնավորումներով: Կառավարությունը մի շարք առաջարկություններ մերժել էր, քանի որ դրանք օրենքներում փոփոխություններ էին ենթադրում: Կառավարության ներկայացուցիչները պնդում են, որ չնայած իշխող կուսակցությունը մեծամասնություն ունի Ազգային ժողովում, որպես անկախ մարմին, օրենքներում փոփոխությունների կատարումը վերջինիս գործն է: Կառավարության ներկայացուցիչները նշել են, որ իրենք նպատակահարմար չեն գտնում օրենքներում փոփոխություններ ենթադրող պարտավորություններ ներառել:

ՀԿ հանրությունը մատնանշում է մի շարք այլ երկրների գործողությունների ծրագրեր, որոնք ներառում էին օրենքներում փոփոխություններ կատարելու պարտավորություն: ՀԿ-ները նաև առաջարկում են կառավարության կողմից օրենքի նախագիծը Ազգային ժողով ներկայացնելը դիտարկել որպես պարտավորության կատարում: ՀՀ կառավարությունն ունի այլ միջազգային գործընկերների հետ ձեռք բերված համաձայնությունների շրջանակներում օրենքների նախագծերն Ազգային ժողով ներկայացնելու պարտավորություն ստանձնելու փորձ (օրինակ՝ Արժույթի միջազգային հիմնադրամի հետ ստանձնած պարտավորությունների շրջանակներում):

Ստորև ներկայացվող աղյուսակում բերված է ԲԿԳ շրջանակներում ՀՀ երկրորդ գործողությունների ծրագրի մշակման ժամանակաշրջանում կառավարության և ՀԿ-ների կողմից կազմակերպված հանդիպումների և դրանց մասնակիցների վերաբերյալ տեղեկատվությունը:

Աղյուսակ 2 | Կառավարության և ՀԿ-ների կազմակերպած հանդիպումների ցանկը

	Օր	Կազմակերպիչ	Վայրը	Մասնակիցներ		
				Կառավարություն	ՀԿ +	Այլ
1	մարտի 31	Ասպարեզ	Գյումրի	0	21	0
2	ապրիլի 1	Ասպարեզ	Վանաձոր	0	20	0
3	ապրիլի 5-6	Կառավարություն և ԻԱԿ	Աղվերան	11	14	4
4	Ապրիլի 8	Ասպարեզ	Երևան	2	27	9
5	հունիսի 5	Կառավարություն	Երևան	8	6	n/a
6	հուլիսի 15	Կառավարություն	Երևան	9	7	1
7	հուլիսի 18	Կառավարություն և ԻԱԿ	Երևան	տվյալները հասու չեն	տվյալները հասու չեն	տվյալները հասու չեն

ՀԿ+ - ՀԿ-ներ, հիմնադրամներ, մամուլ, անհատներ, այլ

Այլ - դեսպանատներ, միջազգային դոնոր կազմակերպություններ, որոնք դրամաշնորհներ են տրամադրում հայկական ՀԿ-ներին, այլ

¹ Հանրային մասնակցության միջազգային ասոցիացիայի՝ IAP2, Հանրային մասնակցության գնահատման սանդղակ <http://bit.ly/1kMm1YC>

² Անկախ հաշվետվական մեխանիզմ: Հայաստան, 2012-13թթ. առաջընթացի հաշվետվություն

³ ԲԿԳ շրջանակներում ՀՀ երկրորդ գործողությունների ծրագրի նախագծման սկիզբն ազդարարող հայտարարությունը հասանելի է http://ogp.am/hy/news/item/2014/03/23/OGP_public/ http://ogp.am/en/news/item/2014/03/25/OGP_workshops/ կայքէջերում:

⁴ ԲԿԳ շրջանակներում ՀՀ գործողությունների վերաբերյալ տեղեկատվություն կարելի է գտնել <https://www.facebook.com/OpenGovernmentPartnershipArmenia> և <https://www.facebook.com/groups/293618900698546/> էջերում:

⁵ Բաց կառավարման գործընկերություն: Հայաստանի Հանրապետության երկրորդ գործողությունների ծրագիր (2014-2016).

⁶ ԲԿԳ շրջանակներում ՀՀ երկրորդ գործողությունների քննարկման նպատակով 2014թ. ապրիլին կազմակերպվել է աշխատանքային հանդիպում, որի մասին տեղեկատվությունը հասանելի է <http://ogp.am/en/news/item/2014/04/15/workshop/> կայքէջում:

⁷ Ասպարեզն օգտագործել է ավելի քան 800 ՀԿ-ների և ակտիվ քաղաքացիների կոնտակտային տվյալներ պարունակող ցանկ: Տեղեկատվությունը հասանելի է <http://www.asparez.am/project/ogp-armenia-civic-participatio/#more-44618> կայքէջում:

⁸ ԲԿԳ շրջանակներում ՀՀ երկրորդ գործողությունների ծրագիրը հասանելի է http://ogp.am/hy/news/item/2014/07/18/Second_AP/ կայքէջում:

⁹ ՀՀ կառավարության 2014թ. հուլիսի 31-ի նիստի Բաց կառավարման գործընկերություն նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության երկրորդ գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին N°32 արձանագրություն: Տեղեկատվությունը հասանելի է http://ogp.am/u_files/file/2ndvoroshum.pdf <http://ogp.am/hy/news/item/2014/07/31/2ndAP/> կայքէջում:

¹⁰ ՀՀ կառավարության 2015թ.-ի ապրիլի 30-ի նիստի ԲԿԳ շրջանակներում ՀՀ երկրորդ գործողությունների ծրագրում փոփոխություններ կատարելու մասին N°19 արձանագրություն:

III | Գործողությունների ծրագրի իրականացումը

ՀՀ կառավարությունը ԲԿԳ-ին վերաբերող միջոցառումներ կազմակերպել է միայն մայրաքաղաքում և չի օգտագործել մարզային ՀԿ-ների հետ հանդիպելու ՀԿ-ների ստեղծած հնարավորությունները: ՔՀԿ հանրության կողմից կազմակերպած միջոցառումներին կառավարության ներկայացուցիչների մասնակցության աստիճանը բավարար չէ:

Պարբերական, բազմակողմանի խորհրդակցություններ

ՀՀ կառավարության աշխատակազմը ՀՀ կառավարության և վարչապետի որոշումների և հանձնարարությունների կատարման նկատմամբ վերահսկողության համար պատասխանատու մարմինն է: Կառավարության աշխատակազմը ԲԿԳ աշխատանքային խմբին կազմակերպական աջակցություն ցուցաբերող հիմնական կառույցն է: ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծված ԲԿԳ աշխատանքային խումբը խորհրդատվական դերակատարություն ունի: Այն չունի կանոնադրություն, աշխատակարգ և մասնակցության փաստաթղթավորված ընթացակարգեր: Աշխատանքային խմբի անդամները նիստերին մասնակցելու հրավեր են ստանում ՀՀ կառավարության աշխատակազմից: Մինչև հիմա ԲԿԳ աշխատանքային խմբի բոլոր նիստերը կայացել են միայն մայրաքաղաքում: ՀԿ-ների 8 ներկայացուցից՝ 3ը և պետական մարմինների 16 ներկայացուցից՝ 5ը կանայք են:

Իրականացման փուլում խորհրդակցությունները կայացել են կամ ԲԿԳ աշխատանքային խմբի ձևաչափով, կամ պետական մարմինների և ՀԿ-ների մասնակցությամբ, երբ աշխատանքային խմբում ընդգրկված ՀԿ-ները պարտավորությունների կատարումը քննարկել են դրանց համար պատասխանատու մարմինների ներկայացուցիչների հետ:

ՀՀ կառավարության և Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ-ի կողմից համատեղ կազմակերպված միջոցառումներ

Սույն հաշվետվության անդրադարձած ժամանակաընթացքում ԲԿԳ աշխատանքային խումբն անցկացրել է ԲԿԳ շրջանակներում ՀՀ կառավարության երկրորդ գործողություններում ներառված պարտավորությունների կատարման քննարկմանը նվիրված մեկ նիստ: 2015թ. մարտի 3-ին ԲԿԳ աշխատանքային խմբի ընդլայնված այդ նիստում քննարկվել են ՀՀ կառավարության, քաղաքացիական հասարակության և դոնոր հանրության եռակողմ համագործակցությանը վերաբերող հարցեր: Միջոցառումը կազմակերպվել է ՀՀ կառավարության և «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի կողմից՝ Հայաստանում Միացյալ Թագավորության դեսպանատան աջակցությամբ: Կառավարությունը չի պատրաստել արձանագրություն ԲԿԳ աշխատանքային խմբի մարտի 3-ի նիստի վերաբերյալ: Կառավարության ներկայացուցիչները համարում են, որ ԲԿԳ աշխատանքային խմբի նիստերի վերաբերյալ մամուլի հաղորդագրությունները բավարար են: Ընդհանրապես, ՀԿ-ների ներկայացուցիչները բարձրաձայնել են, որ պետական մարմինները չեն պատրաստում ԲԿԳ կամ որևէ այլ նախաձեռնության շրջանակներում ՀԿ-ների հետ իրենց հանդիպումների վերաբերյալ արձանագրություններ: ՀԿ-ների կարծիքով կառավարությունը կարող է բարելավել քաղաքացիական հասարակության հետ իր հարաբերություններին վերաբերող այս հանգամանքը,

քանի որ մամուլի հաղորդագրությունները հիմնականում տեղեկատվություն են տրամադրում միջոցառման մասին, սակայն չեն ներկայացնում այդ հանդիպումների ժամանակ կողմերի արտահայտած կարծիքների բազմազանությունը:

Որոշ ՀԿ-ների կարծիքով ԲԿԳ աշխատանքային խմբի հանդիպումը նախաձեռնել է ոչ թե կառավարությունը, այլ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ն: Աշխատանքային խմբի անդամ պետական մարմինների ներկայացուցիչները նիստի ժամանակ զեկուցել են գործողությունների ծրագրով ՀՀ կառավարության ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքի մասին: Կառավարության ներկայացուցիչներն առաջարկել են երկրորդ գործողությունների ծրագրով ստանձնած պարտավորությունների կատարումն ավարտին հասցնել մինչև 2016թ. հունիս, ՀՀ երրորդ գործողությունների ծրագրի ժամանակահատվածի հետ համընկնելուց խուսափելու համար:

Կառավարության կազմակերպած միջոցառումը

Աշխատանքային խմբի մեկ նիստ է հրավիրվել ԲԿԳ «Հանրային ծառայությունների բարելավումը բաց կառավարման սկզբունքների գործադրմամբ» թեմայով մրցանակաբաշխությանը մասնակցելու համար ծրագիր ընտրելու նպատակով: Կառավարությունը պետական մարմիններին և ՀԿ-ներին խնդրել է ներկայացնել իրենց առաջարկությունները, ինչին արձագանքել են բազմաթիվ պետական մարմիններ: 2015թ. ապրիլի 15-ին ԲԿԳ աշխատանքային խումբը նիստ է գումարել ներկայացված առաջարկությունները քննարկելու համար: Քննարկումների արդյունքում կազմվել է ծրագրերի ցանկ, որից «Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի ստեղծում և ներդրում ՀՀ համայնքապետարաններում» ծրագիրն ընտրվել է ներկայացվել է որպես Հայաստանի հայտ: 2015թ. հոկտեմբերին (այն ժամանակաշրջանից հետո, որին անդրադառնում է այս հաշվետվությունը), Մեքսիկայում կայացած ԲԿԳ տարեկան համաժողովի ժամանակ Հայաստանի հայտը ստացավ Ասիա-խաղաղովկիանոսյան տարածաշրջանի առաջին մրցանակը:

ԲԿԳ աշխատանքային խմբում ընդգրկված ՀԿ-ներն այն կարծիքին են, որ աշխատանքային խումբը պետք

է ավելի հաճախ նիստեր գումարի: ՀԿ-ներից շատերը կարծում են, որ աշխատանքային խմբում իրենց դերը սահմանափակված է պետական մարմինների ներկայացուցիչների հաշվետվությունները լսելով (Հանրային մասնակցության միջազգային ասոցիացիայի՝ IAP2, Հանրային մասնակցության գնահատման սանդղակին համապատասխան տրված գնահատականը՝ տեղեկացնել): ՀԿ-ները կարծում են, որ իրենք պետք է ավելի մեծ դերակատարություն ունենան գործընթացում ընդհանրապես և աշխատանքային խմբում՝ մասնավորապես:

Կառավարությունը կամ ԲԿԳ աշխատանքային խումբը ԲԿԳ կամ առանձին պարտավորությունների կատարման վերաբերյալ հանրային իրազեկման միջոցառումներ չեն կազմակերպել:

ՀԿ-ների կողմից կազմակերպված միջոցառումները

2014թ. նոյեմբերի 6-ին «Լրագրողներ հանուն ապագայի» ՀԿ-ն նամակներ է հղել ԲԿԳ շրջանակներում ՀՀ երկրորդ գործողությունների ծրագրով ստանձնած պարտավորությունների կատարման համար պատասխանատու ութ պետական մարմիններին: Ի պատասխան ՀՀ կառավարության աշխատակազմ ուղղված գրության, 2014թ. նոյեմբերի 12-ին պատասխանվել է, որ ԲԿԳ աշխատանքային խմբի հաջորդ նիստը կկայանա առաջիկա օրերին, ինչը տեղի չի ունեցել: ԲԿԳ աշխատանքային խմբի հաջորդ (ընդլայնված) նիստը կայացել է 2015թ. մարտի 3-ին: Նախարարությունների ու գերատեսչությունների պատասխանները հասանելի են «Լրագրողներ հանուն ապագայի» ՀԿ-ի www.jnews.am կայքում:

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ն նույնպես նամակներ է ուղարկել տարբեր պետական մարմինների՝ տեղեկատվություն խնդրելով ԲԿԳ շրջանակներում Հայաստանի ստանձնած պարտավորությունների կատարման վերաբերյալ: «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի գրությունների պատճենները, ինչպես նաև պետական մարմինների պատասխանները հասանելի են www.givemeinfo.am կայքում:

Գործողությունների ծրագրի իրականացման ժամանակ ԱՀՄ հետազոտողը մասնակցել է «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի կազմակերպած «ԲԿԳ-Հայաստան. ֆաղաքացիական

հասարակության համագործակցությունը» (2014թ. նոյեմբերի 21-ին) և «Բաց կառավարման գործընկերության հայաստանյան գործընթացների մշտադիտարկման և գնահատման գործիքներ քաղհասարակության համար» (2015թ. հունիսի 29-ին) թեմաներով քննարկումներին (Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության օժանդակությամբ) : Վերջին միջոցառման ժամանակ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի ներկայացուցիչները ներկայացրել են միջազգային փորձի վրա հիմնված մշտադիտարկման մեթոդաբանության նախագիծը: «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ն նախաձեռնել է նաև էլեկտրոնային «ԲԿԳ-Հայաստան տեղեկագրի» հրապարակումը : Տեղեկագրի առաջին չորս համարները լույս են տեսել 2014թ. դեկտեմբերին և 2015թ. մարտ, մայիս և հուլիս ամիսներին : Առաջին երկու համարները հրապարակվել են Երևանում՝ ՀՀում Միացյալ Թագավորության դեսպանատան, իսկ վերջին երկուսը՝ Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության օժանդակությամբ:

2014թ. օգոստոսին ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը հանրային իրազեկման միջոցառումներ է կազմակերպել՝ Գյումրու, Վանաձորի և Երևանի ՀԿ-ներին ներկայացնելով գործողությունների հաստատված ծրագիրը: «Ասպարեզը» նաև հրապարակել է «Բաց կառավարման գործընկերություն – Հայաստան ծրագրի զարգացումները 2012-2013թթ. և 2014-2016թթ. գործողությունների ծրագիրը» տեղեկատվական նյութը :

Կառավարության ներկայացուցիչները մասնակցել են «Լրագրողներ հանուն ապագայի» ՀԿ-ի կողմից մայրաքաղաքից դուրս կազմակերպած մեկ միջոցառման: ԲԿԳ գործընթացների համար պատասխանատու կոնտակտային պաշտոնյան տեղեկացրել է, որ իրենք տեղեկացված չեն եղել և չեն հրավիրվել մասնակցելու ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի կողմից կազմակերպված միջոցառումներին:

Հայաստանի Հանրապետությունում ԱՄՆ դեսպանատան օժանդակությամբ «Լրագրողներ հանուն ապագայի» ՀԿ-ն կազմակերպել է ԲԿԳ-ին նվիրված հանրային իրազեկման միջոցառում մայրաքաղաքից դուրս: «Լրագրողներ հանուն ապագայի» ՀԿ-ն՝ ԲԿԳ-ին և դրան Հայաստանի մասնակցության թեմայով միջոցառմանը մասնակցելու համար նախապես հրավերներ է ուղարկել մարզային ՀԿ-ներին : «Լրագրողներ հանուն ապագայի» ՀԿ-ն քննարկումներ է կազմակերպել Գորիս , Ալավերդի , Գյումրի , Արմավիր և այլ քաղաքներում: Հանդիպումների և քննարկումների արդյունքում ՀԿ-ն եզրակացրել է, որ մարզային ՀԿ-ները տեղյակ չեն ԲԿԳ-ի և դրան Հայաստանի մասնակցության մասին: ՀԿ-ների մի մասի կարծիքով բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի եկամուտների հայտարարագրերի թափանցիկության վերաբերյալ պարտավորությունն այնքան էլ կարևոր չի, քանի որ այդ հայտարարագրերը հավաստի տեղեկատվություն չեն ներկայացնում: ՀԿ-ները գտնում են, որ կառավարությունը պետք է ավելին անի կրթության, առողջապահության և այլ ոլորտներում կոռուպցիայի դեմ պայքարի ուղղությամբ:

Աղյուսակ 3 | ՀԿ-ների կողմից կազմակերպած հանրային իրազեկման միջոցառումները և կառավարության ներկայացուցիչների մասնակցությունը դրանց

	Միջոցառման օրը	Կազմակերպիչը	Վայրը	Կառավարության ներկայացուցիչների մասնակցությունը
1	2014թ. օգոստոսի 4	Ասպարեզ	Վանաձոր	Ոչ
2	2014թ. օգոստոսի 5	Ասպարեզ	Գյումրի	Ոչ
3	2014թ. օգոստոսի 28	Ասպարեզ	Երևան	Այո

4	2014թ. հոկտեմբերի 24	Լրագրողներ հանուն ապագայի	Գորիս	Ոչ
5	2014թ. նոյեմբերի 7	Լրագրողներ հանուն ապագայի	Ալավերդի	Այո
6	2014թ. նոյեմբերի 14	Լրագրողներ հանուն ապագայի	Գյումրի	Ոչ
7	2014թ. նոյեմբերի 15	Լրագրողներ հանուն ապագայի	Արմավիր	Ոչ
8	2014թ. նոյեմբերի 21	Ինֆորմացիայի ազատության կենտրոն	Երևան	Ոչ
9	2015թ. հունվարի 22	Լրագրողներ հանուն ապագայի	Գավառ	Ոչ
10	2015թ. հունվարի 22	Լրագրողներ հանուն ապագայի	Հրազդան	Ոչ
11	2015թ. փետրվարի 3	Լրագրողներ հանուն ապագայի	Երևան	Ոչ
12	2015թ. հունիսի 29	Ինֆորմացիայի ազատության կենտրոն	Երևան	Ոչ

- ¹ ԲԿԳ աշխատանքային խմբի ընդլայնված նիստի վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է <http://ogp.am/hy/news/item/2015/03/06/collaboration/> կայքէջում:
- ² ԲԿԳ աշխատանքային խմբի ընդլայնված նիստի վերաբերյալ մամուլի հարցորդագրությունը հասանելի է http://www.ogp.am/hy/news/item/2015/03/03/WG_March/ կայքէջում:
- ³ ԲԿԳ աշխատանքային խմբի ընդլայնված նիստի ժամանակ պետական տարբեր մարմինների ներկայացուցիչները ներկայացրել են առանձին պարտավորությունների կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը, հասանելի է http://www.ogp.am/hy/news/item/2015/03/04/ap_implementation/ կայքէջում:
- ⁴ Առանձին պարտավորությունների կատարումը 2016թ.-ի հունիսին ավարտելու ՀՀ կառավարության խնդրանքի մասին տեղեկատվությունը և երրորդ գործողությունների ծրագիր նախապատրաստման ժամանակացույցի մասին տեղեկատվությունը հասանելի է <http://www.ogp.am/hy/news/item/2015/03/05/deadlines/> կայքէջում:
- ⁵ ՀՀ կառավարությունը խնդրել էր ԲԿԳ մրցանակաբաշխության համար առաջարկությունները ներկայացնել մինչև 2015թ. ապրիլի 15-ը: Մրցանակաբաշխության և դրան ՀՀ մասնակցության մասին տեղեկատվությունը հասանելի է http://www.ogp.am/hy/news/item/2015/04/07/ogp_award/ կայքէջում:
- ⁶ ՀՀ նախարարությունների և կառավարությանն աղընթեր մարմինների, ինչպես նաև ՀՀ պաշտպանության նախարարության և ՀՀ ոստիկանության հայտերը հասանելի են http://www.ogp.am/hy/news/item/2015/04/08/ogpaward_gov/ կայքէջում:
- ⁷ ԲԿԳ աշխատանքային խմբի այն նիստի մասին տեղեկատվությունը, որի ժամանակ պատրաստել է հնարավոր հայտերի համառոտ ցանկը, հասանելի է http://ogp.am/hy/news/item/2015/04/15/WG_April/ կայքէջում:
- ⁸ ՀՀ կառավարության ստացած ԲԿԳ մրցանակի մասին տեղեկատվությունը հասանելի է ՀՀ կառավարության պաշտոնական կայքէջում՝ <http://www.gov.am/am/news/item/12191/>:
- ⁹ ՀՀ կառավարությունից, նախարարություններից ու տարբեր պետական մարմիններից Լրագրողներ հանուն ապագայի ՀԿ-ի ստացած պատասխանները հասանելի են http://jnews.am/statebodies_answers_to_jffletter_on_ogp_2014 կայքէջում:
- ¹⁰ ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի տեղակալի 2014թ. նոյեմբերի 12-ի №02/12.11/18830-14 գրությունը:
- ¹¹ ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի ղեկավարի 2014թ. նոյեմբերի 18-ի №10/8913.14 գրությունը, ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալի 2014թ. նոյեմբերի 14-ի №03/16/6217-14 գրությունը, ՀՀ ֆինանսների նախարարության տեղեկատվության և հանրային կապերի բաժնի նամակը, բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի նախագահի 2014թ. նոյեմբերի 7-ի E-446 գրությունը, ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավարի 2014թ. նոյեմբերի 13-ի №AK/08/11947-14 գրությունը, ՀՀ կրթության և գիտության նախարարի 2014թ. նոյեմբերի 17-ի №04/07-2/14177-14 գրությունը:
- ¹² Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ-ի նամակները և պաշտոնական պատասխանների պատճենները հասանելի են <http://givemeinfo.am/hy/case/1743>, <http://givemeinfo.am/hy/case/17447>, <http://givemeinfo.am/hy/case/1729> կայքէջերում: www.givemeinfo.am Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ-ի կողմից, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և Եվրոպական անվտանգության և համագործակցության կազմակերպության կազմակերպության երևանյան գրասենյակի օգնությամբ ստեղծված կայքէջ է:
- ¹³ Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ-ի կողմից կազմակերպված Բաց կառավարման գործընկերության հայաստանյան գործընթացների մշտադիտարկման և գնահատման գործիքներ քաղաքացիական համար միջոցառման մասին տեղեկատվությունը հասանելի է <http://ogp.am/hy/news/item/2015/06/30/monitoringtools/> կայքէջում:
- ¹⁴ Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ-ի կողմից պատրաստված ԲԿԳ տեղեկագրերը հասանելի են <http://ogp.am/en/Newsletter/> կայքէջում:
- ¹⁵ 2014թ. դեկտեմբերի տեղեկագիրը տեղեկատվություն է ներկայացրել ԲԿԳ շրջանակներում Հայաստանի պարտավորությունների մասին (տեղեկատվությունը հասանելի է <http://ogp.am/hy/Newsletter/item/2014/12/12/Newsletter/> կայքէջում)
- ¹⁶ 2015թ. մարտի տեղեկագիրը տեղեկատվություն է ներկայացրել ԲԿԳ աշխատանքային խմբի նիստի մասին (տեղեկատվությունը հասանելի է [http://ogp.am/u_files/file/OGPNewsletter2\(1\).pdf](http://ogp.am/u_files/file/OGPNewsletter2(1).pdf) կայքէջում), 2015թ. մայիսի տեղեկագիրը տեղեկատվություն է ներկայացրել ԲԿԳ մրցանակաբաշխությանը Հայաստանի ներկայացրած հայտի վերաբերյալ (տեղեկատվությունը հասանելի է <http://ogp.am/hy/Newsletter/item/2015/05/29/Newsletter3/> կայքէջում), իսկ 2015թ. հուլիսի տեղեկագիրը տեղեկատվություն է ներկայացրել քաղաքացիական հասարակության համար մշտադիտարկման և գնահատման գործիքին նվիրված աշխատանքային հանդիպման մասին (տեղեկատվությունը հասանելի է <http://ogp.am/hy/Newsletter/item/2015/07/27/Newsletter4/> կայքէջում)
- ¹⁷ Ժուռնալիստների Ասպարեզ ակումբի կողմից կազմակերպված հանրային իրազեկման միջոցառումների մասին մանրամասն տեղեկատվությունը հասանելի է Ասպարեզի կայքէջում <http://www.asparez.am/project/ogp-armenia-civic-participatio/> հասցեով:
- ¹⁸ Ժուռնալիստների Ասպարեզ ակումբը: 2014թ.: «Բաց կառավարության գործընկերություն – Հայաստան ծրագրի զարգացումները 2012-2013թթ. և 2014-2016թթ. գործողությունների ծրագիրը»: Լույս է ընծայվել ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից ֆինանսավորվող և Քառաթերթիվաթ ինթերնեշնլ հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության ծրագրի շրջանակներում:
- ¹⁹ Լրագրողներ հանուն ապագայի ՀԿ-ի կողմից Գորիսում կազմակերպված միջոցառման մասին տեղեկատվությունը հասանելի է <http://jnews.am/en/OGP-workshop-in-Goris> <http://jnews.am/OGP-workshop-in-Goris> կայքէջերում:
- ²⁰ Լրագրողներ հանուն ապագայի ՀԿ-ի կողմից Ալավերդում կազմակերպված միջոցառման մասին տեղեկատվությունը հասու է <http://jnews.am/en/OGP-JFF-workshop-in-Alaverdi> կայքէջում:
- ²¹ Լրագրողներ հանուն ապագայի ՀԿ-ի կողմից Գյումրիում և Արմավիրում կազմակերպված միջոցառումների մասին տեղեկատվությունը հասանելի է <http://jnews.am/OGP-JFF-workshop-in-Gyumri-and-Armavir> <http://jnews.am/en/OGP-JFF-workshop-in-Gyumri-and-Armavir> կայքէջում:

IV | Գործողությունների ծրագրի բովանդակության վերլուծություն

ԲԿԳ-ին անդամակցած բոլոր կառավարությունները մշակում են ԲԿԳ գործողությունների ծրագիր, որը ներառում է կոնկրետ պարտավորություններ առաջիկա երկու տարվա համար: ԲԿԳ շրջանակներում իրենց գործողությունների ծրագրի ներկայացումը կառավարություններ սկսում են բաց կառավարման բնագավառում սեփական ջանքերի վերաբերյալ տեղեկատվություն հրապարակելուց, ներառյալ՝ կոնկրետ ռազմավարություններ ու ընթացիկ ծրագրեր: Այնուհետև գործողությունների ծրագրերում նշվում են ԲԿԳ շրջանակներում տարբեր ոլորտներում ստանձնած պարտավորությունները, որոնք նախատեսում են կառավարության գործելակերպի բարեփոխումներ: Այս պարտավորությունները կարող են հիմնված լինել առկա ծրագրերի վրա, կարող են ներկայացնել ընթացող բարեփոխումներն իրականացնելուն նպատակաուղղված նոր քայլեր կամ գործողություններ նախատեսել բոլորովին նոր ոլորտներում:

Պարտավորությունները պետք է հաշվի առնեն յուրաքանչյուր երկրի առանձնահատկությունները և տարվող քաղաքականությունը: ԲԿԳ պարտավորությունները պետք է համապատասխանեն ԲԿԳ արժեքների պահանջներին, որոնք ամրագրված են ԲԿԳ կառավարման հիմնադրույթներում և ԲԿԳ-ին միացած բոլոր երկրների կողմից ստորագրված Բաց կառավարման հայտարարությունում: Ստանձնած պարտավորությունների՝ բաց կառավարության արժեքներին համապատասխանությունը գնահատելիս ԱՀՄ-ն հիմնվում է հետևյալ չափանիշների վրա:

Տեղեկատվության հասանելիություն

Տեղեկատվության հասանելիության վերաբերյալ պարտավորությունները.

Վերաբերում են կառավարության տիրապետած տեղեկատվությանը, այլ ոչ թե միայն կառավարության գործունեության վերաբերյալ տեղեկատվությանը: Օրինակ, շրջակա միջավայրի աղտոտվածության վերաբերյալ կառավարության ունեցած տեղեկատվության հրապարակումը համապատասխանում է ԲԿԳ պահանջներին՝ չնայած ներկայացվող տեղեկատվությունն ըստ էության «կառավարության գործունեության» մասին չէ:

Չեն սահմանափակվում միայն տվյալներով, այլև վերաբերում են ոլորտին վերաբերող ամբողջական տեղեկատվությանը: Օրինակ, շինարարության առանձին պայմանագրերի հրապարակում և շինարարական մեծ թվով պայմանագրերի վերաբերյալ իրազեկում:

- Կարող է ներառել տեղեկատվության հրապարակում բաց տեղեկատվության ձևաչափով և համակարգեր, որոնք աջակցում են տվյալների հրապարակմանը:
- Կարող են վերաբերել տեղեկատվության հրապարակման ինչպես պրոակտիվ (տեղեկատվության տրամադրում, առանց դրանք ստանալու վերաբերյալ դիմում ստանալու), այնպես էլ՝ ռեակտիվ (տեղեկատվության տրամադրում, ի պատասխան ստացված դիմումի) եղանակներին:
- Կարող են վերաբերել ինչպես տվյալներն ավելի հասանելի դարձնելուն, այնպես էլ՝ տվյալների տեխնոլոգիական ընթեռնելիությունը (տվյալների ներբեռնում համակարգչային ծրագրերի օգնությամբ) բարելավելուն:
- Կարող են վերաբերել տեղեկատվություն ստանալու իրավունքի մեխանիզմների բարելավմանը (ինչպես, օրինակ, մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կամ տեղեկատվական դատարանների ստեղծում):

- Պետք է տեղեկատվության բաց հասանելիություն ապահովվի (տեղեկատվությունը չպետք է հասանելի լինի միայն արտոնյալներին կամ դիտարկվի կառավարության ներքին տեղեկատվություն):
- Պետք է նպաստի կառավարության կողմից որոշումների ընդունման և հիմնական գործառույթների իրականացման թափանցիկության խթանմանը:
- Կարող են ձգտել նվազեցնելու տեղեկատվության ստացման հետ կապված ծախսերը:
- Պետք է ձգտեն բավարարելու բաց տվյալների 5 աստղի պահանջները (<http://5stardata.info/>).

ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հանրային մասնակցության մասին պարտավորությունները կարող են վերաբերել կառավարմանը հանրության պաշտոնական մասնակցությանը կամ քաղաքացիական մասնակցության ավելի ընդարձակ հասկացությանը: Հանրային մասնակցությունն, ընդհանուր առմամբ, ենթադրում է ձգտել «խորհրդակցել», «ներգրավել», «համագործակցել», կամ «լիազորել» հանրությանը՝ համաձայն Հանրային մասնակցության միջազգային ասոցիացիայի՝ IAP2, Հանրային մասնակցության գնահատման սանդղակի չափանիշների պահանջների (<http://bit.ly/1kMm1YC>).

Հանրային մասնակցության ոլորտի պարտավորությունները.

- Պետք է որոշումների ընդունման գործընթացը թափանցիկ դարձնեն հանրության հետաքրքրված անդամների համար: Այսպիսի հարթակներն ունեն «վերևից ներքև» կառուցվածք՝ այնքանով, որքանով դրանք ստեղծվում են կառավարության կամ նրա կողմից լիազորված կառույցների կողմից, որպեսզի քաղաքականության իրականացման տարբեր փուլերի ժամանակ տեղեկատվություն տրամադրեն կայացված որոշումների վերաբերյալ:
- Կարող են ներառել տեղեկատվության հասանելիության բաղադրիչներ, որպեսզի երաշխավորեն հանրության շահագրգիռ ներկայացուցիչների կողմից որոշումների կայացման գործընթացին իմաստավոր մասնակցությունը:

- Հաճախ ներառում են լաված լինելու իրավունք, չնայած պարտադիր չէ, որ որոշումների կայացման գործընթացին ֆորմալ մասնակցություն նախատեսեն:

Պարտավորությունները կարող են անդրադառնալ նաև հանրային մասնակցության ընդհանուր միջավայրին, որոնք ընդլայնում են հանրային տարածքում մասնակցության հնարավորությունները: Այդպիսի դեպքերի ոչ լրիվ ցանկը ներառում է հետևյալը.

- Հավաքների, արտահայտվելու, պետիցիա ներկայացնելու, մամուլի և միավորումների ազատություններն ընդլայնելուն նպատակաուղղված բարեփոխումներ:
- Միությունների, այդ թվում՝ արհմիությունների և հասարակական կազմակերպությունների գործունեությունը կանոնակարգող օրենքների բարեփոխումներ:
- Քաղաքացիների առաջարկությունների, ընտրությունների և պետիցիաների պաշտոնական ժողովրդավարական գործընթացը և դրա թափանցիկությունը բարելավող բարեփոխումներ:

Ստորև ներկայացվում են պարտավորություններ, որոնք չեն դիտարկվի որպես հանրային մասնակցության չափանիշին համապատասխանող.

- Պարտավորություններ, որոնք ենթադրում են տեղեկատվության հրապարակման արդյունքում մասնակցության բարելավում՝ առանց մանրամասնելու այդ մասնակցության մեխանիզմը (չնայած, որ այդպիսի պարտավորությունը կդիտարկվի որպես «տեղեկատվության հասանելիության» պահանջներին համապատասխանող):
- Ապակենտրոնացմանը վերաբերող պարտավորությունները, որոնք չեն մանրամասնում հանրային մասնակցության մեխանիզմները:
- Միջգերատեսչական համագործակցությունը որպես մասնակցություն սահմանող պարտավորությունները, որոնցում սահմանված չեն հանրային մասնակցության մեխանիզմները:
- Որպես «ոչ բավարար չափով համապատասխանող» կարող են գնահատվել

նաև այն պարտավորությունները, որոնց համաձայն մասնակցությունը սահմանափակվում է կառավարության կողմից ընտրված կազմակերպություններով:

Հաշվետվողականություն

Հաշվետվողականությունը բարելավող պարտավորությունները կարող են ներառել.

- Կանոններ, կանոնակարգեր և մեխանիզմներ, որոնք կառավարության ներկայացուցիչներից պահանջում են հիմնավորել իրենց գործողությունները, միջոցներ ձեռնարկել քննադատության կամ պահանջներ ստանալու դեպքում և ստանձնել օրենքների և ստանձնած պարտավորությունների չկատարման պատասխանատվությունը:

Որպեսզի պարտավորությունները դիտարկվեն որպես «ամբողջությամբ համապատասխանող», «Բաց կառավարության» հիմնական նպատակին համահունչ, պարտավորությունը պետք է ներառի հանրության հետ առերեսվելու տարր, ինչը նշանակում է, որ խոսքը չի գնում հաշվետվական զուտ ներքին համակարգերի մասին: Չնայած նման պարտավորությունների ստանձնումը գովելի է և կարող է համապատասխանել ԲԿԳ հիմնական մարտահրավերների պահանջներին, դրանք, իրենց ձևակերպմամբ չեն բավարարում «հստակ համապատասխանող» չափանիշի պահանջներին, քանի որ բավական թափանցիկ չեն: Այն դեպքերում, երբ այդ ներքին բնույթի մեխանիզմները կառավարության ռազմավարության մաս են կազմում, խորհուրդ է տրվում ներառել արտաքին աշխարհին ներկայացման այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են.

- Ինստիտուցիոնալ գործունեության վերաբերյալ ոչ զգայուն տվյալների բացահայտում (հետևելով տվյալների առավելագույն բացահայտման սկզբունքներին):
- Գործունեության արդյունքների վերաբերյալ քաղաքացիների աուդիտ:
- Գործունեության ոչ գոհացուցիչ արդյունքների կամ չարաշահումների դեպքում քաղաքացիների կողմից նախաձեռնվող բողոքարկում:

Հաշվետվողականության ոլորտի հզոր պարտավորությունները բացահայտում են

պաշտոնյաների կամ հաստատությունների իրավունքները, պարտականություններն ու գործողությունների հետևանքները: Հաշվետվողականության վերաբերյալ պաշտոնական պարտավորությունները ներառում են չարաշահումների վերաբերյալ պաշտոնական բողոք ներկայացնելու միջոցները և վնասների փոխհատուցումը: Լավ պարտավորությունների օրինակ կարող են հանդիսանալ.

- Տեղեկատվության հասանելիությունը սահմանափակելու վերաբերյալ բողոքների ներկայացման ընթացակարգի բարելավում կամ հիմնում:
- Արդարադատության հասանելիության բարելավումը՝ արդարադատության մեխանիզմները ֆինանսապես ավելի մատչելի, ավելի արագ կամ օգտագործման համար ավելի հեշտ դարձնելով:
- Հանրության կողմից արդարադատության մեխանիզմների ընկալման բարելավելով:
- Հանրության կողմից ներկայացվող բողոքների գործընթացին հետևող համակարգի ստեղծում (ինչպես, օրինակ, ոստիկանության կամ հակակոռուպցիոն մարմնի թեժ գծերով ստացված դեպքերի քննության ընթացքին հետևող համակարգչային ծրագիր):

Հաշվետվողականության բարելավմանը միտված ներկայացվող այն պարտավորությունը, որը նախատեսում է միայն տեղեկատվության կամ տվյալների տրամադրում՝ առանց ներկայացնելու այն մեխանիզմները կամ ազդեցության եղանակները, որոնց միջոցով այդ տեղեկատվությունը հանգեցնում է որոշակի հետևանքների կամ փոփոխության, **չի դասակարգվի** որպես հաշվետվողականության ոլորտի պարտավորություն: Լրացուցիչ տեղեկատվության համար տես <http://bit.ly/1oWPXdl> էջը:

Տեխնոլոգիաները և նորարարությունը՝ հանուն թափանցիկության և հաշվետվողականության

ԲԿԳ-ն ձգտում է մեծացնել տեխնոլոգիաների և նորարարության օգտագործումը պետական կառավարման գործում հանրության ներգրավման նպատակով: Մասնավորապես, տեխնոլոգիաների և նորարարության միջոցով թափանցիկությունը

և հաշվետվողականությունը բարելավող պարտավորությունները պետք է.

- Խթանեն նոր այնպիսի տեխնոլոգիաների օգտագործումը, որոնք տեղեկատվությունը տարածելու, հանրության մասնակցությունը և համագործակցությունը բարելավելու հնարավորություններ են ստեղծում:
- Հանրությանն ավելի շատ տեղեկատվություն տրամադրեն, որպեսզի մարդիկ կարողանան հասկանալ, թե ինչ է անում իրենց կառավարությունը և ազդեն որոշումների կայացման վրա:
- Աշխատեն նվազեցնել այդ տեխնոլոգիաների օգտագործման հետ կապված ծախսերը:
- Ի լրումն՝ տեխնոլոգիաները և նորարարությունը թափանցիկությանը և հաշվետվողականությանը նպաստող պարտավորություններ կարող են դիտարկվել նրանք, որոնք.
- Քաղաքացիների իրավունքներն ընդլայնելու և կառավարության գործունեության թափանցիկությունը բարելավելու ուղղությամբ նոր տեխնոլոգիաների օգտագործումն ընդարձակելու նպատակով քաղաքացիական հասարակությանը և գործարար հանրությանը ներգրավում են արդյունավետ մեխանիզմների և նորարարական մոտեցումների բացահայտման աշխատանքներին:
- Նպաստում են տեխնոլոգիաները թափանցիկության և հաշվետվողականության նպատակով օգտագործելու կառավարության և քաղաքացիների ջանքերին:
- Կառավարության աշխատակիցներին և քաղաքացիներին միանման հնարավորություններ են ընձեռում նոր տեխնոլոգիաների օգտագործման գործում:

Էլեկտրոնային կառավարման ոչ բոլոր բարեփոխումներն են բարելավում կառավարության գործունեության թափանցիկությունը: Երբ կառավարությունն ստանձնում է էլեկտրոնային կառավարման հետ կապված պարտավորություն, պետք է մանրամասնել, թե ինչպես է այն բարելավում տեղեկատվության հասանելիությունը, հանրային մասնակցությունը կամ հանրության առաջ հաշվետվողականությունը:

Արձանագրելով, որ բաց կառավարության հետ կապված պարտավորությունների կատարումը երբեմն երկարաժամկետ գործընթաց է, կառավարություններն իրենց պարտավորությունները պետք է լրացնեն ժամանակացույցերով և ուղենիշերով, որոնք, հնարավորության դեպքում, պետք է նշեն յուրաքանչյուր տարվա անելիքները: Այս հաշվետվությունը ներկայացնում է գործողությունների ծրագրում երկրի կողմից ներառված պարտավորությունների մանրամասները և վերլուծում է առաջին տարում դրանց արդյունքները:

ԱՀՄ հետազոտության ընթացքում օգտագործվող բոլոր ցուցանիշներն ու եղանակներն առկա են ԱՀՄ ընթացակարգերի ուղեցույցում (տես՝ <http://www.opengovpartnership.org/about/about-irm> կայքէջը): Մեկ հանգամանք՝ «աստղիկի արժանացած պարտավորությունները», ավելի խորը բացատրության կարիք ունի, քանի որ այն առանձնակի հետաքրքրում է ընթերցողներին և շատ կարևոր է ԲԿԳ-ին միացած երկրների մրցակազմում: Աստղիկի արժանացած պարտավորությունները դիտարկվում են որպես ԲԿԳ շրջանակներում ստանձնած օրինակելի պարտավորություններ: Աստղ ստանալու համար պարտավորությունը պետք է բազմաթիվ պահանջներ բավարարի.

1. Պետք է այնքան հստակ լինի, որ հնարավորություն տա կարծիք ձևավորել դրա հնարավոր ազդեցության մասին: Աստղիկի արժանացած պարտավորությունները պետք է «միջին» կամ «բարձր» հստակության աստիճան ունենան:
2. Պարտավորության ձևակերպումը պետք է հստակեցնի, թե ինչքանով է այն տեղին կառավարությունը բաց դարձնելու հարցում: Մասնավորապես, այն պետք է համապատասխանի տեղեկատվության հասանելիության, հանրային մասնակցության և հանրության առջև հաշվետվողականության ԲԿԳ արժեքներից մեկին:
3. Ամբողջությամբ իրականացվելու դեպքում պարտավորությունը կարող է ունենալ «չափավոր» կամ «տրանսֆորմատիվ» ազդեցություն:
4. Վերջապես, գործողությունների ծրագրի իրականացման շրջանում պարտավորության

կատարումը պետք է զգալի առաջընթաց արձանագրի, կատարման առումով դասակարգվելով որպես «զգալի չափով կատարված» կամ «կատարված»:

Հաշվի առնելով վերը նշված չափանիշները՝ Հայաստանի գործողությունների ծրագիրը չի ներառել աստղիկի արժանացած պարտավորություններ:

Կարևոր փոփոխություն

Պետք է ուշադրություն է դարձնել այն հանգամանքին, որ 2015թ. սկզբում ԱՀՄ-ն թարմացրել է պարտավորություններին աստղ շնորհելու չափանիշները, որպեսզի բարձրացնի ԲԿԳ շրջանակներում ստանձնած օրինակելի պարտավորություններին ներկայացվող պահանջները: Նախկինում գործող չափանիշներով պարտավորությունը աստղ էր ստանում, եթե այն չափելի էր, իր ձևակերպմամբ ամբողջությամբ համապատասխանում էր ԲԿԳ արժեքների չափանիշներին, կարող էր ունենալ «չափավոր» կամ «տրանսֆորմատիվ» ազդեցություն և «զգալի չափով կատարված էր» կամ «կատարված էր»: Նախկինում գործող չափանիշներով Հայաստանի գործողությունների ծրագիրը չէր ներառի աստղիկի արժանացած պարտավորություններ:

Պարտավորությունների ընդհանուր վերլուծությունը

Գործողությունների ծրագիրն անդրադառնում է մի շարք ոլորտների՝ հանքարդյունաբերության թափանցիկությանը (պարտավորություն 2), առողջապահության (պարտավորություն 3) և կրթության (պարտավորություն 9) վերաբերյալ ֆինանսական տեղեկատվության հասանելիությանը: Որոշ պարտավորություններ առաջին գործողությունների ծրագրում ներառված պարտավորությունների շարունակությունն էին, ինչպես, օրինակ, բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերի (պարտավորություն 4) և տեղեկատվության ազատության վերաբերյալ պետական պաշտոնյաների ուսուցումների (պարտավորություն 10) վերաբերյալ պարտավորությունները: Գործողությունների ծրագիրը ներառում էր նաև նոր պարտավորություններ, ինչպես, օրինակ, պետական գնումների բողոքարկման

խորհրդի (պարտավորություն 5) և ավագանիների նիստերի հեռարձակման (պարտավորություն 11) վերաբերյալ պարտավորությունները:

Կառավարության կողմից առաջարկված որոշ պարտավորությունների դեպքում չէին նշվել քաղաքացիական հասարակության շահագրգիռ կառույցներ, ինչը դժվարացրել է այդ պարտավորությունների վերլուծությունը, ինչպես, օրինակ, առողջապահության ոլորտի ֆինանսական պորտալի (պարտավորություն 3) և համայնքային միկրոհարցումների (պարտավորություն 6) վերաբերյալ պարտավորությունների դեպքում: ԲԿԳ ԱՀՄ հետազոտողը չի կարողացել համապատասխան ոլորտներում գործող ՀԿ-ներից ստանալ այս պարտավորությունների կատարման վերաբերյալ այլընտրանքային կարծիքներ:

Որոշ ՀԿ-ների կարծիքով գործողությունների ծրագիրը հավակնոտ չէ:

Որոշ ՀԿ-ներ այն կարծիքին են, որ կառավարությունը մերժել է ավելի հավակնոտ պարտավորությունների ներառումը գործողությունների ծրագրում, որոնք անդրադառնում էին տարբեր ոլորտներում առկա հիմնական խնդիրներին, ինչպես, օրինակ, պետական գնումների և ընտրությունների վերաբերյալ բազմաթիվ առաջարկություններ: Օրինակ՝ համաձայն կառավարության կողմից ստացված առաջարկությունների ամփոփաթեթի, որը հասանելի է [http://ogp.am/u_files/file/Chyndunman%20ampopatert\(1\).pdf](http://ogp.am/u_files/file/Chyndunman%20ampopatert(1).pdf) կայքէջում, ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի կողմից ներկայացված փաթեթում ներառվել է մեկ անձից կատարվող գնումները սահմանափակելու պարտավորություն ստանձնելու առաջարկությունը: Սակայն, կառավարությունը մերժել է այս առաջարկությունն այն հիմնավորմամբ, որ դրա համար օրենքում հարկավոր է փոփոխություն կատարել: Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի հրապարակումները գնումների գործընթացի բարելավմանը միտված առաջարկություններ են պարունակում: Սակայն, կառավարությունը նախընտրել է ստանձնել ավելի թեթև պարտավորություններ, ինչպիսիք են համայնքային միկրոհարցումները, որը ՀԿ-ների կողմից չի նշվել որպես առաջնահերթություն:

Պարտավորությունները

1. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի կողմից հավաքագրված տվյալների թվայնացում և հրապարակում

Պարտավորության ձևակերպումը

«Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ում հավաքագրվող հանրապետության տարածքում կատարված ընդերքի երկրաբանական ուսումնասիրությունները, ինչպես նաև օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման ընթացքում ստացված երկրաբանական և այլ տեղեկատվությունը՝ համապատասխան փաստաթղթերի (տեղեկանքների, հաշվետվությունների, գծագրական նյութերի և այլն) տեսքով պահվում է թղթային կրիչների միջոցով, ինչը սահմանափակում է երկրաբանական տեղեկատվության հասանելիությունը հանրության համար:

Նախատեսվում է ամբողջությամբ թվայնացնել ֆոնդում առկա տեղեկատվական բազան՝ միաժամանակ ապահովելով նոր ստացվող նյութերի (քարտեզներ, ֆինանսական և ոչ ֆինանսական հաշվետվություններ, այլ փաստաթղթեր) թվայնացումը:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է թվայնացնել օգտակար հանածոների մոտ 750 հանքավայրի և 600 հանքերևակման վերաբերյալ կազմված շուրջ 12,000 երկրաբանական հաշվետվություն և 8,000 միավոր քարտեզագրական և գծագրական փաթեթ, ստեղծել ինտերնետ կայք, որում զետեղված կլինի ամբողջ նյութը (PDF, JPG, EXEL և այլ ֆորմատներով)՝ գործածելով տեղեկատվության որոնելիության դյուրինության սկզբունքը: Ընդ որում՝ կայքում տեղադրվող նյութերի ուսումնասիրության դյուրինությունն ապահովելու համար կստեղծվի ՀՀ ինտերակտիվ քարտեզ և համապատասխան նյութերը կամրակցվեն ՀՀ համապատասխան տարածքներին: Վերոնշյալ ինտերնետ կայքէջում տեղեկատվություն կհրապարակվի նաև օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքօգտագործման իրավունքների մասին, օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության տրամադրված ընդերքօգտագործման իրավունքների մասին, ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքօգտագործման իրավունքների մասին և մետաղային օգտակար հանածոների քարտեզը, որն այժմ տեղադրված հրապարակվում է ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կայքում (<http://www.minenergy.am>):

Այսպիսով, բարելավվելու է տեղեկատվության դյուրին հասանելիությունը հանրությանը:

Փուլերը

1. Թվայնացնել ֆոնդի առնվազն 15-25%-ը, ստեղծել նաև ինտերնետ կայք և արդեն իսկ թվայնացված տեղեկատվությունը տեղադրել կայքում
2. Ուսումնական աշխատանքներ ֆոնդի համապատասխան 2-4 աշխատակցի հետ (թվայնացմանը զուգահեռ)
3. Թվայնացնել ֆոնդի 100%-ը
4. Կկազմակերպվի ծրագրի վերաբերյալ հանրային իրազեկման արշավ, այդ թվում՝ բուկլետների տպագրություն և բաժանում, կայքի շնորհանդես համապատասխան շահագրգիռ մասնակիցներով և այլ միջոցառումներ
5. Նոր ստացված երկրաբանական և այլ տեղեկատվության շարունակական թվայնացում

Հիմնական պատասխանատուն՝

ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն

Աջակցող կազմակերպություններ՝ չկան

Սկիզբը՝ 2014թ. դեկտեմբեր Ավարտը՝ 2016թ. դեկտեմբեր

Պարտավորության կատարման վերլուծություն	Կոնկրետությունը				Համապատասխանությունը ԲԿԳ արժեքների պահանջներին				Հնարավոր ազդեցությունը				Կատարման աստիճանը							
	Գոյություն չունի	Ցածր	Միջին	Բարձր	Տեղեկատվության հասանելիությունը	Հանրային մասնակցությունը	Հանրության առջև հաշվետվողականությունը	Տեխնոլոգիաները և նորարարությունը հանրության հիմնական թափանցիկության և հաշվետվողականության	Գոյություն չունի	Փոքր	Չափավոր	Տրանսֆորմատիվ	Չսկսված	Սահմանափակ չափով կատարված	Զգալի չափով կատարված	Կատարված				
Ընդհանուր			X		X			X			X		X							
1. Թվայնացնել տեղեկատվությունը՝ այն հասանելի դարձնելով ինտերնետային կայքի միջոցով			X		X			X			X		X							
2. Կրթել անձնակազմին			X		Պարզ չէ					X			X							
3. Թվայնացնել ֆոնդի 100%-ը			X											X		X				
4. Հանրային իրազեկում		X												X		X				
5. Թվայնացնել երկրաբանական և մնացած տեղեկատվությունը		X											X			X				

Ինչ է տեղի ունեցել

Այս պարտավորությունը նպատակ է հետապնդում թվայնացնել «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ում (այսուհետ՝ ֆոնդ) առկա տվյալները, որպեսզի դրանք դառնան երկրաբանական տեղեկատվության հանրությանը հասանելի պահոց, ներառելով տեղեկատվություն արդյունահանման իրավունքների, երկրաբանահետախուզական հետազոտությունների, հանքային նյութերի քարտեզի, ինչպես նաև բնական պաշարների արդյունահանման

հետ կապված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Այս հաշվետվությունը գրելու պահին կառավարությունը չէր սկսել պարտավորության կատարումը: ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների ընդերքի վարչության պետը հայտնել է, որ միջոցառումներ չեն իրականացվել: Նախարարությունը ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության հետ բանակցում է այս ծրագրի իրականացման համար ֆինանսական աջակցություն ստանալու շուրջ:

Ինչ ազդեցություն է ունեցել

ԱՄՀ հետազոտողի կարծիքով այդ պարտավորության կատարման ազդեցությունը կլինի չափավոր: Հանքերի ու բնական պաշարների վերաբերյալ տեղեկատվությունը հայ հանրությանը հասանելի դարձնելը դրական քայլ կլինի հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկության ընդլայնման ուղղությամբ:

Երկրաբանական տվյալների հավաքագրումը սկսվել է դեռևս 1930-ական թվականներին: Ֆոնդը հիմնադրվել է 2002¹թ.-ին և առևտրային գործունեություն ծավալելու իրավասություն ունի: Նախկինում ֆոնդը գտնվում էր բնապահպանության նախարարության ենթակայության ներքո: 2008թ.-ից ի վեր, ՀՀ կառավարության որոշմամբ², այն գործում է ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության ենթակայության ներքո: 2012թ. ՀՀ կառավարությունը որոշում ընդունեց³, որով կարգավորվում է երկրաբանական տեղեկատվության պահպանությունը: Ֆոնդի գործունեության վերաբերյալ տեղեկատվություն ձեռք բերել չի հաջողվել: Ֆոնդի անունով էջ գոյություն ունի ֆեյսբուք սոցիալական ցանցում, սակայն այդ էջում տեղեկատվություն տեղադրված չէ⁴:

ՔՀԿ հանրության ներկայացուցիչները տարբեր կարծիքներ ունեն այս պարտավորության վերաբերյալ: Որոշ ՀԿ-ներ այն դիտարկում են հավակնոտ, այն դեպքում երբ մնացածները կարծում են, որ պարտավորությունը կոնկրետ է, սակայն ավելի շատ տեխնիկական բնույթի պարտավորություն է, քան սկզբունքային փոփոխություն նախատեսող): Բնապահպանության ոլորտում գործունեություն ծավալող ՀԿ-ները նշել են, որ ֆոնդում առկա ամենից արժեքավոր տեղեկատվությունը հանքային պաշարների ծավալների գնահատականների վերաբերյալ քարտեզներն են, որոնք ֆոնդը վաճառում է: Ինչքան ճշգրիտ է քարտեզը, այնքան բարձր է դրա գինը:

ՀԿ-ները հուսով են, որ խոստացված կայքէջը կունենա.

- ինտերակտիվ քարտեզներ (հետազոտված տարածքների սահմաններով),

- տարբեր վայրերում տարբեր հանքանյութերի գնահատված պաշարների (այդ թվում՝ հարակից հանքանյութերի) վերաբերյալ տեղեկատվություն,
- պետության հաշվեկշռում արդեն իսկ հաշվառված հանքանյութերի, երկրաբանական հետազոտությունների և ուսումնասիրությունների արդյունքների (յուրաքանչյուր հանքավայրում հանքանյութի գնահատված պաշարներով) վերաբերյալ տեղեկատվություն:

ՀԿ-ները կարծում են, որ pdf և jpg ձևաչափերով ֆայլերը ինֆորմատիվ չեն և տվյալների շտեմարանը պետք է ներառի տեխնոլոգիապես (համակարգչի օգնությամբ) ընթեռնելի թվայնացված տեղեկատվություն:

ՀԿ հանրությունն արդեն իսկ ջանքեր է գործադրել նման տվյալներ պարունակող տեղեկատվական ռեսուրսներ ստեղծելու ուղղությամբ: Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնն ստեղծել է ինտերակտիվ քարտեզ⁵, որտեղ նշված են ՀՀ-ում առկա հանքերը (մարզը և համայնքը), հանքի տեսակը (մետաղական կամ ոչ մետաղական), հանքի կարգավիճակը (գործող կամ չգործող), տարածքը հեկտարներով և հանքը շահագործողը:

Հետագա քայլեր

ԱՀՄ հետազոտողն առաջարկում է.

- Կառավարությունը կարող է ավելացնել այդ պարտավորության կատարման ուղղությամբ իր ջանքերը և ակտիվորեն համագործակցել այս ոլորտում գործող ՀԿ-ների, օրինակ՝ Թրանսփարենսի ինթերնեշնլի հետ:
- ՀՀ գործողությունների ծրագիրը կշահի, եթե կառավարությունը հստակեցնի, թե ինչ տեղեկատվություն է պատրաստվում հասու դարձնել ինտերնետային կայքի միջոցով: Ինտերնետային կայքում տեխնոլոգիապես (համակարգչի կողմից) ոչ ընթեռնելի ձևաչափերով նկարների տեղադրումը նվազ օգտակար է շահառուների համար:

¹ ՀՀ կառավարության 2002 թվականի հոկտեմբերի 31-ի №1758-Ն որոշում «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին:

² ՀՀ կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի №653-Ն որոշում Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարությանը նոր լիազորություններ վերապահելու մասին:

³ ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի №1414-Ն Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին երկրաբանական տեղեկատվության պահպանության կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 6-ի №669-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին:

⁴ [https://www.facebook.com/pages/%D5%80%D5%80-%D4%B7-%D6%87-%D4%B2%D5%8A-%D5%B6%D5%A1%D5%AD%D5%A1%D6%80%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%80%D5%A1%D5%B6%D6%80%D5%A1%D5%BA%D5%A5%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%A5%D6%80%D5%AF%D6%80%D5%A1%D5%A2%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D6%86%D5%B8%D5%B6%D5%A4-%D5%8A%D5%88%D4%B1%D4%BF/107847579309701?sk=info](https://www.facebook.com/pages/%D5%80%D5%80-%D4%B7-%D6%87-%D4%B2%D5%8A-%D5%B6%D5%A1%D5%AD%D5%A1%D6%80%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%80%D5%A1%D5%B6%D6%80%D5%A1%D5%BA%D5%A5%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%A5%D6%80%D5%AF%D6%80%D5%A1%D5%A2%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D6%86%D5%B8%D5%B6%D5%A4-%D5%8A%D5%88%D4%B1%D4%BF/107847579309701)

⁵ Թրանսփարենսի ինթերնեշնլ: Հայաստանի հանքավայրերի շտեմարան: Հասու է <http://transparency.am/hy/assets/mines> կայքէջում:

2. Հանքարդյունաբերության թափանցիկության ապահովում

Պարտավորության ձևակերպումը

Հանքարդյունաբերական ոլորտում առկա իրավիճակը չի բավարարում պետության և հասարակության կողմից ներկայացվող ժամանակակից պահանջներին. մասնավորապես՝ ծախսերի և եկամուտների վերաբերյալ հանքարդյունաբերական ընկերությունների և պետության հաշվետվողականության մակարդակը բարելավման կարիք ունի:

Նախաձեռնությանը միանալը կբարձրացնի ոլորտի թափանցիկությունը, կնպաստի հաշվետվողականության բարձր մակարդակի ապահովմանը, ինչպես նաև ներդրումային միջավայր բարելավմանը:

Փուլերը

Արդյունահանող արդյունաբերության թափանցիկության նախաձեռնությանը (EITI) անդամակցելու գործընթացի մեկնարկ, մասնավորապես՝ քննարկումների, բանակցությունների անցկացում և նախապատրաստական անհրաժեշտ այլ աշխատանքների իրականացում

Հիմնական պատասխանատուն՝

ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն

Աջակցող կազմակերպություններ՝

ՀՀ արտաքին գործերի նախարարություն, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն

Սկիզբը՝ 2015թ. հուլիս

Ավարտը՝ 2016թ. դետեմբեր

Պարտավորության կատարման վերլուծություն	Կոնկրետությունը				Համապատասխանությունը ԲԿԳ արժեքների պահանջներին				Հնարավոր ազդեցությունը				Կատարման աստիճանը			
	Գոյություն չունի	Ցածր	Միջին	Բարձր	Տեղեկատվության հասանելիությունը	Հանրային մասնակցությունը	Հանրության առջև հաշվետվողականությունը	Տեխնոլոգիաները և նորարարությունը հանուն թափանցիկության և հաշվետվողականության	Գոյություն չունի	Փոքր	Չափավոր	Տրանսֆորմատիվ	Չսկսված	Սահմանափակ չափով կատարված	Զգալի չափով կատարված	Կատարված
			X		X	X								X		

Ինչ է տեղի ունեցել

Պարտավորության նպատակն է Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանը (EITI/ԱՃԹՆ) միանալու գործընթացը սկսելու և բանակցելու ճանապարհով բարելավել հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկությունը: ԱՃԹՆ-ն սահմանում է բնական պաշարների կառավարման ոլորտում բաց և հաշվետու գործունեության միջազգային չափանիշները:

2015թ. փետրվարին կառավարությունն ստեղծեց Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ¹: Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի անդրանիկ նիստի² ժամանակ ՀՀ կառավարությունը հայտարարեց ԱՃԹՆ միանալու պատրաստակամության մասին: ՀՀ վարչապետը հայտարարեց, որ ինքն անձամբ է հետևելու անդամակցության գործընթացը բարեհաջող ավարտին հասցնելուն և ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար – նախարարին հանձնարարեց համակարգել գործընթացները: ՀՀ կառավարությունը գործընթացը կազմակերպելու համար ֆինանսավորում ստանալու շուրջ բանակցում է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության հետ:

Այն երկրները, որոնք ցանկանում են միանալ Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանը (EITI/ԱՃԹՆ), մինչև ԱՃԹՆ անդամության թեկնածու դառնալու համար անհրաժեշտ դիմում ներկայացնելը պետք է կատարեն չորս հետևյալ քայլերը³.

1. Կառավարությունը պետք է ԱՃԹՆ-ին միանալու իր մտադրության վերաբերյալ ոչ երկիմաստ հայտարարություն հրապարակի:
2. Կառավարությունը պետք է ԱՃԹՆ պահանջների ներդրման գործընթացի ղեկավարումը հանձնարարի որևէ կոնկրետ բարձրաստիճան պաշտոնյայի:
3. Կառավարությունը պետք է քաղաքացիական հասարակության և ոլորտում գործող ընկերությունների հետ աշխատելու պարտավորություն ստանձնի և ձևավորի ԱՃԹՆ ներդրումը վերահսկող և տարբեր շահառուներից կազմված խումբ:
4. Տարբեր շահառուներից կազմված խումբը պետք է ունենա ԱՃԹՆ խորհրդի կողմից սահմանված հաշվետվությունների ներկայացման

և վավերացումների վերջնաժամկետների հետ համաձայնեցված աշխատանքային պլան:

Վերը նշված քայլերը կատարելուց հետո կառավարություն պետք է ԱՃԹՆ խորհրդին ներկայացնի անդամության թեկնածու դառնալու ցանկության վերաբերյալ դիմումը:

Պարտավորությունը կատարվել է սահմանափակ չափով, քանի որ ՀՀ կառավարությունը վերը նշված պահանջվող 4 քայլերից կատարել է առաջին երկուսը: Հայաստանի հանքարդյունահանող ոլորտը դեռևս թափանցիկ չէ, և Հայաստանի ՔՀԿ հանրության հետ քննարկումներ չեն եղել:

Ինչ ազդեցություն է ունեցել

Այս պարտավորության ձևակերպումը չի պարունակում դրա կատարման փուլերի և ժամկետների վերաբերյալ չափելի տեղեկատվություն: Պարտավորության ներկա ձևակերպումը ԱՃԹՆ-ին անդամակցություն նախատեսող, Թրանսփարենսի ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոնի կողմից առաջարկված պարտավորության տեքստի խմբագրված տարբերակն է: Չնայած պարտավորության վերնագիրն ասում է, որ կառավարությունը պատրաստվում է ապահովել հանքարդյունաբերության թափանցիկությունը, պարտավորության տեքստը չի մանրամասնում, թե ինչպես է դա արվելու: Այդ առումով, հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկություն ապահովելու կառավարության նպատակներն ու մտադրությունները պարզ չեն:

ԱՃԹՆ անդամության թեկնածու երկիր դառնալու համար ՀՀ կառավարությունը դեռևս պետք է ստեղծի բազմաթիվ շահառուներից կազմված աշխատանքային խումբ և մշակի աշխատանքային ծրագիր:

Համաձայն ԲԿԳ գործընթացում ներգրավված և այս պարտավորության կատարմամբ հետաքրքրված ՀԿ-ների՝ ՀՀ կառավարությունը ՔՀԿ հանրության հետ քննարկում չի կազմակերպել: Կառավարության ներկայացուցիչների համաձայն՝ այս փուլում ՔՀԿ հանրության հետ քննարկումներ կազմակերպելու անհրաժեշտություն չի եղել, քանի որ ծրագրում են նման քննարկումներ ունենալ ԱՃԹՆ-ի ներդրման գործընթացը վերահսկող տարբեր շահառուներից կազմված խումբը ստեղծելուց հետո: Խորհրդակցությունների գործընթացը թափանցիկության կարիք ունի: Չնայած

կառավարության ներկայացուցիչները նշել են Համաշխարհային բանկի և ԱՃԹՆ ներկայացուցիչների հետ հանդիպումների մասին, այդ հանդիպումների վերաբերյալ հանրային տեղեկատվություն առկա է:

ՀՀ հանքարդյունաբերության ոլորտի գործունեության թափանցիկության խնդիրը մշտապես գտնվում է ՔՀԿ հանրության ուշադրության կենտրոնում: ՀԿ-ների ներկայացուցիչների կարծիքով պարտավորությունը հավակնոտ կլինի, եթե դրա կատարման վերջնական արդյունքը պարզ լինի: Եթե կառավարությունը կատարի ԱՃԹՆ անդամ դառնալու հետ կապված բոլոր քայլերը, պարտավորությունը կարող է տրանսֆորմատիվ ազդեցություն ունենալ:

2014թ. բնապահպանական և բնօգտագործման վճարների մեծությունը կազմել է 2969,8 մլն դրամ⁴ (մոտավորապես 7,3 մլն ԱՄՆ դոլար կամ համախմբված բյուջեի եկամուտների մոտավորապես 0,25 տոկոսը), իսկ բնական պաշարների օգտագործման և շրջական միջավայրի պահպանման համար վճարները կազմել են 35177,5 մլն դրամ⁵ (մոտավորապես 87 մլն ԱՄՆ դոլար կամ համախմբված բյուջեի եկամուտների մոտավորապես 3 տոկոսը): Սև մետաղները կազմել են Հայաստանի արտահանման 9,3 տոկոսը (մոտավորապես 110 մլն ԱՄՆ դոլար), պղինձը և պղնձե իրերը՝ 6,3 տոկոսը (մոտավորապես 75,4 մլն ԱՄՆ դոլար), իսկ ալյումինն ու դրանից իրերը 7,8 տոկոսը (մոտավորապես 93,3 մլն ԱՄՆ դոլար):

Հանքարդյունաբերությունն ուղղակի ազդեցություն ունի բնակչության առողջության վրա: «Առավոտ» օրաթերթում⁶ հրապարակված հոդվածում Հայաստանի ամերիկյան համալսարանի հետազոտողները նշել են, որ իրենց հետազոտությունները վկայում են, որ Ախթալայի երեխաների 80 տոկոսի և Ալավերդիում արյան ստուգում անցած երեխաների 72 տոկոսի մոտ կապարի քանակությունը գերազանցել է թույլատրելի շեմը: Մեկ այլ հրապարակման համաձայն Ալավերդիում հետազոտություն անցած 550 կանացից միայն 85-ն է առողջ եղել:

Հետագա քայլեր

ԱՀՄ հետազոտողն առաջարկում է.

- Արդյունահանող արդյունաբերության վերաբերյալ իմաստալից քննարկում ունենալու համար կառավարությունը կարող է ՔՀԿ և գործարար հանրության մասնակցությամբ քննարկումների հարթակ ձևավորել, որը կբացահայտի ոլորտի թափանցիկությունը և հաշվետվողականությունը բարելավելուն և ԱՃԹՆ պահանջներին համապատասխանեցնելուն խոչընդոտող հանգամանքները: Այդ հարթակի գործունեությունը պետք է լինի թափանցիկ, իսկ քննարկումների վերաբերյալ տեղեկատվությունը պետք է հասանելի լինի հրապարակվող արձանագրությունների միջոցով:
- Կառավարությունը նաև պետք է ԱՃԹՆ անդամակցության գործընթացի և Հայաստանի հանրության և առանձին համայնքների վրա դրա ազդեցության վերաբերյալ հանրային իրազեկման միջոցառումներ նախաձեռնել:
- Այս պարտավորության կատարումը ՔՀԿ հանրության կողմից լուրջ ներդրում է ենթադրում: ՀԿ-ները նույնպես պետք է լուրջ ջանքեր գործադրեն արհեստավարժ և կարող շահառուների այնպիսի խումբ ձևավորելու համար, որն այս պարտավորությունը կատարելու նպատակով կկարողանա աշխատել կառավարության և հանքարդյունաբերության ոլորտի ներկայացուցիչների հետ: ՔՀԿ հանրությունը պետք կազմակերպի և ավելի նպատակային դարձնի իր ջանքերը մինչև 2016թ.-ի ապրիլ աշխատանքային ծրագիր ունենալու համար: Միայն ԱՃԹՆ-ին անդամակցելով ՀՀ կառավարությունը կկատարի հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկությունն ապահովելու վերաբերյալ իր հանձնարարությունը:

¹ ՀՀ կառավարության 2015 թվականի փետրվարի 19-ի №165-Ն որոշում Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ և փորձագիտական հանձնախումբ ստեղծելու, խորհրդի կազմը, խորհրդի փորձագիտական հանձնախմբի և Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժնի գործունեության կարգը հաստատելու մասին

² Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի անդամիկ նիստը կայացել է 2015թ.-ի հուլիսի 28-ին: Տեղեկատվությունը հասու է <http://gov.am/en/news/item/8039/> էջում:

³ ԱՃԹՆ ստանդարտ: ԱՃԹՆ միջազգային քարտուղարություն: 11 հուլիսի 2013թ. Սեմ Բարթելթի և Դիվե Ռոգանի խմբագրությամբ: Հասու է <http://eiti.org/document/standard> կայքէջում:

⁴ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն: Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2015: Հասում է <http://armstat.am/file/doc/99493638.pdf> կայքէջում:

⁵ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն: Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2015: Հասում է <http://armstat.am/file/doc/99493848.pdf> կայքէջում:

⁶ Առավոտ օրաթերթ: Հանքարդյունաբերությունը Հայաստանում հանգեցնում է բնապահպանական և առողջապահական խնդիրների: Հասու է <http://www.aravot.am/2015/06/24/585756/> կայքէջում:

3. Առողջապահության ֆինանսավորման տեղեկատվության հանրային մատչելիության ապահովում

Պարտավորության ձևակերպումը

Առկա է մեծ բաց առողջապահության ֆինանսավորման համակարգում գոյություն ունեցող զարգացումների վերաբերյալ, քաղաքացիները չգիտեն և չեն կարողանում կառավարել իրենց իրավունքները առողջապահության համակարգի մի շարք օղակներում՝ այդ թվում հիվանդանոցային բուժօգնություն ստանալիս և առողջության առաջնային պահպանման ծառայություններ ստանալու ընթացքում: Բուժօգնության կազմակերպման և ֆինանսավորման որոշ չափորոշիչներում նկարագրված են այդ գործընթացները, սակայն չկան այդ հարաբերությունների զարգացումները ցուցադրող դինամիկ և թափանցիկ համակարգեր:

Ստեղծել առողջապահության համակարգի ֆինանսական պորտալ, որտեղ բնակչությունը, մասնագետները և հանրությունը կարող են ստանալ տեղեկատվություն պետության կողմից երաշխավորված ծրագրերի ֆինանսավորման, հիմնական ծառայությունների փաթեթի վերաբերյալ, երբ պետք է պացիենտը վճարի մատուցված ծառայության դիմաց, իսկ երբ՝ ոչ, ինչպես նրանք կարող են ստանալ ռեցեպտներ, որոնք կարող են պետության կողմից երաշխավորված վճարման ենթակա լինել, ֆինանսական և ոչ ֆինանսական հաշվետվություններ և այլնի մասին:.

Փուլերը

Առողջապահության համակարգի ֆինանսական պորտալի ստեղծում

1. Հանրային օգտագործման համար ավելի քան 25 հաշվետվություններ
2. Մասնագիտական շրջաններ՝ շուրջ 1500 օգտվող
3. Հանրության մասով՝ բոլոր ինտերնետ օգտագործողները

Հիմնական պատասխանատուն՝

ՀՀ առողջապահության նախարարություն

Աջակցող կազմակերպություններ՝ չկան

Սկիզբը՝ 2014թ. սեպտեմբեր Ավարտը՝ 2015թ. սեպտեմբեր

Պարտավորության կատարման վերլուծություն	Կոնկրետությունը				Համապատասխանությունը ԲԿԳ արժեքների պահանջներին				Հնարավոր ազդեցությունը				Կատարման աստիճանը			
	Գոյություն չունի	Ցածր	Միջին	Բարձր	Տեղեկատվության հասանելիությունը	Հանրային մասնակցությունը	Հանրության առջև հաշվետվողականությունը	Տեխնոլոգիաները և նորարարությունը համուն թափանցիկության և հաշվետվողականության	Գոյություն չունի	Փոքր	Չափավոր	Տրանսֆորմատիվ	Չսկսված	Սահմանափակ չափով կատարված	Զգալի չափով կատարված	Կատարված
			X		X			X		X				X		

Ինչ է տեղի ունեցել

Կառավարությունն առողջապահության ֆինանսավորման վերաբերյալ այնպիսի կայքէջ ստեղծելու պարտավորություն է ստանձնել, որտեղ օգտվողները կարող են տեղեկատվություն ստանալ անվճար առողջապահական ծառայությունների և առողջապահության ֆինանսավորման վերաբերյալ:

Չնայած կայքէջը դեռևս գտնվում է ձևավորման փուլում, այն զգալի ծավալով տեղեկատվություն է պարունակում (օրինակ՝ պետության կողմից անվճար բժշկական ծառայություններից օգտվելու ուղեգիր ստանալու, բնակչությանը մատուցվող, ներառյալ անվճար և զեղչված գնով ծառայությունների վերաբերյալ, պետական առողջապահական գործակալության 2013թ. հաշվետվությունը, մատուցվող բժշկական ծառայությունների տեսակներն՝ ըստ բժշկական հաստատությունների, և այլն): Հնարավոր է գտնել նաև բժշկական հաստատություններում ստուգումների իրականացման 2014թ. ծրագիրը¹:

Հրապարակումների էջում ներկայացված են Հայաստանի Հանրապետությունում հանրային առողջապահության ոլորտում արդյունքների վրա հիմնված բյուջետավորման համակարգի ներդրման վերաբերյալ հոդվածներ: Սակայն, կայքէջը շատ քիչ տեղեկատվություն է պարունակում Հայաստանում առողջապահական ցուցանիշների վերաբերյալ (ըստ տարածքների, սեռի և տարիքի հիվանդացության կամ մահացության դեպքերի)² ինչը կարող էր մասնագետներին և ՔՀԿ հանրությանն օգնել դիտարկելու կառավարության կողմից տարվող քաղաքականության արդյունավետությունը:

Կառավարությունը չի կազմակերպել այս կայքի վերաբերյալ հանրային իրազեկման միջոցառումներ և հավանական շահառուներին ու օգտագործողներին չի ներկայացրել այս նոր գործիքի հնարավորությունները, ինչի արդյունքում պարտավորությունը դիտարկվել է որպես մասնակիորեն կատարված:

Ինչ ազդեցություն է ունեցել

Պարտավորության ձևակերպումից պարզ չէ, թե առողջապահական կոնկրետ ինչ տեղեկատվություն է լինելու կայքէջում: Կայքէջի օգտակարությունը

պարզ չէ, քանի որ առկա տեղեկատվությունն, ըստ էության, կրկնում է գոյություն ունեցող հարթակներում առկա տեղեկատվությունը, ինչի արդյունքում հնարավոր ազդեցությունը գնահատվել է փոքր: Այս կայքէջում հասու տեղեկատվության մի մասը (օրինակ՝ օրենսդրությունն² ու կառավարության ռազմավարական ծրագրերը³) հասու են նաև ՀՀ առողջապահության նախարարության կայքում:

ՀՀ կառավարությունից ստացված մեկնաբանության համաձայն, այս հարթակը ամբողջացնում է այն տեղեկատվությունը, որը ներկայումս հանրությանը հասանելի է գոյություն ունեցող տարբեր կայքերից: Այն նաև հանրային առողջապահությանը վերաբերող ամբողջ տեղեկատվությունը հասանելի դարձնող մեկ պատուհան է: Հարթակն օգտագործողների համար ավելի հարմար է, քան առանձին-առանձին համացանցային ռեսուրսները և, որ ամենակարևորն է, միասնական ինտերֆեյսը հնարավորություն է ստեղծում կատարելու մեծ ծավալով տեղեկատվության վերլուծություն: Համաձայն կառավարության, կայքէջը հնարավորություն է տալիս տվյալներ ստանալու ըստ տարածաշրջանների, տարիքի, ժամանակաշրջանի և ձևավորել օգտվողների կարիքներին համապատասխան հաշվետվություններ: Այնուամենայնիվ, հետազոտողը կայքէջից չի կարողացել ստանալ ըստ տարածաշրջանների առանձին տարիքային խմբերի քաղաքացիների առողջությանը վերաբերող տեղեկատվություն:

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի (այսուհետ՝ ԻԱԿ) կողմից պատրաստված քաղաքացիական հասարակության զեկույցն⁴ արձանագրել է, որ 2015թ. սեպտեմբերի 10-ի դրությամբ կայքէջում հասու են եղել քիչ թվով հաշվետվություններ: Հաշվետվությունները ներբեռնելու փորձի ժամանակ ԻԱԿ-ը տեխնիկական խնդիրների է առերեսվել:

ԱՀԿ հետազոտողը փորձել է բացել «Ստուգումների և ուսումնասիրությունների ամփոփ արդյունքներ» և «Մշտադիտարկման ամփոփ արդյունքներ» էջերը, սակայն երկու դեպքում էլ բացվել է Պետական առողջապահական գործակալության ստեղծման պատմության վերաբերյալ էջը (<https://www.sha.am/>):

ՔՀԿ-ները նշել են այն հանգամանքը, որ կայքէջը գտնելն այնքան էլ հեշտ չէ, քանի որ իր անվան մեջ

չի ներառում այնպիսի բառ, որը կհուշեր, որ կայքէջն առողջապահության ոլորտին է վերաբերում (օրինակ՝ «medical» կամ «health») և իրենից ներկայացնում է գործակալության անվան անգլերեն հապավումը («SHA» - state health agency):

Հետագա քայլեր

Կառավարությունը կարող է բարելավել այս պարտավորության համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին ու հնարավոր ազդեցությունը՝ ապահովելով, որ ստացվող հաշվետվություններում ներառված և գաղտնիք չպարունակող տեղեկատվությունը (օրինակ՝ անհատների առողջության վերաբերյալ տեղեկատվությունը գաղտնի է) հասանելի լինի ինտերնետային կայքի միջոցով: Ավելին՝ կարևոր է, որպեսզի այդ տեղեկատվությունն օգտակար լինի հանրությանը, ներառյալ՝ գիտական հանրությանը:

Կառավարությունը կարող է բարելավել կայքէջի օգտակարությունը՝ կազմակերպելով դրա ֆունկցիոնալ հնարավորությունների վերաբերյալ հանրային իրազեկման միջոցառումներ, ՀԿ-

ներին, լրատվամիջոցների ներկայացուցիչներին, հետազոտողներին և ուսանողներին ուսուցանելով, թե ինչպես ստանալ տեղեկատվություն⁵ (հիվանդացության և մահացության պատճառների, ըստ տարածաշրջանների, սեռի, տարիքի բուժումների ու վիրահատությունների վերաբերյալ և այլն) և այն օգտագործել ոլորտում տարվող քաղաքականության քննարկումների ժամանակ՝ կառավարությանն օգնելով ոլորտում տարվող քաղաքականությունը ձևավորել՝ հիմնվելով գոյություն ունեցող փաստերի վրա:

Կառավարությունն իր գործունեությունը կբարելավի, եթե կարգավորի պետական տարբեր մարմինների կողմից նոր կայքերի ստեղծման գործընթացը՝ գնահատելով դրանց կարևորությունն ու սահմանելով դրանց կողմից տրամադրվելիք լրացուցիչ տեղեկատվությունը, խուսափելով պետական տարբեր մարմինների կայքէջերում տեղեկատվության կրկնության պրակտիկայից:

¹ ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի փետրվարի 24-ի N*318-Ա հրամանի Հավելված 2 ՀՀ ԱՆ աշխատակազմի պետական առողջապահական գործակալության կողմից բժշկական կազմակերպություններում պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում ցուցաբերված բուժօգնության որակի, պայմանագրով նախատեսված ծավալների վերաբերյալ ներկայացված հաշվետվությունների արժանահավատության և բուժօգնության կազմակերպման իրավիճակի վերաբերյալ 2014 թվականի ստուգումների՝ ըստ բժշկական կազմակերպությունների և ծրագրերի (հասու է <https://www.sha.am/files/plan2014.pdf> կայքէջում)

² Օրինակ, առողջապահության ոլորտը կարգավորող օրենսդրությունը հասու է նաև ՀՀ առողջապահության նախարարության կայքում հետևյալ հասցեով. http://www.moh.am/?section=static_pages/index&id=626

³ Ազգային ծրագրերը, օրինակ՝ առավել բարձր մահացության քերող երեք հիվանդությունների վերաբերյալ, ծխելու դեմ պայքարի, տուբերկուլյոզի դեմ պայքարի, և այլն, հասու են նաև ՀՀ առողջապահության նախարարության կայքէջում հետևյալ հասցեով. http://www.moh.am/?section=static_pages/index&id=627&subID=26

⁴ Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ. 2015. ԲԿԳ Հայաստան. Քաղհասարակության մշտադիտարկման զեկույցը (հասու է http://ogp.am/hy/news/item/2015/09/30/FOICA_monitoring/ կայքէջում)։ Պատրաստվել է ԻԱԿ-ի կողմից ԵԱՀԿ օժանդակությամբ:

⁵ Բաց տվյալների սահմանումը կարելի է գտնել <http://opendatahandbook.org/guide/en/what-is-open-data/>

4. ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերի թափանցիկության ապահովում

Պարտավորության ձևակերպումը

ՀՀ կառավարության կողմից 2011թ. Դեկտեմբերի 15-ի №1835-Ն որոշմամբ հաստատված բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերի հրապարակման ենթակա տվյալների ցանկը հնարավորություն չի ընձեռում լիարժեքորեն թափանցիկ դարձնելու բարձրաստիճան պաշտոնատար և նրանց փոխկապակցված անձանց հայտարարագրերում ներառված գույքի բոլոր գործարքների վերաբերյալ տվյալները: Մասնավորապես, դրանք սահմանափակված են գործարքների գնի շեմերով:

Հանձնաժողովը նախատեսում է վերացնել նման սահմանափակումները և ցանկանում է ընդլայնել հասարակությանը տրամադրվող տվյալների ցանկը և դրանով բարձրացնել հայտարարագրերի մատչելիությունը հասարակության համար:

Փուլերը

1. «ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 15-ի №1835-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և քննարկում շահագրգիռ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ:
2. Նախագծի համաձայնեցում շահագրգիռ գերատեսչությունների հետ և ՀՀ կառավարության որոշման ընդունում:

Հիմնական պատասխանատուն՝

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով (համաձայնությամբ)

Աջակցող կազմակերպություններ՝ ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն

Սկիզբը՝ 2014թ. նոյեմբեր

Ավարտը՝ 2015թ. հունիս

Պարտավորության կատարման վերլուծություն	Կոնկրետությունը				Համապատասխանությունը ԲԿԳ արժեքների պահանջներին				Հնարավոր ազդեցությունը			Կատարման աստիճանը				
	Գոյություն չունի	Ցածր	Միջին	Բարձր	Տեղեկատվության հասանելիությունը	Հանրային մասնակցությունը	Հանրության առջև հաշվետվողականությունը	Տեխնոլոգիաները և նորարարությունը հանուն թափանցիկության և հաշվետվողականության	Գոյություն չունի	Փոքր	Չափավոր	Տրանսֆորմատիվ	Չսկսված	Սահմանափակ չափով կատարված	Զգալի չափով կատարված	Կատարված
			X		X					X						X

Ինչ է տեղի ունեցել

Պարտավորությունը նպատակ ունի բարելավելու բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերի թափանցիկությունը: Կառավարությունը հայտարարագրերի համակարգի բարելավումը դասակարգում է առաջնահերթությունների թվում և դրանց բարելավում է նախատեսում Արևելյան գործընկերության և Եվրոպական խորհրդի աջակցությամբ իրականացվող «Լավ կառավարում և կոռուպցիայի դեմ պայքար» ծրագրի շրջանակներում:

Միջազգային հանրությունը շարունակում է ՀՀ կառավարությանը և ԲՀԿ հանրությանն աջակցել բարձրաստիճան պաշտոնատար անձանց հայտարարագրերի մշտադիտարկման կարողությունների բարելավման գործում: Եվրոպական միության և ԵԱՀԿ կողմից պատրաստված հաշվետվությունը հայտարարագրերի համակարգի բարելավման վերաբերյալ առաջարկություններ է ներառում: ՀՀ կառավարությունը և Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը համագործակցել են «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի և Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի հետ և որոշման նախագիծը հրապարակել են հանրային կարծիք ստանալու նպատակով:

Պարտավորությունը կատարված է: 2015թ. փետրվարի 19-ին կառավարությունը հաստատել է «ՀՀ կառավարության 2015 թվականի փետրվարի 19-ի Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի №1835-Ն և 2011 թվականի դեկտեմբերի 15-ի №1819-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» որոշումը²: Փոփոխությունները վերացրել են ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի №1835-Ն որոշումով նախատեսված հրապարակման ենթակա տվյալների շեմերը: Օրինակ՝ անշարժ գույքի դեպքում վերացվել է 50 միլիոն ՀՀ դրամի, շարժական գույքի դեպքում՝ 7 միլիոն ՀՀ դրամի, ներդրումային գործարքների դեպքում՝ 5 միլիոն ՀՀ դրամի, և փոխառությունների դեպքում՝ 3 միլիոն ՀՀ դրամի շեմերը: Հրապարակման ենթակա գործարքների որոշ շեմեր գոյություն ունեն բարձրաստիճան պաշտոնատար անձի ընտանիքի անդամների (համատեղ ապրող ծնողի և չափահաս ու չամուսնացած զավակների դեպքում) կողմից (անշարժ

գույքի՝ 50 միլիոն ՀՀ դրամ, շարժական գույքի՝ 8 միլիոն ՀՀ դրամ, տրված վարկերի՝ 8 միլիոն ՀՀ դրամ) կատարված գործարքների դեպքում:

Չնայած այս պարտավորության մաս չէր հանդիսանում, սակայն նույն օրը ՀՀ կառավարությունն ընդունել է ևս մեկ՝ №145-Ն որոշումը, որը պետական տարբեր մարմինների տվյալների շտեմարանները հասանելի է դարձնում էթիկայի հանձնաժողովի համար: Այս որոշումը մասնակորեն լուծում է տալիս հայաստանյան ՀԿ-ների մտահոգություններին՝ կապված բարձրաստիճան պաշտոնյաների կողմից ներկայացված տվյալների իսկությունը ստուգելու էթիկայի հանձնաժողովի լիազորությունների հետ: Այդ մտահոգությունների մասին բարձրաձայնվել էին ԲԿԳ շրջանակներում Հայաստանի գործողությունների առաջին ծրագրի կատարման ԱՀՄ ուսումնասիրության ժամանակ: ՀՀ կառավարության №145-Ն որոշումը³ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին իրավունք է տալիս տվյալներ ստանալ մի քանի պետական մարմինների՝ ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ ոստիկանության և անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տեղեկատվական շտեմարաններից:

Չնայած այն հանգամանքին, որ կառավարությունը չի ընդունել №150-Ն որոշման վերաբերյալ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի և Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի առաջարկությունները՝ պատճառաբանելով, որ դրանց մեծ մասը «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ են ենթադրում, ՀԿ-ները ենթաօրենսդրական ակտում կատարված փոփոխությունները դրական քայլ են համարում: ԱՀՄ հետազոտողն արձանագրել է, որ ԱՀՄ առաջընթացի վերաբերյալ 2013թ. հաշվետվության համեմատ, այս պարտավորության կատարման համար պատասխանատու էթիկայի հանձնաժողովը բարելավել է իր գործունեությունը և ավելի հետևողական է բարձրաստիճան պաշտոնատար անձանց հայտարարագրերի հրապարակման գործում: Սակայն, ՀԿ-ները կասկածի տակ են դնում հայտարարագրերում ներառված տեղեկատվության հուսալիությունն ու արժանահավատությունը: Եվրոպական հանձնաժողովի 2014թ. Հաշվետվության⁴ մեջ նշվել է, որ Հայաստանը «որոշ քայլեր է

ծեռնարկել իշխանության վերին մակարդակներում կոռուպցիայի դեմ, սակայն էթիկայի հանձնաժողովի գործունեությունը դեռևս անարդյունավետ է»։ Եվրոպական հանձնաժողովի 2015թ. հաշվետվության համաձայն⁵ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի լիազորություններն ու գործառնություններն ուժեղացման կարիք ունեն։

Ինչ ազդեցություն է ունեցել

ԱՀՄ հետազոտողի կարծիքով, չնայած պարտավորության կարևորությանը, դրա հավանական ազդեցությունը փոքր կլինի։ Եթե այս պարտավորությունը չուղեկցվի հայտարարագրերում ներկայացված տեղեկատվության արժանահավատության ստուգման և կանոնները խախտած պաշտոնյաների դեմ պատիժներ կիրառելու լիազորությանը, ապա այս պարտավորությունը չի հանգեցնի հանրության առջև պաշտոնյաների հաշվետվողականության բարելավմանը։

ՀՀ բարձրաստիճան պաշտոնյաների կողմից հրապարակվող հայտարարագրերը արժանացել են ԲՀԿ հանրության և մամուլի ուշադրությանն ու քննադատությանը⁶։ Տարիներ շարունակ միջազգային հանրությունն ու հայկական մամուլը բարձրաձայնել են բարձրաստիճան պաշտոնատար անձանց բիզնեսում ներգրավվածության մասին։ Եվրոպական հանձնաժողովի 2014թ. հաշվետվությունը նկատում է, որ «ընդհանրապես, քաղաքական իշխանությունն ու տնտեսական շահերը ՀՀ հասարակությունում փոխկապակցված են, ինչը որոշումների կայացման ժամանակ հանգեցնում է ոչ թափանցիկության»։ Մամուլի հրապարակումները նշում են, որ 2012թ.-ին հիմնադրվելուց ի վեր էթիկայի հանձնաժողովը չի նշել էթիկայի նորմերը խախտած և իր պաշտոնական դիրքի չարաշահմամբ անօրինական կերպով հարստացած որևէ բարձրաստիճան պաշտոնյայի անուն⁷։

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (այսուհետ՝ ՏՀԶԿ) կողմից ստեղծված Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլի հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիտորինգի 3-րդ փուլի հաշվետվության⁸ մեջ նշվում է, որ «բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի հայտարարագրման նոր համակարգը ներդրվել է, սակայն հայտարարագրերում ներկայացվող

տեղեկատվության շրջանակը փոքր է։ Էթիկայի հանձնաժողովը չունի հայտարարագրերում ներառված տվյալների իսկությունը ստուգելու և օրինազանցների դեմ պատիժներ կիրառելու լիազորություն կամ կարողություններ»։

Համաձայն հաշվետվության՝ «կարծես թե ընդհանուր շփոթունք գոյություն ունի շահերի բախման կանոնների և գույքի հայտարարագրերի միջև, ինչպես նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի և էթիկայի հանձնաժողովի դերերի միջև»։

Հաշվետվությունը նաև նշում է, որ «այն դեպքում, երբ հանձնաժողովն օժտված է հայտարարագրերը վերլուծելու լիազորությամբ, այն չի կարող ստուգել դրանցում ներկայացված տվյալների իսկությունը և չի կարող հայտնաբերել կեղծ կամ ոչ լիարժեք տեղեկատվությունը։ Գույքի հայտարարագրերի հրապարակման կանոնները խախտելու համար պատիժներ սահմանված չեն»։

Կառավարությունը և էթիկայի հանձնաժողովն իրավիճակը բարելավելուն նպատակաուղղված քայլեր են ձեռնարկում՝ հանձնաժողովին հասու դարձնելով կառավարության տվյալների շտեմարանները և էլեկտրոնային գրանցամատյանները⁹։ Ենթադրաբար այդ քայլերը պետք է թույլ տան ստուգելու բարձրաստիճան պաշտոնյաների կողմից ներկայացվող տվյալների իսկությունը և երաշխավորեն հանձնաժողովի կողմից հրապարակվող տեղեկատվության վավերականությունը և վստահելիությունը։

Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե ՀԿ-ն դիտարկել է բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից հայտարարագրերի հրապարակումը և նշել, որ¹⁰ «հրապարակված **հայտարարագրերի բովանդակությունը** նույնպես որոշակի կասկածի տեղիք է տալիս՝ դրանք ներկայացնող անձանց անկեղծության եւ նշված տվյալների ճշգրտության առումով։ Մի խումբ այդպիսի անծինք, ԶԼՄ-ների հրապարակումներից եւ հասարակության մեջ տարածված գնահատականներից դատելով, երկրի մեծահարուստներից են, սակայն իրենց գույքային վիճակի եւ դրամական միջոցների մասին շատ համեստ տվյալներ են ներկայացրել»։

ՀՀ կառավարությունը մի կողմից քայլեր է ձեռնարկում բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների վերաբերյալ

տեղեկատվությունն ավելի թափանցիկ դարձնելու համար, մյուս կողմից, «Ազատություն» ռադիոկայանի համաձայն, առաջարկում է բարձրաստիճան պաշտոնյաների ծախսերը¹¹ դարձնել պետական գաղտնիք:

Հայտարարագրերի թափանցիկության ապահովումը ճիշտ ուղղությամբ կատարված կարևոր քայլ է: Սակայն, միայն այս քայլը բավարար չէ իշխանության թափանցիկություն ապահովելու համար: «Ազատություն» ռադիոկայանի և լրատվական այլ միջոցներում առկա հրապարակումների համաձայն որոշ բարձրաստիճան պաշտոնյաներ և նրանց ընտանիքի անդամներ տասնյակ կամ նույնիսկ հարյուր հազար դոլար արժողությամբ նվերներ են ստացել՝ առանց դրանց աղբյուրների վերաբերյալ տեղեկատվության բացահայտման: «Ազատություն» ռադիոկայանին տված հարցազրույցում մի փաստաբան նշել է, որ «Հայաստանում օրենքները գրվում են քաղաքակիրթ աշխարհի աչքին թող փչելու համար»¹²: Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի փորձագետը նշել է, որ որոշ դատավորների խնայողություններն ավելացել են նրանց աշխատավարձի գումարի մեծության չափով և պարզ չէ, թե ինչ միջոցներով են այդ դատավորները կատարում իրենց ընթացիկ ծախսերը:

ՀՀ կառավարության և էթիկայի հանձնաժողովի ձեռնարկած քայլերի արդյունքները դեռ տեսանելի չեն:

Հետագա քայլեր

ԱՀՄ հետազոտողն առաջարկում է ընդլայնել Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի լիազորություններ նրան տալով հայտարարագրերում առկա տեղեկատվության արժանահավատությունն ստուգելու իրավունք և օրենսդրության մեջ նախատեսել դրույթներ և պատիժներ կիրառել հայտարարագիր չներկայացնող, սխալ կամ ոչ լիարժեք տեղեկատվություն ներկայացնող պետական պաշտոնյաների նկատմամբ: Սա հատկապես կարևոր է, հաշվի առնելով, որ համաձայն կառավարության կողմից տրված մեկնաբանությունների այս առաջարկություններն արդեն արտահայտված են կառավարության կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարությունում և դրա գործողությունների ծրագրում:

¹ Նախագիծը www.ogp.am կայքում հասանելի էր 2014թ. նոյեմբերի 17-ից սկսած (<http://ogp.am/hy/news/item/2014/11/17/ethics/>)

² ՀՀ կառավարության 2015 թվականի փետրվարի 19-ի Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի №1835-Ն և 2011 թվականի դեկտեմբերի 15-ի №1819-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին №150-Ն որոշում:

³ ՀՀ կառավարության 2015 թվականի փետրվարի 19-ի Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին պետական կառավարման մարմինների կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մշակված անհատական տվյալների տեղեկատվական բազաներից տվյալների տրամադրան կարգը հաստատելու մասին №145-Ն որոշում:

⁴ Եվրոպական հանձնաժողով: Եվրոպական Միության և անվտանգության քաղաքականության բարձր ներկայացուցիչ: Աշխատակազմի համատեղ աշխատանքային փաստաթուղթ: Եվրոպական հարևանության քաղաքականության ներդրումը Հայաստանում: Առաջընթացը 2013 թվականին և առաջարկություններ: Հարակից փաստաթղթեր: Եվրոպական խորհրդարանի, Խորհրդի, Եվրոպական տնտեսական և սոցիալական կոմիտեի և տարածաշրջանների կոմիտեի Հարևանությունը խաչմերուկում: Եվրոպական հարևանության քաղաքականության ներդրումը 2013 թվականին: SWD(2014) 69 Անվերին տարբերակը հասանելի է http://eeas.europa.eu/enp/pdf/2014/country-reports/armenia_en.pdf կայքէջում:

⁵ Եվրոպական հանձնաժողով: Եվրոպական Միության և անվտանգության քաղաքականության բարձր ներկայացուցիչ: Աշխատակազմի համատեղ աշխատանքային փաստաթուղթ: Եվրոպական հարևանության քաղաքականության ներդրումը Հայաստանում: Առաջընթացը 2014 թվականին և առաջարկություններ: Հարակից փաստաթղթեր: Եվրոպական խորհրդարանի, Խորհրդի, Եվրոպական տնտեսական և սոցիալական կոմիտեի և տարածաշրջանների կոմիտեի Հարևանությունը խաչմերուկում: Եվրոպական հարևանության քաղաքականության ներդրումը 2014 թվականին: Քրյուսել, 25.3.2015. SWD(2015) 63 final: Անվերին տարբերակը հասանելի է http://eeas.europa.eu/enp/pdf/2015/enp-regional-report-southern-mediterranean_en.pdf կայքէջում:

⁶ Բաբկեն Թունյան: Ազգային ժողով՝ միլիոնատերերի ակումբ – 2 (ամբողջական ցանկ): Հոդվածը հասանելի է <http://168.am/2014/10/23/418782.html#:~:VEJJSn0zCX0.facebook> կայքէջում:

⁷ Համաձայն Ազատություն ռադիոկայանի Բարձրաստիճան պաշտոնյաների էթիկայի հանձնաժողովը մինչև այսօր չի հրապարակել գեռ մեկ բարձրաստիճան պաշտոնյայի անուն, ով խախտել է էթիկայի նորմերը և հարստացել պաշտոնական դիրքի չարաշահմամբ:

⁸ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության կողմից հիմնադրված Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի կոռուպցիայի դեմ պայքարի ցանցի Ստամբուլի հակակոռուպցիոն հակակոռուպցիոն գործողությունների պայմի մոնիտորինգի երրորդ փուլի հաշվետվությունը, որն ընդունվել է 2014թ. հոկտեմբերի 8-10-ին Փարիզում կայացած հանդիպման ժամանակ:

⁹ 2015թ.-ի մայիսի 15-ին Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը կնքել են համագործակցության հուշագիր: Տեղեկատվությունը հասանելի է <http://www.ethics.am/en/news/item/2015/05/15/news35/> կայքէջում:

¹⁰ Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի: «Բաց կառավարման գործընկերության» շրջանակում տեղեկատվության ազատության զարգացման ուղղությամբ Հայաստանի պարտավորությունների կատարման մասին: Հասանելի է <http://khosq.am/researches/%D5%A2%D5%A1%D6%81-%D5%AF%D5%A1%D5%BC%D5%A1%D5%BE%D5%A1%D6%80%D5%B4%D5%A1%D5%B6-%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%A8%D5%B6%D5%AF%D5%A5%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%B7%D6%80/> կայքէջում:

¹¹ «Ազատություն» ռադիոկայան: Առաջարկվում է պետական գաղտնիք դարձնել բարձրաստիճան պաշտոնյաների ծախսերը: 15 մայիսի 2014թ.: Հասանելի է <http://www.azatutyun.am/content/article/25386217.html> կայքէջում:

¹² Ազատություն ռադիոկայան: Դատավորների հայտարարագրերը բազմաթիվ հարցեր են առաջացնում: 15 սեպտեմբերի 2015թ.: Հասանելի է <http://www.azatutyun.am/content/article/27249831.html> կայքէջում:

5. Պետական գնումների բողոքարկման խորհրդի նիստերի առցանց հեռարձակում

Պարտավորության ձևակերպումը

Կազմակերպության մոնիտորինգի արդյունքները վկայում են, որ Գնումների բողոքարկման խորհրդի որոշումները շատ դեպքերում հարցեր են առաջացնում, որոնց պատասխանները գտնելու համար միայն նրանց հրապարակումը բավարար չէ, և անհրաժեշտ է ծանոթանալ նաև, թե ինչպես են դրանք ընդունվել խորհրդի նիստերի ժամանակ:

Փուլերը

1. Բանակցել մասնավոր ընկերությունների հետ, հստակեցնել համապատասխան աշխատանքների շրջանակը
2. Մշակել տեխնիկական առաջադրանք և անցկացնել գնումների գործընթաց
3. Գնումների բողոքարկման խորհրդի նիստերը առցանց հեռարձակվում են www.gnumner.am կայքով:

Հիմնական պատասխանատուն՝

ՀՀ կառավարության աշխատակազմ

Աջակցող կազմակերպություններ՝ չկան

Սկիզբը՝ 2015թ. մայիս

Ավարտը՝ 2015թ. հունիս

Պարտավորության կատարման վերլուծություն	Կոնկրետությունը				Համապատասխանությունը ԲԿԳ արժեքների պահանջներին				Հնարավոր ազդեցությունը				Կատարման աստիճանը			
	Գոյություն չունի	Ցածր	Միջին	Բարձր	Տեղեկատվության հասանելիությունը	Հանրային մասնակցությունը	Հանրության առջև հաշվետվողականությունը	Տեխնոլոգիաները և նորարարությունը հանուն թափանցիկության և հաշվետվողականության	Գոյություն չունի	Փոքր	Չափավոր	Տրանսֆորմատիվ	Չսկսված	Սահմանափակ չափով կատարված	Զգալի չափով կատարված	Կատարված
			X		X			X		X						X

Ինչ է տեղի ունեցել

Այս պարտավորության նպատակը պետական գնումների բողոքարկման խորհրդի նիստերն ավելի թափանցիկ և հանրության համար հասանելի դարձնելն է:

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն (այսուհետ՝ կենտրոն) այս պարտավորության կատարումն սկսել է ՀՀ վարչապետից համապատասխան հանձնարարական ստանալուց հետո¹: Գնումների բողոքարկման խորհրդի նիստերը 2015թ. հունիսից ի վեր առցանց հեռարձակվում են www.e-gov.am կայքի միջոցով: Նախկինում կայացած նիստերի տեսաձայնագրությունները կայքում հասանելի են:

Կենտրոնի աշխատակազմը պարտավորության կատարման վերաբերյալ ՔՀԿ հանրության հետ խորհրդակցություններ և քննարկումներ չի կազմակերպել, քանի որ առաջադրանքը և սահմանված նպատակները պարզ ու հասկանալի են եղել:

Գործողությունների ծրագրի իրականացման ընթացքում կենտրոնը փոխել է իր ենթակայությունը² և այժմ հաշվետու է ՀՀ կառավարության աշխատակազմին: Դա մասնակիորեն բացատրում է, թե ինչու են նիստերը <https://www.gnumner.am> կայքի փոխարեն հեռարձակվում <https://www.e-gov.am> կայքի միջոցով: Կառավարությունը նախատեսում է առցանց հեռարձակման վերաբերյալ հղում տեղադրել նաև www.gnumner.am կայքում, ինչը գնումների բողոքարկման խորհուրդների նիստերի վերաբերյալ տեղեկատվությունն ավելի տեսանելի կդարձնի:

Ինչ ազդեցություն է ունեցել

Այս պարտավորությունը պետական գնումների համակարգի գործունեության հանդեպ հանրային վստահությունը բարելավելուն ուղղված դրական քայլ է, սակայն միայն փոքր ազդեցություն կունենա: Այս պարտավորության ազդեցությունը բարելավելու համար կառավարությունը պետք է հետազոտի հեռարձակումների և բողոքարկումների արդյունքների վրա առցանց հեռարձակումների ունեցած ազդեցությունը: Անհրաժեշտ է նաև, որպեսզի կառավարությունը միջոցներ ձեռնարկի Հայաստանի պետական գնումների համակարգն ավելի մրցակցային և արդյունավետ դարձնելու

ուղղությամբ: Ըստ ՀԿ-ների, պետական գնումների գործընթացի մասնակիցների մեծ մասը տեղյակ չէ իրենց հասու այս գործիքի մասին և չի հետևում բողոքարկման խորհուրդների նիստերի առցանց հեռարձակումներին:

Ներկայումս բողոքարկման խորհուրդների առցանց հեռարձակումների վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է www.gnumner.am/am/home.html կայքի բողոքարկումների վերաբերյալ բաժնի ներքևում: Դիտարկումների արդյունքում պարզվել է, որ բողոքարկման խորհուրդների նիստերի հեռարձակումները շատ կարճ են և որոշ դեպքերում սահմանափակվում են խորհրդի որոշման ընթացքում ու որոշման ընդունման վերաբերյալ մանրամասներ չեն տրամադրվում³: Ի լրումն՝ ներբեռնված տեսանյութերի ձայնը ցածր որակի է և բարելավման կարիք ունի:

Վերջին 15 տարվա ընթացքում «Պետական գնումների մասին» ՀՀ օրենքը հաճախ փոխվել է: Պետական գնումների վերաբերյալ օրենքներ են ընդունվել 2000⁴, 2004⁵ և 2010⁶ թվականներին: Էլեկտրոնային գնումների համակարգի ներդրման ռազմավարությունը հաստատվել է 2006թ.⁷, և պետական գնումների մի մասը կատարվում է էլեկտրոնային եղանակով:

Այնուամենայնիվ, ՀՀ պետական գնումների համակարգը կրում է կոռուպցիայի, անարդյունավետության, ոչ բավարար թափանցիկության և խտրականության բացասական հետևանքները⁸: Որոշ մասնակիցների հանդեպ արտոնյալ վերաբերմունքը նվազեցնում են հավասար մոտեցման և թափանցիկության վերաբերյալ կառավարության հավաստիացումների արժեքը⁹: Թրանսփարենսի ինթերնեշնլ կազմակերպության տեղական կառույցի տվյալների համաձայն մրցույթների մասնակիցների թվաքանակի զգալի կրճատման հետևանքով պետական գնումները դառնում են ավելի կենտրոնացված և պակաս մրցակցային (մոտավորապես 200 ընկերություն շահում է գնումների 80 տոկոսը): Մեկ անձից գնումները համատարած բնույթ են կրում և կիրառվում են գնումների գրեթե 65 տոկոսի դեպքում: Ավելին, մեծածավալ գնումների մրցույթները հաղթում են այն ընկերությունները, որոնք գերիշխող դիրք ունեն շուկայում¹⁰:

Հետագա քայլեր

ԱՀՄ հետազոտողն առաջարկում է.

- ԲԿԳ գործողությունների երրորդ ծրագրում ներառել պետական գնումների ոլորտին վերաբերող առավել ընդգրկուն, բազմակողմանի և տրանսֆորմատիվ պարտավորություններ:
- Մի շարք կարևոր միջոցառումներ, որոնց մասին նշվում է, օրինակ, Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի հաշվետվություններում¹¹, պետք է ներդրվեն, որպեսզի պետական գնումների համակարգն ավելի թափանցիկ, իսկ պետական մարմիններն ավելի հաշվետու դառնան: Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնն արձանագրել է¹², որ «տեղի է ունեցել օրենսդրության և/կամ պրակտիկայով ամրագրված հաշվետվողականության սկզբունքների չկատարում»: Շրջանակային համաձայնագրերի վերաբերյալ տվյալները պարբերաբար չեն հրապարակվում:
- www.gnumner.am կայքի առաջին էջում հղման առկայությունը բողոքարկման խորհուրդների նիստերի վերաբերյալ տեղեկատվությունն ավելի տեսանելի կդարձնի:
- Հանրային իրազեկման միջոցառումները կիրավիրեն գործարար շրջանակների և ՔՀԿ-ների ուշադրությունը և կնպաստեն պետական գնումների հայաստանյան համակարգն ավելի մրցակցային ու թափանցիկ դարձնելուն:
- Օգտակար կլինի, եթե կառավարությունը գնումների վերաբերյալ իր որոշումների ազդեցության գնահատում իրականացնի (օրինակ՝ պետական գնումների բնագավառում մրցակցության բարելավման վրա բողոքարկման խորհուրդների նիստերի առցանց հեռարձակումների ազդեցության, արդյոք ավելացել է մասնակիցների թիվը, արդյոք դա ավելացրել է պետական մարմինների հանդեպ վստահությունը և այլն):

¹ ՀՀ վարչապետի 2015թ. մայիսի 5-ի 02/23.13/7501-15 հանձնարարականը:

² ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 30-ի Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 27-ի N°914-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին N°64-Ն որոշում

³ Օրինակ, 2015թ. հոկտեմբերի 22-ի նիստի տեսաձայնագրությունը տևում է 1 րոպե 19 վայրկյան (GBX-40/15 <https://www.youtube.com/watch?v=ETNC77JOFSc>), 2015թ. հոկտեմբերի 21-ի նիստի տեսաձայնագրությունը տևում է 4 րոպե 24 վայրկյան (GBX-37/15 <https://www.youtube.com/watch?v=yihVSjink8o>), հոկտեմբերի 20-ի նիստի տեսաձայնագրությունը տևում է 10 րոպե 46 վայրկյան (GBN-39/15 <https://www.youtube.com/watch?v=9KdFHI-80pM>), հոկտեմբերի 19-ի նիստի արձանագրությունը տևում է 7 րոպե 16 վայրկյան (GBX-36/15 <https://www.youtube.com/watch?v=9DfbFQr9eh4>), և այլն:

⁴ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք: ՀՕ-62-Ն. Ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2000 թվականի հունիսի 5-ին:

⁵ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք: ՀՕ-160-Ն. Ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2004 թվականի դեկտեմբերի 6-ին:

⁶ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք: ՀՕ-206-Ն. Ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2010 թվականի դեկտեմբերի 22-ին:

⁷ ՀՀ կառավարության 2006 թվականի հունվարի 26-ի էլեկտրոնային գնումների համակարգի ներդրման ռազմավարությունը հաստատելու մասին N°137-Ն որոշում:

⁸ Ֆրիդմ հաուս: Անցումային երկրներ, 2013: Հասանելի է https://freedomhouse.org/report/nations-transit/2013/armenia#_UzKKLahdVpt կայքէջում:

⁹ ԱՄՆ պետական դեպարտամենտ: Ներդրումային միջավայր. Հայաստան: 2013: Հասանելի է <http://www.state.gov/e/eb/rls/othr/ics/2013/204593.htm> կայքէջում:

¹⁰ Թրանսփարենսի Ինթերնեշնլ: Գնումների համակարգի մոնիտորինգը 2014-2015թթ.: Հասանելի է <http://transparency.am/hy/news/view/1117> կայքէջում:

¹¹ Թրանսփարենսի Ինթերնեշնլ: ՀՀ պետական գնումների համակարգի մոնիտորինգ. 2011-2013թթ.: 2014: Հասանելի է <http://transparency.am/en/publications/view/100> կայքէջում:

¹² Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն: 2015թ.: Պետական գնումների մոնիտորինգային հաշվետվություն 2014-2015թթ.: Հասանելի է <http://transparency.am/files/publications/1450716758-0-713489.pdf> կայքում:

6. Համայնքային միկրոհարցումներ

Պարտավորության ձևակերպումը

Կարճ հաղորդակցությունների միջոցով համայնքի բնակիչները ներգրավվում են տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների կայացման գործընթացին.

համայնքի բնակիչներին կարճ հաղորդակցության (SMS) միջոցով ուղղվում է համայնքային խնդիրների վերաբերյալ մեկ կամ մի քանի հարց՝ հնարավոր պատասխանների տարբերակներով: 24 ժամվա ընթացքում բնակիչները արձագանքում են հարցմանը՝ պատասխան SMS ուղարկելով, որտեղ նշում են պատասխանի իրենց նախընտրած տարբերակը:

Համայնքային միկրոհարցումը մատչելի և յուրօրինակ գործիք է, որը կնպաստի համայնքի բնակիչների և ՏԻՄ-երի միջև կապի ամրապնդմանը և որոշումների կայացման գործընթացի թափանցիկության ապահովմանը:

Փուլերը

1. Թվով 10 համայնքներում ներդրվել է «Համայնքային միկրոհարցում» ծրագիրը
2. Բոլոր 10 համայնքներում իրականացվել են SMS հարցումներ և արդյունքները հրապարակվել են

Հիմնական պատասխանատուն՝

ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն

Աջակցող կազմակերպություններ՝

ՀՀ մարզպետարաններ, ՀՀ համայնքներ (համաձայնությամբ)

Սկիզբը՝ 2013թ. սեպտեմբեր

Ավարտը՝ 2016թ. դեկտեմբեր

Պարտավորության կատարման վերլուծություն	Կոնկրետությունը				Համապատասխանությունը ԲԿԳ արժեքների պահանջներին				Հնարավոր ազդեցությունը				Կատարման աստիճանը			
	Գոյություն չունի	Ցածր	Միջին	Բարձր	Տեղեկատվության հասանելիությունը	Հանրային մասնակցությունը	Հանրության առջև հաշվետվողականությունը	Տեխնոլոգիաները և նորարարությունը հանուն թափանցիկության և հաշվետվողականության	Գոյություն չունի	Փոքր	Չափավոր	Տրանսֆորմատիվ	Չսկսված	Սահմանափակ չափով կատարված	Զգալի չափով կատարված	Կատարված
			X			X				X				X		

Ինչ է տեղի ունեցել

Այս պարտավորության նպատակն է բարելավել համայնքների բնակիչների և տեղական ինքնակառավարման մարմինների միջև կապը և օգնել տեղերում կայացված որոշումներն ավելի թափանցիկ դարձնել:

2008թ.-ին Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն ընդունեց Տեղական մակարդակում լավ կառավարման և ինովացիայի ռազմավարությունը¹ : 2013թ.-ին ՀՀ Ազգային ժողովը փոփոխություններ կատարեց «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում², որոնք ամրագրեցին տեղական ինքնակառավարման գործընթացում համայնքի բնակիչների մասնակցության պահանջները: Փոփոխությունները հիմնվում էին Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի լրացուցիչ արձանագրության մեջ ամրագրված տեղական իշխանությունների գործունեությանը մասնակից լինելու իրավունքի սկզբունքի վրա³:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը կարգավորում է համայնքների գործունեությանը վերաբերող հիմնական հարցերը: Օրենքի համաձայն համայնքի ղեկավարի կողմից որոշման նախագծի ներկայացման դեպքում համայնքի ավագանին տեղական հանրաքվե նշանակելու իրավունք ունի: 2013թ.-ին կառավարությունն օրենքում փոփոխություններ նախաձեռնեց⁴, որոնց արդյունքում համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը դարձրեց վերջինիս սկզբունքներից մեկը: Օրենքին ավելացվեց նոր հոդված (10.1), որը մասնակցությունը սահմանում է որպես բնակիչների կողմից տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին տեղեկատվություն ստանալու գործընթաց, որն ուղղակի կամ անուղղակի ներգործություն է ունենում այդ մարմինների կողմից ընդունված որոշումների վրա:

2013թ.-ի սեպտեմբերից ի վեր (մինչև գործողությունների այս ծրագրի մշակումն ու հաստատումը) ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունը և Հայաստանում ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը սկսել էին «Համայնքային միկրոհարցումներ» ծրագրի ներդրումը: Տարբեր մարզերի հինգ համայնքում իրականացվել էր փորձնական ծրագիր, որով փորձարկվել էր SMS հաղորդագրությունների միջոցով

տեղական ինքնակառավարման մասնակցությունը: Հարցումներն անանուն էին և վերաբերում էին համայնքային զարգացման հարցերին: Մասնակցությունը կամովի էր և բնակիչները կարող էին մասնակցել՝ տեղական ինքնակառավարման մարմին տեղեկատվություն տրամադրելով իրենց բջջային հեռախոսի համարի, սեռի ու տարիքի վերաբերյալ: ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության կայքում նշվում է⁵, որ միկրոհարցումներն իրականացվել են Արենի, Գորիս, Թումանյան, Նոր Երզնկա և Ջանֆիդա համայնքներում, 2013թ. դեկտեմբերին: Միկրոհարցումներին մասնակցելու համար հինգ համայնքում գրանցվել էր 2656 բնակիչ, որպեսզի կարծիք հայտնեն իրենց համայնքներում առկա առավել կարևոր խնդիրների վերաբերյալ (օրինակ՝ տրանսպորտի ուղեվարձի, համայնքների լուսավորման համակարգի ընդլայնման, խաղահրապարակների կառուցման, ճանապարհների վերանորոգման և այլ հարցերի վերաբերյալ): Միկրոհարցումներին մասնակցել է 612 բնակիչ: Որոշ դեպքերում միկրոհարցումներին մասնակցել է համայնքի բնակչության մինչև 28 տոկոսը: 2013թ.-ի միկրոհարցումների արդյունքները հասանելի են ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության կայքում:

ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունը և ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը նախատեսում են շարունակել ծրագիրը և ընդլայնել դրա աշխարհագրությունը:

ՀՀ կառավարությունը որոշեց ծրագրի փորձարկման հաջորդ փուլը ներառել ԲԿԳ երկրորդ գործողությունների ծրագրում: Համաձայն կառավարության ինքնզննարկման զեկույցի, 2015թ. հունիսի 30-ի դրությամբ, գործողությունների երկրորդ ծրագրի շրջանակներում, 2014-2015թթ.-ին 10 համայնքում ծրագրված միկրոհարցումներից կազմակերպվել է չորսը⁶: Այս հաշվետվությունը գրելու պահին ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության կայքում այդ միկրոհարցումների վերաբերյալ տեղեկատվություն չկար: ԱՀՄ հետազոտողը ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունից ստացել է համայնքների անունները:

Մյուս համայնքներում միկրոհարցումներ կազմակերպելու համար ֆինանսական աջակցություն ստանալու նպատակով ՀՀ կառավարությունը բանակցում է Ասիական զարգացման բանկի հետ:

Ինչ ազդեցություն է ունեցել

Այս պարտավորության հնարավոր ազդեցությունը փոքր է: 2014թ. հուլիսի 18-ին կազմակերպված գործողությունների ծրագրի նախագծի քննարկման ժամանակ որոշ ՀԿ-ներ առաջարկել են այս պարտավորությունը հանել գործողությունների ծրագրից՝ քննադատելով ԲԿԳ տեսակետից դրա համապատասխանությունը և հնարավոր ազդեցությունը: ՔՀԿ-ները տեղյակ չեն պիլոտային ծրագրի ավարտից հետո այս ոլորտում կառավարության նպատակների և մտադրությունների մասին: Պարզ չէ, թե միկրոհարցումները ինչպես կապահովեն որոշումների կայացման թափանցիկություն, քանի որ հարցումները միայն իրենցից կարծիքների հավաքագրման մեխանիզմ են ներկայացնում: Պարտավորության ձևակերպումը չի նշում, թե հարցումները ինչպես են վերափոխելու որոշումների կայացման գործընթացը: ՀԿ-ները նշում են, որ այն դեպքում, երբ պարտադիր կատարման ենթակա չեն նույնիսկ համայնքային հանրաքվեի արդյունքները, համայնքային միկրոհարցումների ծրագրի ներդրման նպատակահարմարությունը կասկածելի է, քանի որ սա կառավարության քաղաքականության մաս չի կազմում (կառավարությունը չի խոստացել, որ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հետ փորձնական այս նախաձեռնության ավարտից հետո համայնքային միկրոհարցումների իրականացման այս քաղաքականությունը կշարունակվի):

Առանց նախկինում (2013թ.-ին) իրականացված միկրոհարցումների ազդեցությունը գնահատելու, այս պարտավորությունը ԲԿԳ գործողությունների ծրագրում ներառելը նվազեցնում է դրա արժեքը և դրա սահմանված նպատակների կարևորությունը: Պարզ չէ նաև, թե համայնքների բնակիչներն ինչպես կարձագանքեն, եթե տեղական ինքնակառավարման մարմինները միկրոհարցումների արդյունքները հաշվի չառնեն իրենց որոշումների կայացման ժամանակ, ինչի արդյունքում կնվազի դրանց ազդեցությունը: Չի պարզվել, թե արդյո՞ք միկրոհարցումներն ազդել են տեղական ինքնակառավարման համապատասխան մարմինների վարքագծի վրա և ինչպես:

Հետագա քայլեր

Այս և նման պարտավորությունները կօգնեն բարելավելու երկրում հանրային մասնակցությունը, եթե փորձնական փուլից անցնեն լիարժեք ներդրման փուլ և եթե ազդեցության գնահատման արդյունքները կառավարությունն օգտագործի համապատասխան օրենսդրությունն ու կառավարման համակարգը բարելավելու նպատակով: ԱՀՄ հետազոտողն առաջարկում է.

- ՀԿ-ներին ներգրավել այս պարտավորության կատարման գործում:
- Հրապարակել միկրոհարցումների արդյունքները:
- Պարզաբանել, թե ինչպես են հարցումների արդյունքներն օգտագործվել և ինչպիսի արդյունքներ են եղել քաղաքացիների համար:
- Գնահատել այսպիսի փորձնական ծրագրերի կայունությունն ու համայնքների կառավարման, հանրային ծառայությունների որակի բարելավման և հանրային վստահության վրա դրանց ազդեցությունը:

¹ Եվրոպայի խորհուրդ: Տեղական մակարդակում նորարարության և լավ կառավարման ռազմավարություն: Հասանելի է http://www.coe.int/t/dgap/localdemocracy/strategy_innovation/default_en.asp կայքէջում:

² Հայաստանի Հանրապետության օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին: ՀՕ-72-Ն: Ընդունվել 2013 թվականի հունիսի 19-ին:

³ Տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքներին մասնակցելու իրավունքի վերաբերյալ տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիայի արձանագրությունը: Հասանելի է <http://conventions.coe.int/Treaty/en/Treaties/html/207.htm> կայքէջում:

⁴ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին: ՀՕ-72: Ընդունված 2013 թվականի հունիսի 19-ին:

⁵ 2013թ.-ին, մինչև ԲԿԳ շրջանակներում ՀՀ երկրորդ գործողությունների ծրագրի սկիզբը, 5 համայնքում կազմակերպված միկրոհարցումների վերաբերյալ տեղեկատվությունը:

⁶ Շիրակի մարզի Արեգնադեն համայնք, Կոտայքի մարզի Բյուրեղավան, Ջրվեժ և Քասախ համայնքներ, ինչպես նաև Արագածոտնի մարզի Աշտարակ համայնք:

7. Պետական քաղաքականությունների և օրենսդրական բարեփոխումների թափանցիկություն

Պարտավորության ձևակերպումը

Անկախ հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ ՀՀ պետական գերատեսչությունների կառավարման գործընթացը երբեմն ֆորմալ բնույթ է կրում բաց կառավարման հիմնարար արժեքների ընկալման և իրավակիրառական խնդիրների հետևանքով: Սա առաջացնում է հանրային անվստահություն և քաղաքացիական անտարբերություն երկրի կառավարման և վերահսկողության ձևավորման գործում: Ուստի, արդիական է քաղաքականությունների և օրենսդրական բարեփոխումների գործընթացում քաղաքացիական հասարակության արդյունավետ, թափանցիկ և հաշվետու մասնակցային համակարգի ձևավորման խնդիրը:

ՀՀ կառավարության նիստի 20 նոյեմբերի 2008թ-ի N 47 արձանագրային որոշմամբ հաստատված ՀՀ նախարարությունների կոլեգիաների/ խորհուրդների օրինակելի աշխատակարգում փոփոխությունների և լրացումների կատարում, որոնք

- Կհստակեցնեն և կտարանջատեն Կոլեգիաների և խորհուրդների գործառույթները, կճշգրտեն դրանցում մասնակից կողմերի կազմը, իրավունքներն ու պարտականությունները,
- Կսահմանեն խորհուրդների ձևավորման և գործունեության՝ բաց, թափանցիկ ընթացակարգերը, ՔՀԿ-ների ներկայացուցչականության և մասնագիտական որակավորման չափորոշիչները,
- Կսահմանեն կառավարության և նախարարությունների պաշտոնական կայքերում էլեկտրոնային հաշվետվետվողական համակարգի ներդրում՝ հանրային առաջարկները և դրանց վերաբերյալ պաշտոնական մեկնաբանությունները, մասնակցային խորհրդատվական մարմինների գործունեության տարեկան հաշվետվությունը թափանցիկ և հասանելի դարձնելու համար:

Փուլերը

1. Իրականացնել աշխատակարգերի և միջազգային փորձի ուսումնասիրություն:
2. Մշակել իրավական ակտերի/օրինակելի աշխատակարգի փոփոխությունների առաջարկները:
3. Իրականացնել հանրային քննարկումներ, հավաքագրել նոր առաջարկներ, լրամշակել առաջարկների փաթեթը և ներկայացնել կառավարության հաստատմանը:
4. Իրավական ակտերի/օրինակելի աշխատակարգի փոփոխությունների ընդունում:

Հիմնական պատասխանատուն՝

ՀՀ արդարադատության նախարարություն

Աջակցող կազմակերպություններ՝ չկան

Սկիզբը՝ 2014թ. օգոստոս

Ավարտը՝ 2015թ. օգոստոս

Պարտավորության կատարման վերլուծություն	Կոնկրետությունը				Համապատասխանությունը ԲԿԳ արժեքների պահանջներին				Հնարավոր ազդեցությունը				Կատարման աստիճանը			
	Գոյություն չունի	Ցածր	Միջին	Բարձր	Տեղեկատվության հասանելիությունը	Հանրային մասնակցությունը	Հանրության առջև հաշվետվողականությունը	Տեխնոլոգիաները և նորարարությունը հանուն թափանցիկության և հաշվետվողականության	Գոյություն չունի	Փոքր	Չափավոր	Տրանսֆորմատիվ	Չսկսված	Սահմանափակ չափով կատարված	Զգալի չափով կատարված	Կատարված
			X			X				X					X	

Ի՞նչ է տեղի ունեցել

Այս պարտավորությունը նպատակ է հետապնդում պետական մարմինների խորհուրդների աշխատանքներում ՀԿ-ների ներգրավման ճանապարհով խթանել հանրային մասնակցությունը:

«Հանրային ցանց» ժողովրդավարության զարգացման կենտրոնն իրավաբանական անձանց միությունը 2014թ.-ին հետազոտել է 18 նախարարության ինտերնետային կայքերը և բացահայտել, որ դրանցից 16-ն ունեն խորհրդատվական մարմիններ¹: Նախարարությունների մեծ մասի ինտերնետային կայքերն ունեն խորհրդատվական մարմիններին նվիրված էջեր: Խորհրդատվական մարմիններն ստեղծվում են որպես կառավարության և ՔՀԿ հանրության միջև երկխոսության հարթակ:

Ի լրումն կոլեգիաների 2013-2014թթ.-ին որոշ նախարարություններ ստեղծել են խորհրդատվական այլ մարմին: Որոշ նախարարությունների կայքերը «ձևավորման փուլում է» հիմնավորմամբ իրենց ինտերնետային կայքում չեն տեղադրում տեղեկատվություն այդ կառույցների և շատ այլ խնդիրների մասին: Որոշ նախարարություններ իրենց կոլեգիաների կազմում չունեն ՔՀԿ ներկայացուցիչներ:

Պարտավորությունը զգալի չափով կատարված է: 2015թ. հուլիսի 30-ին ՀՀ արդարադատության նախարարությունը ներկայացրել է ՀՀ նախարարին կից խորհրդի աշխատակարգի նախագիծը², որը խորհուրդների գործունեությունը կանոնակարգող

փոփոխություններ է նախատեսում կառավարության արձանագրային որոշման մեջ³: Արդարադատության նախարարությունը հանրությանը խնդրել է իրենց կարծիքներն ու առաջարկություններն ուղղել ogparmenia@gmail.com էլեկտրոնային հասցեով ogparmenia@gmail.com կամ ներկայացնել նախարարություն:

2015թ. օգոստոսի 21-ին ՀՀ արդարադատության փոխնախարարը կառավարության արձանագրային որոշման նախագիծը քննարկել է ՔՀԿ ներկայացուցիչների հետ⁴ («Արագան» և Ինֆորմացիայի ազատության կենտրոնն ակտիվորեն մասնակցել են քննարկումներին): Փոխնախարարի ներկայացմամբ՝ նախագիծը նախատեսում է հանրային խորհուրդներում ներգրավել միայն ՀԿ-ներին: Համաձայն նախագծի, հանրային խորհուրդները կունենան ՔՀԿ-ները ներկայացնող առնվազն 15 մասնակից և որոնց մեկ երրորդը կփոփոխվի երկու տարին մեկ: Փոխնախարարը ՔՀԿ-ների ներկայացուցիչներին խնդրել է իրենց առաջարկությունները ՀՀ արդարադատության նախարարություն ներկայացնել մինչև 2015թ. օգոստոսի 24-ը: Որոշ ՀԿ-ների ներկայացուցիչներ գովեստի արժանացրեցին արդարադատության նախարարության աշխատանքը և դրական կարծիք հայտնեցին իրենց համագործակցության մասին՝ նշելով, որ չնայած դրան, նման հարցերին լուծում տալու համար պետական մարմինները պետք է մշտապես զգան ՔՀԿ հանրության ճնշումը:

Ինչ ազդեցություն է ունեցել

ԱՀՄ հետազոտողն այս պարտավորության հնարավոր ազդեցությունը գնահատել է փոքր: «Պրոֆեսիոնալները հանուն քաղաքացիական հասարակության» ՀԿ-ի հետազոտությունը վկայում է, որ նախկինում գործադրված նման ջանքերը չեն հանգեցրել քաղաքականության ձևավորման գործընթացին ԲՀԿ հանրության զգալի ներգրավմանը: Որոշ ճանաչված և հարգանք վայելով ՀԿ-ներ (ինչպես, օրինակ, Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնը) չեն ներգրավվում պետական մարմինների կողմից ձևավորված նման խորհուրդներում, քանի որ կարծում են, թե այդ խորհուրդներն իմիտացիոն բնույթ են կրում՝ ի լրումն այն փաստի, որ նախարարությունները չեն ուզում իրական քննարկումներ ծավալել քաղաքացիական հանրության հետ⁵:

Ներդրվելու դեպքում այս պարտավորությունը կարող է նպաստել իմաստալից հանրային մասնակցությունը քաջալերելուն ուղղված կառավարության պատրաստակամության վերաբերյալ հանրային ընկալմանը:

2011թ.-ին «Պրոֆեսիոնալները հանուն քաղաքացիական հասարակության» ՀԿ-ն գնահատել է հանրային մասնակցության հետ կապված իրավիճակը՝ ուսումնասիրելով հայկական 18 նախարարության աշխատանքներն այդ ոլորտում (խորհուրդների առկայությունը, իրականացված միջոցառումները, կարողությունների զարգացման կարիքների գնահատումը): Քաղաքացիական հասարակության մի ներկայացուցիչ, որը

ներկայացված է խորհրդում, «Պրոֆեսիոնալները հանուն քաղաքացիական հասարակության» ՀԿ հետ հարցազրույցի ժամանակ նշել է, որ քաղաքականության մշակմանը մասնակցությունը ձևական բնույթ է կրում: «Պրոֆեսիոնալները հանուն քաղաքացիական հասարակության» ՀԿ-ի հաշվետվության համաձայն կոլեգիաների նիստերի հաճախականությունը կախված է նախարարների ներկայությունից և հարցերի առկայությունից:

Որոշ ՀԿ-ների կարծիքով կառավարության վերաբերմունքը քաղաքացիական հասարակության ակտիվ համագործակցությունը չի քաջալերում: ՀԿ-ների ներգրավվածությունը կանոնակարգող ներկայումս գործող փաստաթղթերը չեն հստակեցնում ԲՀԿ-ների տեսակարար կշիռը խորհուրդներում, խորհրդի գործունեության պայմանները և ՀԿ-ների իրավասությունները: Խորհուրդների գործունեության արդյունավետությունը մեծապես կախված է նախարարներից: Ներգրավված ՀԿ-ներն ակնկալում են, որ վերանայված փաստաթուղթը կվերացնի այդ թերությունները: Միաժամանակ կարծում են, թե ամեն ինչ կախված կլինի նրանից, թե ինչպես այն կներդրվի:

Հետագա քայլեր

ԱՀՄ հետազոտողն առաջարկում է հաստատել մասնակցային գործընթացը երաշխավորող առաջարկվող փաստաթուղթը, որը կխթանի մասնակցային կառավարման գործընթացը: ԱՀՄ հետազոտողը կառավարությանն առաջարկում է հետազոտել քաղաքականությունների մշակման գործընթացում ՀԿ-ների ընդգրկվածության հարցը և հետազոտության արդյունքները հրապարակել մինչև երկրորդ գործողությունների ծրագրի ավարտը:

¹ Հանրային ցանց ժողովրդավարության զարգացման կենտրոն իրավաբանական անձանց միություն: 2014թ.: Մասնակցային կառավարման մշակույթը պետական խորհրդակցական մարմիններում. Տեղական և միջազգային փորձի ուսումնասիրություն: Հասանելի է http://www.ogp.am/u_files/file/research_participatory%20governance.pdf կայքէջում:

² Հանրային քննարկման է ներկայացվել ՀՀ նախարարին կից խորհրդի աշխատակարգի նախագիծը: Հասանելի է http://ogp.am/hy/news/item/2015/07/30/Minister_council/ կայքէջում:

³ ՀՀ կառավարության 2008թ. նոյեմբերի 20-ի նիստի №47 արձանագրային որոշում:

⁴ Հասարակական կազմակերպությունների հետ քննարկվել է ՀՀ նախարարին կից ստեղծվելիք հանրային խորհրդի աշխատակարգը: Հասանելի է http://www.ogp.am/hy/news/item/2015/08/23/Councils_and <http://www.moj.am/article/1364> կայքէջում:

⁵ Մենք գիտենք՝ ոնց են աշխատում. Իրավապաշտպանը չի վստահում նախարարությանը կից ձևավորված խորհուրդներին: Աղբյուր՝ <http://galatv.am/hy/news/119657/>

8. Պետական կառավարման մարմինների օրինաստեղծ գործունեության մասին հանրության իրազեկում

Պարտավորության ձևակերպումը

ՀՀ գերատեսչությունների կողմից մշակվում են իրավական ակտերի նախագծեր, որոնց վերաբերյալ հասարակությունը երբեմն տեղեկացվում է ոչ բավարար մակարդակով: Արդյունքում հանրությունը հնարավորություն չի ունենում ծանոթանալ ընդունվող նախագծերին մինչև դրանց ընդունումը, ներկայացնել առաջարկություններ պատասխանատու գերատեսչություններին, ինչպես նաև ներդրում ունենալ դրանց լրամշակման գործում:

Կստեղծվի պետական կառավարման մարմինների կողմից մշակվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հրապարակման ընդհանուր առցանց հարթակ՝ իրազեկելու հանրությանը գերատեսչությունների կողմից մշակվող նորմատիվ իրավական ակտերի մասին (այդ թվում՝ բաժանորդագրման սկզբունքով): Քաղաքացիական հասարակությանը հնարավորություն կընձեռվի ներկայացնել առաջարկություններ նախագծերի վերաբերյալ, ինչպես նաև տեղեկանալ դրանց կարգավիճակի վերաբերյալ (ընդունվել է, թե ոչ, ինչպես է խմբագրվել, չընդունելու հիմնավորումները):

Փուլերը

1. Տեխնիկական լուծումների վերաբերյալ քննարկումների անցկացում, առաջադրանքի ձևավորում:
2. Հրապարակվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ իրավական հիմքերի ստեղծում:
3. Գերատեսչությունների պատասխանատու մասնագետների ուսուցման գործընթացի ապահովում:
4. Գերատեսչությունների կողմից մշակվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հրապարակում ստեղծված հարթակում:

Հիմնական պատասխանատուն՝

ՀՀ արդարադատության նախարարություն

Աջակցող կազմակերպություններ՝ չկան

Սկիզբը՝ 2014թ. օգոստոս

Ավարտը՝ 2016թ. դեկտեմբեր

Պարտավորության կատարման վերլուծություն	Կոնկրետությունը				Համապատասխանությունը ԲԿԳ արժեքների պահանջներին				Հնարավոր ազդեցությունը				Կատարման աստիճանը			
	Գոյություն չունի	Ցածր	Միջին	Բարձր	Տեղեկատվության հասանելիությունը	Հանրային մասնակցությունը	Հանրության առջև հաշվետվողականությունը	Տեխնոլոգիաները և նորարարությունը հանրության անցիկության և հաշվետվողականության	Գոյություն չունի	Փոքր	Չափավոր	Տրանսֆորմատիվ	Չսկսված	Սահմանափակ չափով կատարված	Զգալի չափով կատարված	Կատարված
			X		X					X				X		

Ինչ է տեղի ունեցել

Պարտավորության նպատակն է ստեղծել պետական մարմինների կողմից մշակվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հրապարակման առցանց հարթակ: Նոր կայքէջը օգտատերերին հնարավորություն կտա միաժամանակ ծանոթանալու շտեմարանում առկա նախագծերին և գրանցել դրանց վերաբերյալ իրենց մեկնաբանություններն ու առաջարկությունները:

Ներկա օրենսդրությունը, այն է՝ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքն ու կառավարության որոշումները, պահանջում են հանրային քննարկումների կազմակերպում, սակայն օրենսդրությունը բավարար չի կիրարկվում: ՀՀ կառավարության որոշումը¹ կարգավորում է նորմատիվ իրավական ակտերի հանրային քննարկումների գործընթացը: Կառավարության որոշման համաձայն, հանրային քննարկումների համար պետք է հատկացվի առնվազն 15 օր ժամանակ, եթե այն մշակող մարմինն ալվելի երկար ժամանակ չի նախատեսում: Որոշումը պահանջում է քննարկումների ամփոփաթեթի հրապարակում և օրենսդրության խմբագրված տարբերակի առկայություն համապատասխան պետական մարմնի կայքում: Ի լրումն արդարադատության նախարարության կայքէջում նախագծի առնվազն 15 օր առկայության, նախատեսվում է դրա առկայությունը նաև նոր հարթակում:

Օրենսդրական նորմատիվ ակտերի նախագծերի հրապարակման առցանց հարթակն 2015թ. հուլիսի 1-ի դրությամբ առկա չէր, ինչի արդյունքում պարտավորությունը դիտարկվել է որպես սահմանափակ չափով կատարված: Համաձայն ՀՀ արդարադատության փոխնախարարի, նախարարությունը Համաշխարհային բանկի հետ բանակցում է առցանց հարթակի ստեղծման նպատակով օժանդակություն ստանալու շուրջ:

Ինչ ազդեցություն է ունեցել

ԱՀՄ հետազոտողն այս պարտավորության հնարավոր ազդեցությունը գնահատել է փոքր: Այս հետազոտության շրջանակներում հարցված որոշ ՀԿ-ներ կասկածում են, որ նոր հարթակը կփարատի օրենսդրական նախագծերի մշակմանը հանրային մասնակցության ապահովման հետ կապված գոյություն ունեցող մտահոգությունները: ՀԿ-ները նշել

են, որ պետական մարմինները հաճախ չեն հետևում հանրային մասնակցությունը կանոնակարգող օրենսդրության պահանջներին: Պարզ չէ, թե որ պետական մարմինն է պատասխանատու համապատասխան ընթացակարգերի կիրարկման դիտարկման և դրանց նկատմամբ վերահսկողության համար: Բազմաթիվ ՀԿ-ներ նշել են պետական մարմինների կողմից ՀԿ-ների հետ հանդիպումների վերաբերյալ արձանագրություններ պատրաստելու և հրապարակելու պրակտիկայի բացակայության շատ կարևոր խնդրի մասին: Պետական մարմինների կողմից հրապարակվող մամուլի հաղորդագրությունները բավարար չեն, քանի որ չեն ներկայացնում հանդիպումների ժամանակ արտահայտված կարծիքների բազմազանությունը, ՀԿ-ների դիրքորոշումը և ներկայացնում են միայն գործընթացի վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես օրինակ, թե երբ է կայացել հանդիպումը և ինչ հարցեր են քննարկվել:

Օրենսդրական նախագծերի մշակման ժամանակ կառավարությունը բավարար լրջությամբ չի մոտենում հանրային քննարկումների խնդրին: Այդպիսի վերաբերմունք էր դրսևորվել վերջերս, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի նախագծի շրջանառության ժամանակ, որի ընդունումը Համաշխարհային բանկի կողմից բյուջետային աջակցության վարկի տրամադրման նախապայման էր: Մինչև 2014թ. հունիսի 21-ին Ազգային ժողովի կողմից օրենքի երրորդ ընթերցմամբ ընդունումը հանրային քննարկումներ չէին կազմակերպվել: Աշխատանքային խմբի կողմից ներկայացված մասնագիտական առաջարկներն ու համաձայնություններն անտեսվել էին: Մի շարք հանրային կազմակերպություններ դիմել էին նախագահին՝ խնդրելով չվավերացնել հակասություններով և թերություններով լի օրենքը: 2014թ. հունիսի 21-ին հատուկ նստաշրջանում քննարկման դրված նախագիծն էականորեն տարբերվում էր կառավարության կողմից խորհրդարան ներկայացված, Ազգային ժողովի գյուղատնտեսական և բնապահպանական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից քննարկված և հավանության արժանացած նախագծից: Փաստաթղթի նոր տարբերակը նախապես չէր հանրայնացվել և «Իրավական ակտերի մասին»

ՀՀ օրենքով պահանջվող հանրային քննարկումներ չէր անցել: ՀԿ-ները Համաշխարհային բանկին կոչ էին արել վերանայել վարկի տրամադրումը և բաց նամակով² դիմել էին շահագրգիռ միջազգային կոնվենցիաներին հաշվի առնել այս օրենքի ընդունման ժամանակ ՔՀԿ-ների հանդեպ կառավարության արհամարհական վերաբերմունք:

ՔՀԿ հանրությունը դեռևս ուզում է տեսնել, թե օրենսդրական նախաձեռնություններ ներկայացնող այս հարթակն ինչպես կանդախտաբան հանրային մասնակցության հետ կապված մտահոգություններին: Կասկածելի է, որ նոր մեխանիզմը կաշխատի, եթե կառավարությունը հանրային մասնակցության ապահովման հետ կապված օրենսդրության կիրարկման համար պատասխանատվությունը չդնի կոնկրետ որևէ մարմնի վրա:

Պետք է հաշվի առնել, որ ՀՀ կառավարությունը շատ արդյունավետ և արագ է գործում ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքները հանրությանը հասցնելու վերաբերյալ օրենսդրության կիրարկման ժամանակ: Օրինակ, 2007թ. Ազգային ժողովն ընդունել է «Ինտերնետով հրապարակային ծանուցման մասին» ՀՀ օրենք³: 2012թ. խորհրդարանը փոխեց օրենքի անվանումը՝ այն կոչելով «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին»⁴:

Կառավարությունը շատ արդյունավետ է գործում այդ օրենսդրությունը կիրարկելու ուղղությամբ և դա անելու համար արդեն ստեղծել է հատուկ կայք՝ www.azdarar.am: Այս օրինակը վկայում է, որ կառավարությունը շատ արդյունավետ է աշխատում իր կողմից կարևորվող քաղաքականությունների կիրարկման ժամանակ:

Հետագա քայլեր

ԱՀՄ հետազոտողը ՀՀ կառավարությանն առաջարկում է ուսումնասիրել, թե պետական տարբեր մարմիններն ինչպես են ենթարկվում օրենսդրության թափանցիկության, հաշվետվողականության և հանրային մասնակցության կանոններին և պահանջներին և զեկույց հրապարակի դրա վերաբերյալ:

ԱՀՄ հետազոտողը նաև առաջարկում է մինչև երկրորդ գործողությունների ծրագրի ավարտը ստեղծել այս պարտավորությամբ նախատեսված նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հրապարակման առցանց հարթակը:

¹ ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 25-ի Հանրային քննարկումների կազմակերպման և իրականացման կարգը հաստատելու մասին N°296-Ն որոշում:

² Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների բաց նամակը Համաշխարհային բանկին: Հասանելի է <http://transparency.am/hy/news/view/814> կայքէջում:

³ Հայաստանի Հանրապետության օրենքը «Ինտերնետով հրապարակային ծանուցման մասին»: ՀՕ-172: Ընդունվել է 2007 թվականի ապրիլի 9-ին Հասանելի է <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=3005&lang=arm> կայքէջում:

⁴ «Հայաստանի Հանրապետության օրենքը «Ինտերնետով հրապարակային ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին»: ՀՕ-129: Ընդունվել է 2012 թվականի մարտի 19-ին: Հասանելի է <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=4561&lang=arm> կայքէջում:

9. ՀՀ հանրակրթական պետական ուսումնական հաստատությունների կառավարման խորհուրդների ընտրության կարգում փոփոխությունների կատարում

Պարտավորության ձևակերպումը

ՀՀ հանրակրթական պետական ուսումնական հաստատությունների (ՊՈԱԿ-ների) կառավարման խորհուրդների ներկայացուցչական բնույթը երբեմն խախտվում է, քանի որ լինում են դեպքեր, երբ կառավարման խորհրդում ընտրվում է ծնող, որը, միաժամանակ, տվյալ հաստատության մանկավարժ է: Այդ դեպքում ծնողը չի կարող լինել անաչառ, քանի որ նա՝ լինելով նաև մանկավարժ, աշխատում է տվյալ հաստատության տնօրենի ղեկավարության ներքո: Այդ դեպքում կառավարման խորհուրդն արդյունավետ չի կարող գործել անդամների միջև գոյություն ունեցող ուղղահայաց և հորիզոնական կապերի պատճառով:

ՀՀ հանրակրթական պետական ուսումնական հաստատության կառավարման խորհուրդների ճիշտ համամասնությունն ապահովելու համար կառավարման խորհրդի ընտրության կարգում կկատարվի լրացում, համաձայն որի խորհրդի կազմում ծնողական համայնքից չեն առաջադրվի այն անձինք, ովքեր ընդգրկված են տվյալ դպրոցի մանկավարժական համակազմում:

ՀՀ հանրակրթական պետական ուսումնական հաստատության կառավարման խորհրդի ընտրության կարգում փոփոխությունների կատարում:

Փուլերը

1. Աշխատանքային խմբի ստեղծում՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցությամբ:
2. ՀՀ հանրակրթական պետական ուսումնական հաստատությունների կառավարման խորհուրդների ընտրության կարգի լրամշակում և «Հանրակրթական ուսումնական հաստատությունների տարեկան բյուջեի պլանավորման և բյուջեի ծախսերի հաշվետվության կարգ»-ի մշակում ու հաստատում:

Հիմնական պատասխանատուն՝

ՀՀ կրթության և գիտության նախարարություն

Աջակցող կազմակերպություններ՝ չկան

Սկիզբը՝ 2014թ. օգոստոս

Ավարտը՝ 2015թ. մարտ

Պարտավորության կատարման վերլուծություն	Կոնկրետությունը				Համապատասխանությունը ԲԿԳ արժեքների պահանջներին				Հնարավոր ազդեցությունը				Կատարման աստիճանը			
	Գոյություն չունի	Ցածր	Միջին	Բարձր	Տեղեկատվության հասանելիությունը	Հանրային մասնակցությունը	Հանրության առջև հաշվետվողականությունը	Տեխնոլոգիաները և նորարարությունը համուն թափանցիկության և հաշվետվողականության	Գոյություն չունի	Փոքր	Չափավոր	Տրանսֆորմատիվ	Չսկսված	Սահմանափակ չափով կատարված	Զգալի չափով կատարված	Կատարված
			X			X	X			X						X

Ինչ է տեղի ունեցել

Այս պարտավորությունը նպատակ ունի բարելավելու դպրոցների կառավարման խորհուրդների ընտրության և դպրոցների բյուջեների պլանավորման գործընթացի թափանցիկությունը: Այս պարտավորությունն առաջարկվել էր Վորլդ Վիժն Հայաստանի կողմից և անդրադառնում է դպրոցների ֆինանսական կառավարման և կառավարման համակարգի գործունեության ոչ բավարար թափանցիկությանը, ներառյալ՝ դպրոցների կառավարման խորհուրդների ընտրությանը:

Պարտավորությունը կատարվել է: Պարտավորության կատարումն ապահովելու համար ՀՀ կրթության և գիտության նախարարությունն աշխատանքային խումբ է ձևավորել¹: Սկզբում աշխատանքային խումբը հանդիպումներ է ունեցել, որոնց ժամանակ խմբի անդամները ներկայացրել են խնդրի լուծման վերաբերյալ իրենց տեսլականը և որոշել են, թե ինչպես պետք է կազմակերպել աշխատանքը: Աշխատանքային խումբը նիստերի արձանագրություններ չի վարել (ինչպես ներկայացվել է այս հաշվետվության նախորդ բաժիններում, սա քաղաքացիական հասարակության կառույցների հետ պետական մարմինների համագործակցությանը վերաբերող վաղեմի խնդիրներից մեկն է): Հետագայում կարծիքները և նախագծերն աշխատանքային խմբի անդամները միմյանց են փոխանցել էլեկտրոնային փոստով: Հանդիպումների ժամանակ Վորլդ Վիժն Հայաստանն առաջարկել է, որպեսզի տվյալ դպրոցում դասավանդող ուսուցիչը

իրավունք չունենա դպրոցի կառավարման խորհրդում ներկայացնել ծնողներին, քանի որ ընկալվում է որպես դպրոցի տնօրենի ազդեցության տակ գտնվող անձնավորություն: ՀՀ կրթության և գիտության նախարարությունն ավելի հեռու է գնացել և գործող օրենսդրության մեջ փոփոխություն է կատարել, որի համաձայն եթե ուսուցչի կամ ուսուցչուհու երեխան սովորում է նույն դպրոցում, ապա տվյալ ուսուցիչը կամ ուսուցչուհին չի կարող դպրոցի կառավարման խորհրդում ներկայացնել ծնողներին, ՀՀ կրթության և գիտության նախարարությունը կամ որևէ այլ կառույց:

Քննարկումների և խորհրդակցությունների արդյունքում ՀՀ կրթության և գիտության նախարարությունը հաստատել է երկու փաստաթուղթ: Առաջին փաստաթղթով փոփոխություններ են կատարվել դպրոցների կառավարման խորհուրդների ձևավորման կարգում²: Երկրորդով հաստատվել է դպրոցի տարեկան բյուջեի ծրագրավորման և տարեկան բյուջեի կատարման հաշվետվության ներկայացման կարգը³:

Ինչ ազդեցություն է ունեցել

ԱՀՄ հետազոտողը կարծում է, որ այս պարտավորության կատարումը փոքր ազդեցություն կունենա: Չնայած պարտավորությամբ նախատեսվում են դրական քայլեր, սակայն դրանք բավարար չեն ֆինանսական գործունեության թափանցիկություն և դպրոցների անկողմնակալ կառավարում ապահովելու համար: Դեռևս շատ դժվար է թարմ տեղեկատվություն գտնել բազմաթիվ հանրակրթական ուսումնական

հաստատությունների կառավարման խորհուրդների գործունեության և նրանց եռամսյակային ու տարեկան ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Այս պարտավորության կատարման ընթացքում ՀՀ կրթության և գիտության նախարարությունն ակտիվորեն համագործակցել է գործընթացում ներգրավված ՀԿ-ների հետ: ՀՀ կրթության և գիտության նախարարության և ՀԿ-ների միջև այս համագործակցությունը Հայաստանի երկրորդ գործողությունների ծրագրում ներառված այլ պարտավորությունների կատարման համար պատասխանատու պետական մարմինների համար կարող է որպես օրինակ ծառայել: Կողմերը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը և ՀԿ-ների ներկայացուցիչները գործընթացն արդյունավետ են համարում:

ՀՀ կրթության և գիտության նախարարը հաստատել է դպրոցների բյուջեների ծրագրավորման գործընթացը և բյուջեների կատարման տարեկան հաշվետվության հրապարակման փորձնական գործընթացը կանոնակարգող հրամանը: ՀՀ կրթության և գիտության նախարարությունը մարզպետարաններին և Երևանի քաղաքապետարանին խնդրել է մեկ տարի հետո ներկայացնել գործընթացի իրականացման վերաբերյալ իրենց դիտարկումները: ՀԿ-ները մտահոգություն ունեն, թե ինչպես պետք է կատարվի փորձնական այս փուլի գնահատումը: Այնուամենայնիվ պարզ է, որ փորձնական փուլից հետո ՀՀ կրթության և գիտության նախարարությունը կհաստատի կարգի վերջնական տարբերակը և այն կներկայացնի ՀՀ արդարադատության նախարարություն գրանցման, ինչից հետո այն կդառնա բոլոր դպրոցների վրա տարածվող նորմատիվ իրավական ակտ: Ափսոսանքի է արժանի այն հանգամանքը, որ բացի «Կորլդ Վիժն Հայաստան» կազմակերպությունից և «Գորիսի ուսուցիչների միություն» ՀԿ-ից կրթության ոլորտում գործունեություն ծավալող այլ ՀԿ-ներ քննարկումներին չեն մասնակցել:

Պարտավորությունը բաղկացած է երկու մասից:

Պարտավորության առաջին մասը վերաբերում է հանրակրթական ուսումնական հաստատությունների տարեկան բյուջեների պլանավորմանը և կատարմանը: ՀԿ-ներն այն կարծիքին են, որ ուսուցիչներն ու ուսուցչուհիներն անկախ չեն և

կառավարությունն, ըստ էության, դպրոցների տնօրենների միջոցով կառավարում է նրանց: «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ-ի կողմից Երևանի 12 դպրոցում կատարված հետազոտության համաձայն⁴, դպրոցների կառավարման խորհուրդները քննարկում են տնօրենի կողմից ներկայացվող դպրոցի բյուջեն և այն ներկայացնում Երևանի քաղաքապետի հաստատմանը: Դպրոցի տնօրենը և հաշվապահը պատրաստում են եռամսյակային և տարեկան ֆինանսական հաշվետվություններ և այն ներկայացնում դպրոցի կառավարման խորհրդին ու Երևանի քաղաքապետարան: Դպրոցների մեծ մասը չեն հրապարակում եռամսյակային կամ տարեկան ֆինանսական հաշվետվությունները: Կառավարությունը շատ ակտիվ է դպրոցների ֆինանսական կառավարումը կանոնակարգող օրենսդրության ձևավորման գործում: Հանրակրթության ոլորտի ֆինանսական մի շարք խնդիրներ կարգավորվում են «Հանրակրթության մասին»⁵, «Կրթության մասին»⁷, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին»⁸ և «Բյուջետային համակարգի մասին»⁹ ՀՀ օրենքներով:

Հայաստանում հանրակրթական դպրոցների մեծ մասը պետական ոչ առևտրային կազմակերպություններ են և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի¹⁰ համաձայն, ըստ հիմնադրի կողմից հաստատված ընթացակարգերի պետք է հրապարակեն ֆինանսական հաշվետվություններ: 2004թ.-ին ՀՀ կառավարությունն արդեն իսկ հաստատել է պետական ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսական կառավարմանն ու հաշվետվությունների բարելավմանը նպատակաուղղված ծրագիր¹¹: 2006թ.-ին ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվել է լիազորված մարմինների կողմից պետական առևտրային կազմակերպությունների հաշվետվական կարգապահությունն ապահովող կարգ¹²: Որոշման նպատակն է կանոնակարգել պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը և լիազոր մարմինն ներկայացումը: Որոշումը կարգապահական պատասխանատվության միջոցներ է նախատեսում անփութորեն, ջնջումներով և սխալներով հաշվետվություններ պատրաստելու,

ուշ ներկայացնելու, հաշվետվության տարբեր մասերի միջև անհամապատասխանությունների առկայության դեպքում¹³: Որոշումը նպատակ էր հետապնդում խթանել Համաշխարհային բանկի կողմից ՀՀ կառավարությանը աղքատության կրճատման նպատակով տրամադրված վարկային ծրագրով նախատեսված առաջընթացը¹⁴:

ՀՀ կառավարության կողմից հաստատված¹⁵ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրի կրթության իրավունքի բաժինը Հայաստանի ԲԿԳ շրջանակներում ստանձնած պարտավորություններին ուղղակի վերաբերող գործողություններ է ներառում (11 և 12 գործողություններ): Դրանց համաձայն (11) ՀՀ կառավարությունը պատրաստվում է արդյունավետ միջոցներ ձեռնարկել դպրոցների մանկավարժական խորհուրդների և կառավարման խորհուրդների նիստերը հասարակության համար թափանցիկ դարձնելու ուղղությամբ՝ մանկավարժական խորհուրդների և կառավարման խորհուրդների կայացրած որոշումները դպրոցների կայքէջում տեղադրելու ճանապարհով¹⁶: Կառավարությունը միաժամանակ պատրաստվում է (12) ապահովել պետական ֆինանսավորմամբ բոլոր կրթական հաստատությունների բյուջեների և բյուջեների կատարողականների, ինչպես նաև դրանց ղեկավար մարմինների որոշումների հրապարակայնությունը¹⁷: 2010թ.-ին ՀՀ կառավարությունը հաստատել է հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեության ներքին և արտաքին գնահատման չափանիշներն ու իրականացումը¹⁸ և պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների շահույթի օգտագործման կարգերը¹⁹: ՀՀ ֆինանսների նախարարը 2013թ.-ի իր հրամանով²⁰ հաստատել է պետական ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ հաշվետվությունների ձևերը և դրանց լրացման պահանջները:

Չնայած վերը նշված բոլոր ջանքերին, Հայաստանի հանրակրթական ուսումնական հաստատությունների ֆինանսական և ոչ ֆինանսական կառավարումը բարելավման կարիք ունի:

Այս պարտավորության մյուս մասը վերաբերում է դպրոցների կառավարման խորհուրդների ձևավորմանը:

Դպրոցների կառավարման խորհուրդների ձևավորման գործընթացը կանոնակարգվում է ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով²¹: Խորհուրդը պետք է կազմված լինի 8 անդամից, որոնք ներկայացնում են ՀՀ կրթության և գիտության նախարարությունը, մարզպետին կամ Երևանի քաղաքապետին, մանկավարժական և ծնողական խորհուրդները:

Պայմանավորված այն հանգամանքով, որ կառավարման խորհրդի 8 անդամներից 6-ին նշանակում են պետական մարմիններն ու դպրոցի ղեկավարությունը, ՀԿ-ները կարծում են, որ կառավարման խորհրդի կազմի ձևավորման ներկա մեխանիզմը չի նպաստում դպրոցների անաչառ կառավարմանը:

Հետագա քայլեր

ՀՀ օրենսդրությունը պետական ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսական հաշվետվողականության համար բավարար հիմքեր է ստեղծում: Չնայած կառավարությունն արդյունավետ է աշխատում հաշվետվությունների ձևերը, ձևաչափերն ու լրացման կարգերը հաստատելու գործում, ֆինանսական հաշվետվությունները հանրությանը ներկայացնելը դեռևս խնդրահարույց է:

ԱՀՄ հետազոտողն առաջարկում է՝

- Կառավարությանը՝ ժամանակին և հետևողական կերպով պետք է կիրարկել թափանցիկության վերաբերյալ գործող օրենսդրությունը:
- ՀՀ կրթության և գիտության նախարարությանը՝ համագործակցություն ծավալել ոլորտում աշխատող ՀԿ-ների հետ հանրակրթական դպրոցների ղեկավարմանը և ֆինանսական կառավարմանը վերաբերող նրանց մտահոգող հարցերին արձագանքելու համար:

- ¹ ՀՀ կրթության և գիտության նախարարի 2014 թվականի նոյեմբերի 17-ի N*1105-Ա/Ք հրաման: Աշխատանքային խումբը կազմված էր ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակիցներից, «Վորլդ Վիժն Հայաստան» կազմակերպության երկու և «Գորիսի ուսուցիչների միություն» ՀԿ-ի մեկ ներկայացուցիչներից:
- ² ՀՀ կրթության և գիտության նախարարի 2015 թվականի փետրվարի 24-ի N*102-Ն հրաման ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N*113-Ն հրամանում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին:
- ³ ՀՀ կրթության և գիտության նախարարի 2015 թվականի մարտի 30-ի N*205-Ա/Ք հրաման, որով հաստատվել են հանրակրթական ուսումնական հաստատությունների տարեկան բյուջեի պլանավորման և բյուջեի տարեկան ծախսերի հաշվետվության կարգը:
- ⁴ Համայնքների ֆինանսիստների միավորում ՀԿ: 2014թ.: Բյուջետային թափանցիկության և ֆինանսական հաշվետվողականության ընդլայնումը Երևանի հանրակրթության համակարգում: Հասանելի է <http://www.osf.am/wp-content/uploads/2013/11/State-Policy-on-General-Education-Financing.pdf> կայքէջում:
- ⁵ «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը: ՀՕ-160: Ընդունվել է 2009 թվականի հուլիսի 10-ին:
- ⁶ Հանրակրթության մասին ՀՀ օրենքի հոդված 11-ի համաձայն պետական ուսումնական հաստատության խորհուրդը քննարկում է ուսումնական հաստատության ամենամյա ծախսերի նախահաշիվը, հաջորդ տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը և ներկայացնում պետական լիազորված մարմին՝ ՀՀ կրթության և գիտության նախարարություն կամ մարզպետարան: Համաձայն հոդված 12-ի, ուսումնական հաստատության տնօրենը խորհրդի քննարկմանն է ներկայացնում ուսումնական հաստատության ֆինանսատնտեսական հաշվետվությունը: Հոդված 29-ի և հոդված 35-ի համաձայն ՀՀ կառավարությունը հաստատում է ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման կարգը: Հոդված 11-ի կետ 1-ի մաս 7-ի համաձայն խորհուրդը քննարկում է ֆինանսատնտեսական և ուսումնադաստիարակչական գործունեության հաշվետվությունները:
- ⁷ «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը: ՀՕ-297: Ընդունվել է 1999 թվականի ապրիլի 14-ին:
- ⁸ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը: ՀՕ-248: Ընդունվել է 2001 թվականի հոկտեմբերի 23-ին:
- ⁹ «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը: ՀՕ-137: Ընդունվել է 1997 թվականի հունիսի 24-ին:
- ¹⁰ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի հոդված 23:
- ¹¹ ՀՀ կառավարության 2004 թվականի սեպտեմբերի 30-ի Պետական ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսական կառավարմանը և հաշվետվությունների գործընթացի բարելավման գործողությունների ծրագիրը հաստատելու մասին N1378-Ն որոշում:
- ¹² ՀՀ կառավարության 2006 թվականի հունվարի 12-ի Լիազորված մարմինների կողմից պետական ոչ առևտրային կազմակերպությունների հաշվետվական կարգապահության ապահովման կարգը հաստատելու մասին N163-Ն որոշում:
- ¹³ Առանձին դեպքերում, երբ հաշվետվությունների պատրաստման և ներկայացման համար պատասխանատու պաշտոնատար անձը չի կատարում որոշման պահանջները, կարող է պատասխանատվության ենթարկվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի համաձայն:
- ¹⁴ ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 1-ի Հայաստանի Հանրապետության կառավարության և Համաշխարհային բանկի միջև աղքատության կրճատման աջակցության երկրորդ վարկի առաջընթացն ապահովելու միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին N939-Ն որոշում:
- ¹⁵ ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին N303-Ն որոշում:
- ¹⁶ Գործողությունը պետք է կատարված լիներ 2014թ. երրորդ եռամսյակում:
- ¹⁷ Համապատասխան իրավական ակտի (ակտերի) նախագիծը (նախագծերը) պետք է ՀՀ կառավարություն ներկայացվելին 2014թ. չորրորդ եռամսյակում:
- ¹⁸ ՀՀ կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 3-ի Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության ներքին և արտաքին գնահատման չափանիշները և իրականացման կարգը հաստատելու մասին N*1334-Ն որոշում:
- ¹⁹ ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 2-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության շահույթի օգտագործման կարգը հաստատելու մասին N*1579-Ն որոշում:
- ²⁰ ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի փետրվարի 4-ի N*104-Ն հրաման, Պետական ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ հաշվետվությունների ձևերը և դրանց լրացման պահանջները սահմանելու և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2003 թվականի դեկտեմբերի 29-ի N*955-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին:
- ²¹ ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N*113-Ն հրաման, Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կղեգիպ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 8-ի N*981-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին:

10. Տեղեկատվության ազատության և հակակոռուպցիոն ոլորտում կարողությունների զարգացում

Պարտավորության ձևակերպումը

Ներկայումս պետական շատ ծառայողներ կոռուպցիայի դեմ պայքարի և տեղեկատվության ազատության ոլորտում չունեն բավարար գիտելիքներ և հմտություններ բաց և թափանցիկ գործելու համար:

Հանձնառությունը կօգնի լրացնել պաշտոնյաների մոտ տեղեկատվության և գիտելիքի պակասը:

200 հանրային ծառայողների գիտելիքները կոռուպցիայի դեմ պայքարի, ինթեգրիթիի ձևավորման և տեղեկատվության ազատության կրթելավվեն, ինչպես նաև կկատարելագործվեն հանրային ծառայողների գիտելիքները տեղեկատվության ազատության օրենսդրության կիրառման հմտությունները:

Ուսուցումները կօգնեն հանրային ծառայողներին աշխատել բաց և թափանցիկ՝ առաջնորդվելով հանրային ծառայողի էթիկական կանոններով:

Փուլերը

1. Կանցկացվի 10 ուսուցում:
2. Կվերապատրաստվեն 200 հանրային ծառայողներ:
3. Կլրացվեն 400 հարցաշարեր (200-ը՝ ուսուցման սկզբում, 200-ը՝ վերջում):
4. Հարցաշարերի հիման վրա կիրականացվեն երկու վերլուծություններ:

Հիմնական պատասխանատուն՝

ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն

Աջակցող կազմակերպություններ՝

ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ

Սկիզբը՝ 2015թ. փետրվար Ավարտը՝ 2015թ. դեկտեմբեր

Պարտավորության կատարման վերլուծություն	Կոնկրետությունը				Համապատասխանությունը ԲԿԳ արժեքների պահանջներին				Հնարավոր ազդեցությունը				Կատարման աստիճանը			
	Գոյություն չունի	Ցածր	Միջին	Բարձր	Տեղեկատվության հասանելիությունը	Հանրային մասնակցությունը	Հանրության առջև հաշվետվողականությունը	Տեխնոլոգիաները և նորարարությունը հանուն թափանցիկության և հաշվետվողականության	Գոյություն չունի	Փոքր	Չափավոր	Տրանսֆորմատիվ	Չսկսված	Սահմանափակ չափով կատարված	Զգալի չափով կատարված	Կատարված
			X		Պարզ չէ					X				X		

Ինչ է տեղի ունեցել

Պարտավորության նպատակն է հանրային ծառայողների համար ուսուցում կազմակերպել տեղեկատվության ազատության և կոռուպցիայի դեմ պայքարի թեմայով :

2014թ. ապրիլին ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդը՝ համագործակցելով «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի հետ, «Տեղեկատվության ազատություն և պետական կառավարման ոլորտում հանրային կապերի բարելավում» թեմայով դասընթաց է կազմակերպել 14 քաղաքացիական ծառայողի համար¹: Ի լրումն «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի կողմից կազմակերպած դասընթացների, 2015թ. օգոստոսի դրությամբ, «Հայ պետական ծառայողների միություն» ՀԿ-ն և «ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությունն ինֆորմացիայի ազատության և կոռուպցիայի դեմ պայքարի թեմաներով նույնպես դասընթացներ են կազմակերպել 82 քաղաքացիական ծառայողի համար: Յուրաքանչյուր դասընթացից հետո մասնակիցները պատասխանել են հարցաթերթիկների հարցերի, որոնք պահվում են այդ կազմակերպություններում:

Համաձայն կառավարության ինքնազննահատման զեկույցի, 2015թ. հունիսի վերջի դրությամբ այս ծրագրի շրջանակներում ուսուցում է անցել 81 պետական ծառայող, ինչը նախատեսված 200-ի կեսից պակաս է: ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունը դասընթացներ է կազմակերպում համայնքային ծառայողների համար, որոնց շրջանակներում ուսուցում են անցել 1000-ից ավելի համայնքային ծառայողներ, համայնքի ղեկավարներ, համայնքի ավագանու անդամներ և մարզպետարանների աշխատակիցներ²:

Ինչ ազդեցություն է ունեցել

ՀՀ կառավարությունը պարտավորություն է ստանձնել բարելավելու 200 հանրային ծառայողների գիտելիքները կոռուպցիայի դեմ պայքարի, ազնվության և տեղեկատվության ազատության վերաբերյալ: Համաձայն կառավարության ինքնազննահատման զեկույցի, ուսուցում են անցել

680 համայնքային ծառայող, 440 համայնքի ղեկավար և ավագանու անդամ, ինչպես նաև մարզպետարանի աշխատակազմի 50 աշխատակից, սակայն կառավարությունն այս պարտավորությունը կատարված չի համարել:

ՀՀ կառավարությունը նման պարտավորություն ուներ նաև ԲԿԳ առաջին գործողությունների ծրագրում, սակայն այն իրականացրել էր այլ կերպ: Այն դեպքում, երբ առաջին գործողությունների ծրագիրն անդրադառնում էր «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի կողմից կազմակերպվող ուսուցումներին, այս պարտավորությունն ընդլայնել է դրանց շրջանակը (թեև պարտավորության ձևակերպումը չէր հուշում այդ մասին): Ամեն տարի հարյուրավոր քաղաքացիական, համայնքային և հանրային ծառայողներ «Քաղաքացիական ծառայության մասին»³ և «Համայնքային ծառայության մասին»⁴ ՀՀ օրենքների պահանջներին համապատասխան վերապատրաստման դասընթացներ են անցնում: Այս դասընթացների վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության ինտերնետային կայքում (օրինակ՝ 2015թ.-ին 1268 մարդու, իսկ 2014թ.-ին 1628 մարդու համար իրականացված դասընթացների վերաբերյալ տվյալները հասանելի են համապատասխանաբար <http://www.mta.gov.am/files/docs/1379.pdf> և <http://www.mta.gov.am/files/docs/981.pdf> կայքէջերում): Այս վերապատրաստումներն ընդհանուր բնույթի են և սահմանափակ չափով են անդրադառնում տեղեկատվության ազատության և կոռուպցիայի դեմ պայքարին, մինչդեռ պարտավորության ձևակերպումն անդրադառնում էր վերը նշված թեմաներով մասնագիտացված դասընթացներին: Այսպիսով պարզ չէ, թե արդյո՞ք 200 հանրային ծառայող անցել է կոնկրետ այս թեմաներով դասընթաց, ինչ նշված է պարտավորության ձևակերպման մեջ:

ԱՀՄ հետազոտողի կարծիքով այս պարտավորության ազդեցությունը փոքր կլինի: Նախկինում կառավարությունը տարբեր ոլորտներում ուսուցման և կարողությունների զարգացման բազմաթիվ դասընթացներ է կազմակերպել: Սակայն կառավարությունը չի գնահատել այդ դասընթացների և կարողությունների զարգացման

ծրագրերի ազդեցությունը քաղաքացիների առջև հաշվետվողականության և թափանցիկության ապահովման տեսակետից:

«Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե» ՀԿ-ն նախկինում կատարված հետազոտության արդյունքներով եզրակացրել է⁵, որ պետական մարմինները չեն պատասխանում ստացված հարցումների մեկ երրորդին, 60 տոկոս դեպքերում պատասխաններն ուշանում են, իսկ 20 տոկոս դեպքերում՝ թերի են:

Հետագա քայլեր

Առաջընթացի վերաբերյալ ԲԿԳ ԱՀՄ առաջին հաշվետվությունը նմանատիպ պարտավորությունը նշել էր որպես ՀՀ կառավարության և ՀԿ հանրության միջև համագործակցության լավ օրինակ: Սակայն կարևոր է, որպեսզի կառավարությունը մշտադիտարկի ու գնահատի քաղաքացիական ու համայնքային ծառայողների վերապատրաստման դասընթացների արդյունավետությունն ու ազդեցությունը և անհրաժեշտ ճշգրտումներ կատարի դրանցում:

¹ ԲԿԳ Հայաստան տեղեկագիր #3: Հասանելի է <file:///C:/Users/User/Documents/Newsletters/OGPNewsletter3.pdf> կայքէջում

² Ներառել են կոռուպցիայի և տեղեկատվության ազատության վերաբերյալ 2-8 ժամ դասընթացներ:

³ «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը: ՀՕ-272: Ընդունվել է 2001 թվականի դեկտեմբերի 4-ին: Հոդված 20 վերաբերում է քաղաքացիական ծառայողների վերապատրաստմանը:

⁴ «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը: ՀՕ-43: Ընդունվել է 2004 թվականի դեկտեմբերի 14-ին: Հոդված 20 վերաբերում է համայնքային ծառայողների վերապատրաստմանը:

⁵ Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե: «Բաց կառավարման գործընկերության» շրջանակում տեղեկատվության ազատության զարգացման ուղղությամբ Հայաստանի պարտավորությունների կատարման մասին: Հասանելի է http://khosq.am/researches/%D5%A2%D5%A1%D6%81-%D5%AF%D5%A1%D5%BC%D5%A1%D5%BE%D5%A1%D6%80%D5%B4%D5%A1%D5%B6-%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%A8%D5%B6%D5%AF%D5%A5%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%B7%D6%80//_կայքէջում:

11. Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկություն

Պարտավորության ձևակերպումը

Հայաստանի խոշոր համայնքների մի մասը ունեն համացանցային կայքեր, մյուսները՝ ոչ, դրանք թարմացվում են խիստ անկանոն, ոչ բոլոր կայքերում են հրապարակվում ՏԻՄ որոշումները (ավագանու որոշումները, համայնքապետի հրամաններ ու կարգադրությունները) կամ դրանք հրապարակվում են մասնակիորեն: Հանրային քննարկումների, լուսմների, ավագանու նիստերի մասին իրազեկումն իրականացվում է ոչ բավարար մակարդակով: Ավագանու նիստերն ուղիղ համացանց են հեռարձակվում միայն Գյումրի եւ Վանաձոր քաղաքներում, իսկ որոշ համայնքներում դահլիճների բավարար տարածքի բացակայության հետևանքով երբեմն հնարավոր չի լինում ապահովել բոլոր հետաքրքրված անձանց մասնակցությունն ավագանու նիստերին: Կապահովվի Հայաստանի 20,000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների համացանցային կայքերի ստեղծումը, թարմացումը, համայնքային իշխանության կողմից ընդունված բոլոր իրավական ակտերի հրապարակումը, ավագանու նիստերի, հանրային քննարկումների և լուսմների վերաբերյալ ծանուցումը և ավագանու նիստերի առցանց հեռարձակումը

Փուլերը

1. Ավագանու նիստերը, հանրային քննարկումներն ու ՏԻՄ ասուլիսներն առցանց հեռարձակելու տեխնիկայի և սարքավորումների գնման, եղած կայքերի վերազինման կամ ստեղծման համար միջոցների հայթայթում 20000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների համար: Տեխնիկայի և սարքավորումների և կայքերի պատրաստման ծառայությունների գնման գործընթացի ապահովում:
2. 20000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների համացանցային տեղեկատվական կայքերի ստեղծում՝ հանրային մեկնաբանությունների հնարավորությամբ:
3. Համայնքների համապատասխան աշխատակիցների համար դասընթացների կազմակերպում:
4. Կայքերի գործարկում, թիրախ համայնքների ավագանու նիստերի և ՏԻՄ ասուլիսների առցանց հեռարձակում:

Հիմնական պատասխանատուն՝

ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն

Աջակցող կազմակերպություններ՝

ՀՀ մարզպետարաններ, ՀՀ համայնքապետարաններ (համաձայնությամբ)

Սկիզբը՝ 2014թ. օգոստոս

Ավարտը՝ 2016թ. ապրիլ

Պարտավորության կատարման վերլուծություն	Կոնկրետությունը				Համապատասխանությունը ԲԿԳ արժեքների պահանջներին				Հնարավոր ազդեցությունը				Կատարման աստիճանը			
	Գոյություն չունի	Ցածր	Միջին	Բարձր	Տեղեկատվության հասանելիությունը	Հանրային մասնակցությունը	Հանրության առջև հաշվետվողականությունը	Տեխնոլոգիաները և նորարարությունը համուն թափանցիկության և հաշվետվողականության	Գոյություն չունի	Փոքր	Չափավոր	Տրանսֆորմատիվ	Չսկսված	Սահմանափակ չափով կատարված	Զգալի չափով կատարված	Կատարված
			X		X						X			X		

Ինչ է տեղի ունեցել

Այս պարտավորության նպատակն է ինտերնետային կայքեր ստեղծելու, թարմացնելու և համայնքների ավագանիների նիստերն առցանց հեռարձակելու ճանապարհով հանրային քննարկումներն ու լուծումները դարձնել հասանելի և հրապարակային: Ուսումնասիրվող ժամանակաշրջանում այս պարտավորության հետ կապված հիմնական ուշադրությունը կենտրոնացվել է հեռարձակումների համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման վրա, ինչը դարձել է գնահատման առանցքը: 2011թ.-ի մարդահամարի տվյալների համաձայն՝ Հայաստանում 20 հազար և ավելի բնակչություն ունեցող 17 համայնք² գոյություն ունի: Գյումրի, Երևան, Վանաձոր և Արմավիր համայնքների ավագանիների նիստերն առցանց հեռարձակվում են (Վանաձոր համայնքի ավագանու նիստերը՝ ոչ պարբերաբար): ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունից ստացված տեղեկատվության համաձայն, առցանց հեռարձակման համար անհրաժեշտ սարքավորումների արժեքը մոտավորապես 915 հազար դրամ է (մոտ 1900 ԱՄՆ դոլար):

Այս հաշվետվությունը գրելու պահին համայնքների մեծ մասը ձեռք չէր բերել առցանց հեռարձակման համար անհրաժեշտ սարքավորումները (տեսախցիկներ, միկրոֆոններ, այլ սարքեր): 17 համայնքից միայն չորսն է հեռարձակում ավագանիների նիստերը, որոնցից մեկը՝ ոչ պարբերաբար: Ի լրումն, պարտավորությունը

կրում է ֆինանսական միջոցների սակավության հետևանքները և այդ պատճառով գնահատվել է որպես սահմանափակ չափով կատարված: Ներկայումս ՀՀ կառավարությունը բանակցում է Ասիական զարգացման բանկի հետ պարտավորության կատարման համար անհրաժեշտ ֆինանսական օժանդակություն ստանալու հնարավորության շուրջ: Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը (այսուհետ՝ «Ասպարեզ») պարտավորվել է հետագայում խորհրդատվական օժանդակություն ցուցաբերել: Որոշ համայնքների ղեկավարներ «Ասպարեզ»-ի հետ խորհրդակցել են ձեռք բերվելիք սարքավորումների տեսակների, գների և դրանց հետ կապված այլ հարցերի վերաբերյալ: «Ասպարեզ»-ի համաձայն, համակարգի արժեքը կարելի է նվազեցնել, փոքրացնելով անհրաժեշտ տեսախցիկների, միկրոֆոնների և այլ սարքերի քանակը:

Ինչ ազդեցություն է ունեցել

Այս պարտավորությունը նշվել է որպես չափավոր հնարավոր ազդեցություն ունեցող: Հայ հանրության մեծամասնությունը տեղյակ չէ համայնքների ավագանիների նիստերի ժամանակ ընթացող քննարկումներից և լուծումներից: Որոշ համայնքներում համայնքի հետաքրքրված բնակիչները տարածքի բացակայության պատճառով չեն կարող ներկա գտնվել համայնքի ավագանու նիստերին: Առցանց հեռարձակումը կօգնի մասնակիորեն լուծելու այս խնդիրը: Բարելավված կայքէջերն ու ավագանիների խորհուրդների առցանց հեռարձակումները

կբարելավեն հանրության իրազեկվածությունը: Այնուամենայնիվ, չկա վկայություն, որ ավագանիների գործունեությունը բարելավվել է այն չորս համայնքներում, որտեղ ավագանիների նիստերը ներկայումս առցանց հեռարձակվում են: Ավելին, ոչ բոլոր խոշոր համայնքներն ունեն պաշտոնական ինտերնետային կայքեր, իսկ նրանք, որոնք ունեն կայքեր, դրանք պարբերաբար չեն թարմացնում:

Չնայած կառավարությունը ստանձնել է համայնքների ավագանիների նիստերն առցանց հեռարձակելու պարտավորություն, կառավարությունը չի կարող առանց պարտավորության կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները տրամադրելու այն պարտադրել տեղական ինքնակառավարման մարմիններին:

ՀԿ-ները նշել են, որ միջոցների անբավարարությունը չպետք է այս պարտավորության չկատարման պատճառ հանդիսանա, և կառավարությունը, որպես պարտավորության նախաձեռնող, պետք է իր վրա վերցնի դրա կատարման ֆինանսական ծանրությունը, համայնքներին չստիպի, որպեսզի մանկապարտեզները, ճանապարհների պահպանությունը և կարևոր այլ կարիքների ֆինանսավորմանն ուղղելու փոխարեն ֆինանսական սուղ միջոցներն ուղղեն կառավարության ստանձնած պարտավորության կատարմանը:

Հետագա քայլեր

Կառավարությանն առաջարկվում է արագացնել այս պարտավորության կատարման գործընթացը՝ հեռարձակման համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման համար ֆինանսական միջոցներ հատկացնելով (մոտավորապես 10 միլիոն ՀՀ դրամ, ինչը համարժեք է մոտ 21 հազար ԱՄՆ դոլարի):

Առաջարկվում է, ի լրումն հեռարձակման համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման, նաև շարունակել ներդնել այս պարտավորության մնացած մասերը (օրինակ՝ համայնքների համացանցային տեղեկատվական կայքերի ստեղծում, տեղական իշխանությունների որոշումների հրապարակում, ավագանիների նիստերի վերաբերյալ ծանուցումների հրապարակում):

¹ Տարբեր համայնքների բնակչության թվի վերաբերյալ տվյալները հասանելի են <http://armstat.am/file/doc/99486813.pdf> կայքէջում:
² Երևան, Արտաշատ, Արարատ, Մասիս, Արմավիր, Վաղարշապատ, Գավառ, Սևան, Վանաձոր, Գյումրի, Հրազդան, Չարենցավան, Աբովյան, Ղափան, Գորիս, Դիլիջան, Իջևան:

V | Ինքնագնահատման զեկույցի գործընթացը

Ինքնագնահատման զեկույցի նախագիծը ՀՀ կառավարությունը հրապարակել է 2015թ. սեպտեմբերի 4-ին¹, որն անդրադառնում է ԲԿԳ շրջանակներում ՀՀ երկրորդ գործողությունների ծրագրում ներառված բոլոր պարտավորություններին: Ինքնագնահատման զեկույցը մեկնաբանությունների համար մոտավորապես երկու շաբաթ հասանելի է եղել www.ogp.am կայքում: Կառավարությունը մի քանի կարծիք է ստացել պետական մարմիններից: Քաղաքացիական հասարակությունից կառավարությունն առցանց մեկնաբանություններ չի ստացել: «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ն անմիջապես կառավարության ներկայացուցիչների հետ քննարկել է ինքնագնահատման զեկույցի հետ կապված հարցերը: ՀԿ-ների մեծ մասը նշել է, որ մեկնաբանություններ չեն ներկայացրել այդպիսիք չունենալու պատճառով:

2015թ. սեպտեմբերի 24-ին ՀՀ կառավարությունը հրապարակել է ինքնագնահատման զեկույցի վերջնական տարբերակը: 2013թ.-ին հրապարակված ինքնագնահատման առաջին զեկույցի համեմատ կառավարությունը զգալիորեն բարելավել է երկրորդ ինքնագնահատման զեկույցի որակը: Ինքնագնահատման զեկույցը պաշտոնապես չի հաստատվել կառավարության կողմից:

Ինքնագնահատման զեկույցում նշվում է ԲԿԳ աշխատանքային խմբի միայն մեկ, ընդլայնված նիստի մասին², որի ժամանակ քննարկվել է ԲԿԳ շրջանակներում ՀՀ կառավարության երկրորդ գործողությունների ծրագրի իրականացման ընթացքը: Աշխատանքային խումբը ևս մեկ նիստ է ունեցել ապրիլին, երբ հավաքվել է քննարկելու ԲԿԳ մրցանակաբաշխությանը Հայաստանի կողմից ներկայացվող հայտը³:

V.1 | Ինքնագնահատման ստուգման թերթիկ

Արդյո՞ք տարեկան առաջընթացի հաշվետվությունը հրապարակվել է:	<input checked="" type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> չո
Արդյո՞ք հաշվետվությունը հրապարակվել է համաձայն ժամանակացույցի (կառավարությունների մեծ մասի համար մինչև սեպտեմբերի 30-ը)	<input checked="" type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> չո
Արդյո՞ք հաշվետվությունն առկա է մայրենի լեզվով:	<input checked="" type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> չո
Արդյո՞ք առկա է հաշվետվության անգլերեն օրինակը:	<input checked="" type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> չո
Արդյո՞ք կառավարությունը երկու շաբաթ ժամանակ է տրամադրել ինքնագնահատման հաշվետվության վերաբերյալ մեկնաբանություններ ներկայացնելու համար:	<input checked="" type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> չո
Արդյո՞ք հանրությունից ստացվել են մեկնաբանություններ:	<input checked="" type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> չո

Արդյո՞ք հաշվետվությունը տեղակայվել է ԲԿԳ կայքում:	<input checked="" type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> չո
Արդյո՞ք ինքնագնահատման հաշվետվությունը ներկայացնում է գործողությունների ծրագրի մշակման ընթացքում խորհրդակցությունների գործընթացը:	<input checked="" type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> չո
Արդյո՞ք ինքնագնահատման հաշվետվությունը ներկայացնում է խորհրդակցությունների գործընթացը գործողությունների ծրագրի իրականացման ընթացքում:	<input checked="" type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> չո
Արդյո՞ք ինքնագնահատման հաշվետվությունն անդրադառնում է դրա պատրաստման ընթացքում հանրային քննարկումների ժամանակահատվածին:	<input checked="" type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> չո
Արդյո՞ք հաշվետվությունն անդրադարձել է բոլոր պարտավորություններին:	<input checked="" type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> չո
Արդյո՞ք հաշվետվությունը պարտավորությունների կատարումը գնահատել է գործողությունների ծրագրում ներկայացված ժամանակացույցի և փուլերի տեսակետից:	<input checked="" type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> չո
Արդյո՞ք հաշվետվությունն անդրադարձել է ԱՀՄ հիմնական առաջարկություններին (վերաբերում է միայն 2015թ.-ից հետո ժամանակաշրջանին)	<input checked="" type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> չո

V.2: Լրացուցիչ տեղեկատվության ամփոփում

Կառավարության ինքնագնահատման զեկույցը ներկայացնում է ԲԿԳ շրջանակներում ՀՀ երկրորդ գործողությունների ծրագրի մշակման գործընթացը և գործողությունների ծրագրի ներդրման շրջանում կայացած քննարկումները:

Ինքնագնահատման զեկույցը տեղեկատվություն է ներառում ԲԿԳ աշխատանքային խմբի 2015թ.-ի սեպտեմբերին ծրագրված ընդլայնված նիստի մասին, որտեղ նախատեսված էր քննարկել պարտավորությունների կատարման ընթացքը, ծրագրի գնահատմանը և մշտադիտարկմանն առնչվող, ինչպես նաև հետագա քայլերի ու երրորդ գործողությունների ծրագրի մշակման մեկնարկի հետ կապված հարցեր: ԲԿԳ աշխատանքային

խմբի հաջորդ նիստը տեղի է ունեցել 2015թ. հոկտեմբերի 5-ին⁴ (ԲԿԳ ԱՀՄ հաշվետվության կողմից դիտարկվող ժամանակաշրջանից հետո): Համապատասխան պետական պաշտոնյաները զեկույցել են պարտավորությունների կատարման մասին (ինչը Հանրային մասնակցության միջազգային ասոցիացիայի՝ IAP2, Հանրային մասնակցության գնահատման սանդղակում համապատասխանում է «Տեղեկացնել» չափանիշին), իսկ կառավարությունը ներկայացրել է ինքնագնահատման զեկույցը: «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ն նույնպես ներկայացրել է իր կողմից իրականացված մշտադիտարկման զեկույցը: Կառավարությունը և ՀԿ-ների ներկայացուցիչները որոշել են համատեղ աշխատել ԲԿԳ գործընթացը կանոնակարգելու ուղղությամբ:

¹ Կառավարությունը հրապարակել է ԲԿԳ Գործողությունների ծրագրի ինքնագնահատման զեկույցի նախագիծը: 4 սեպտեմբերի 2015թ.: Տեղեկատվությունը հասանելի է http://ogp.am/hy/news/item/2015/09/04/self_ass/ կայքէջում:

² Տեղի ունեցավ ԲԿԳ աշխատանքային խմբի ընդլայնված նիստը: 3 մարտի 2015թ. Միջոցառումը նախաձեռնել է «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ն և ֆինանսավորվել է ՄԹ դեսպալության կողմից: Տեղեկատվությունը հասանելի է http://ogp.am/hy/news/item/2015/03/03/WG_March/ կայքէջում:

³ «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնությունում ՀՀ մասնակցության գործողությունների ծրագրից բխող աշխատանքները համակարգող աշխատանքային խմբի նիստ: 15 ապրիլի 2015թ. Քննարկվեց ԲԿԳ-մրցանակաբաշխության մասնակցության հարցը: Տեղեկատվությունը հասանելի է http://www.ogp.am/hy/news/item/2015/04/15/WG_April/ կայքում:

⁴ Տեղի ունեցավ ԲԿԳ աշխատանքային խմբի նիստը: 5 հոկտեմբերի 2015թ.: Տեղեկատվությունը հասանելի է http://ogp.am/hy/news/item/2015/10/07/WG_October/ կայքէջում:

VI | Երկրի առանձնահատկությունները

Հետագա ջանքեր են հարկավոր լավ կառավարումն ինստիտուցիոնալացնելու համար: Բաց կառավարություն ունենալու համար Հայաստանը պետք է անդրադառնա թափանցիկության և հաշվետվողականության մարտահրավերներին, ինչի վկայությունն են մամուլի ազատության անբավարար աստիճանը և օրենսդրության կիրարկման հետ կապված խնդիրները:

ԲԿԳ շրջանակներում ՀՀ երկրորդ գործողությունների ծրագիրն իրականացվել է պատմական, քաղաքական ու սոցիալ-տնտեսական զարգացումներով հարուստ ժամանակաշրջանում: 2015թ. ապրիլի 24-ին Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված հիշատակի միջոցառումներն այն հիմնական իրադարձություններն էին, որոնք միավորեցից աշխարհասփյուռ հայությանը: Հարյուր հազարավոր հայեր աշխարհի տարբեր ծայրերից այցելեցին Հայաստան՝ հարգանքի տուրք մատուցելու զոհերի հիշատակին՝ այն դարձնելով հանրային մասնակցության կարևորագույն միջոցառում և աշխարհի բոլոր հայերի համար յուրահատուկ օր^{1, 2, 3, 4, 5, 6}: Տարիներ շարունակ ՀՀ կառավարությունը բավական թափանցիկ էր հարևան Թուրքիայի հետ հարաբերությունները կարգավորելու իր ձգտումներում: Սակայն հիշատակի միջոցառումների նախօրեին ՀՀ Նախագահը 2009թ.-ին ստորագրված հայ-թուրքական արձանագրությունները⁷ հետ կանչեց ՀՀ Ազգային ժողովից⁸ մեկնաբանելով, որ Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի նախաշեմին, նոր թափ է ստանում ժխտողականությունն ու պատմության խմբագրման քաղաքականությունը:

2015թ. օգոստոսից ի վեր Հայաստանի և Ադրբեջանի սահմանին տիրող անհանգիստ իրավիճակը Հայաստանի կառավարությանը և հասարակությանն ամենից շատ մտահոգող հարցերից մեկն է⁹: Գրեթե բոլոր ՀԿ-ները լուրջ մտահոգություն են հայտնել սահմանին տիրող իրավիճակի վերաբերյալ, իսկ նրանց մի մասն այն կարծիքին է, որ ՀՀ կառավարությունը կարող է հրադադարի դեպքերի խախտումն ու Ադրբեջանական զինուժի կողմից սահմանամերձ հայկական գյուղերի ու քաղաքների զբոսաշրջության պատճառով հետաձգել

թափանցիկության և հաշվետվողականության հետ կապված ավելի հավակնոտ նախաձեռնությունները՝ անվտանգության հետ կապված ծանր ժամանակաշրջանի հիմնավորմամբ:

Վերջին շրջանում Մերձավոր Արևելքում ծավալվող իրադարձությունները մտահոգիչ են Հայաստանի համար: Քսաներորդ դարի սկզբում Սիրիայի Հալեպ նահանգը դարձավ Հայոց ցեղասպանության պատճառով Օսմանյան կայսրությունից հեռացող հայ փախստականների տունը¹⁰: Բնական էր, որ Հայաստանը դարձավ Սիրիան լքող հայկական ծագում ունեցող բազմաթիվ մարդկանց վերաբնակեցման վայր¹¹՝ նոր մարտահրավերների առաջ կանգնեցնելով ՀՀ իշխանություններին: Սիրիայից Հայաստան եկած փախստականների ինտեգրումը հայ հասարակության հետ դեռևս ընթացքի մեջ է, և Հայաստանի տնտեսական, սոցիալական ու մշակութային կյանքին նրանց լիարժեք մասնակցությունը դեռևս ժամանակ է պահանջում:

Սակայն Հայաստանի տնտեսական սեփական խնդիրները թույլ չեն տալիս Սիրիայից նոր ժամանողներին ապահովել բնակարանով և աշխատանքով, քանի որ երկիրն ինքն է հայտնվել տնտեսական ծանր իրավիճակում և աշխատանք գտնելու նպատակով հարյուր հազարավոր ՀՀ քաղաքացիներ մեկնել են արտասահման (հիմնականում՝ Ռուսաստան): Սիրիայից ժամանած հայերին պետության կողմից ցուցաբերվող օժանդակությունը հիմնականում սահմանափակվում է անվճար կրթական ու բժշկական ծառայությունների մատուցմամբ, և փաստաթղթերի տրամադրմամբ¹²: Սիրիացի հայերին օգնելու ՀՀ իշխանությունների

կողմից նախաձեռնած որոշ ծրագրեր նախատեսված են համայնքի առավել ապահովված անդամների համար¹³: Այնուամենայնիվ, միջազգային որոշ դիտորդներ գովաբանել են փախստականների ճգնաժամի լուծման գործում Հայաստանի դերը՝ նշելով, որ «բացառությամբ Հայաստանի, Գերմանիայի և Շվեդիայի, Եվրոպական մնացած 43 երկրների արձագանքն ուղղակի ամոթալի է»¹⁴:

Հայաստանի կառավարությունը պնդելով, որ Սիրիայից եկած փախստականներին աջակցելու համար դրամական միջոցներ չունի՝ թանկարժեք բնակարաններ է ձեռք բերել բարձրաստիճան պետական պաշտոնյաների համար¹⁵ և նախաձեռնում է կառավարության ու պետական տարբեր մարմինների նստավայրերի թանկարժեք վերանորոգումներ^{16, 17, 18 19}: Պետական ծախսերի հետ կապված հարցերը Հայաստանում ընթացող հանրային քննարկումների շրջանակից դուրս են: Հանրությունը բավարար հաշվետվություններ չի ստանում վերը նշված պետական ծախսերի վերաբերյալ, այն դեպքում, երբ Հայաստանի հազարավոր քաղաքացիներ հանրային որակյալ ծառայությունների կարիք ունեն:

Այնպիսի որոշումները, ինչպիսիք էին էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացումները 2014²⁰ և 2015թ.-ին²¹ բացասական ազդեցություն են ունեցել Հայաստանի տնային տնտեսությունների և բիզնեսի վրա: Սակագների այս բարձրացումները, որոնցից կարելի էր խուսափել, հանգեցրել են «Ոչ թալանին» կարգախոսով²² մասսայական դժգոհությունների: Բազմաթիվ քաղաքացիներ սակագնի բարձրացումը դիտարկում են որպես էլեկտրաէներգիայի մատակարարման համակարգի ոչ թափանցիկ և անարդյունավետ կառավարման հետևանք: Միջազգային մամուլն անդրադարձել է դժգոհություններին՝ համեմատություններ կատարելով նախկին Խորհրդային Հանրապետությունների հետ և շեշտելով, որ «տարածված խոսակցություններ կան, որ գների բարձրացումը կորուստները և կոռուպցիան քողարկելու փորձ է»²³:

2015թ. հունվարի 2-ին Հայաստանը միացավ Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի և Ղազախստանի Եվրասիական տնտեսական միությանը^{24, 25}: Սա մի որոշում էր, որը բավարար թափանցիկ չէր, և Հայաստանում այդ ուղղությամբ քննարկումներ չէին անցել: Հայկական որոշ ՀԿ-

ներ նշել են, որ դոնոր հանրությունը, օրինակ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը, էականորեն կրճատել է Հայաստանում իրականացվող տարբեր ծրագրերի ֆինանսավորման համար նախատեսված գումարների ծավալները: Այնուամենայնիվ, չնայած Արևմուտքի և Ռուսաստանի փոխադարձ պատժամիջոցներին ու Ռուսաստանի հետ Հայաստանի սերտ դաշնակցային հարաբերություններին, Հայաստանը շարունակում է ակտիվորեն համագործակցել Եվրոպական Միության հետ^{26, 27, 28}:

2015թ. հոկտեմբերի 8-ին ՀՀ Նախագահը 2015թ. դեկտեմբերի 6-ին Սահմանադրական փոփոխությունների հանրաքվե նշանակեց²⁹: Որոշ դիտորդներ և ընդդիմության որոշ առաջնորդներ դեմ էին սահմանադրության առաջարկվող նախագծին³⁰ և նշում էին, որ ընտրացուցակներում ընտրողների թիվը զգալի չափով մեծ է փաստացի ընտրողների թվից³¹:

Որոշ ՀԿ-ների կարծիքով քաղաքական ընդդիմությունը չափազանց կենտրոնացած է սահմանադրության նախագծի այն հոդվածների քննադատության վրա, որոնք նրանց կարծիքով, երաշխավորում են գործող իշխանության վերարտադրությունը, այն դեպքում, երբ ՀԿ-ների կարծիքով մի շարք հոդվածներ վտանգում են մարդու իրավունքներն (օրինակ՝ անվճար կրթությանը, բուժօգնությանը վերաբերող) ու հիմնարար ազատությունները:

Ֆրիդոմ հաուսը հայաստանյան մամուլը դասակարգում է որպես ոչ ազատ³²: Ինքնագրաքննությունը գերիշխող երևույթ է, հատկապես՝ հեռարձակման ոլորտում: Լրագրողներն ավելի շատ ազատություն ունեն համացանցում:

Կոռուպցիան շարունակում է մնալ ՀԿ հանրության կողմից բարձրաձայնվող հիմնական խնդիրներից մեկը³³: Իր վերջին հարցազրույցներից մեկում Հայաստանում ԱՄՆ դեսպանը նշել է, որ կոռուպցիան համատեղ նպատակներին հասնելուն խանգարող խոչընդոտ է³⁴: 2014թ.-ի կոռուպցիայի ընկալման համաթիվը 35 է 100 հնարավորից (100 միավորը նշանակում է կոռուպցիայից զերծ, իսկ 0-ն՝ խիստ կոռումպացված³⁵): Պետական կառավարման համակարգը, հատկապես՝ դատական համակարգը, ոստիկանությունը և առողջապահությունը խոցելի են կոռուպցիայի տեսակետից: Արմատավորված

կոռուպցիան, հզոր հովանավորչական ցանցերը և քաղաքական ու գործարար էլիտաների միաձուլումը հակակոռուպցիոն ջանքերը դարձնում են անարդյունավետ³⁶:

ՀԿ հանրությանը մտահոգում է այն հանգամանքը, որ վերջերս ստեղծված կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը, որն իր առաջին նիստը գումարել է 2015թ. հուլիսին³⁷, չի կարող պայքարել կոռուպցիայի դեմ, քանի որ դրա կազմում ներկայացված են բարձրաստիճան պաշտոնյաներ, որոնք շահերի բախում ունեն, քանի որ ներկայացված են գործարար ոլորտում և գործարքների մեջ են պետության հետ: Համաձայն մամուլի հրապարակումների՝ ՀԿ-ներն ու ընդդիմադիր կուսակցությունները չեն վստահում խորհրդին: Բազմաթիվ հայեր նույնպես թերահավատ են և կարծում են, որ դոնորների կողմից խորհրդին տրված միջոցները վատնվելու են³⁸:

Հայաստանում տվյալների թափանցիկության և էլեկտրոնային կառավարման ուղղությամբ բարեփոխումների կարևոր ժամանակաշրջան է: Սա ԲԿԳ գործողությունների ծրագրում տվյալների հասանելիության ուղղությամբ նախաձեռնությունների հնարավորություններ է ընձեռում: Հիշատակման է արժանի «Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի ստեղծում և ներդրում ՀՀ համայնքապետարաններում» նախաձեռնությունը, որը Մեխիկոյում կայացած գլոբալ համաժողովի ժամանակ Ասիա-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում առաջին մրցանակի արժանացավ³⁹: Նախաձեռնությունը կոչվում է «Խելացի համայնք»: Ծրագրի նպատակը Հայաստանի ՏԻՄ-երի գործունեության արդյունավետության բարձրացումն է և բաց կառավարման միջոցով համայնքների բնակիչներին մատուցվող հանրային ծառայությունների բարելավումը⁴⁰:

VI.2: Շահառուների առաջնահերթությունները

ՀԿ-ների մեծ մասը ներկա գործողությունների ծրագրի առավել կարևոր պարտավորություններ են դիտարկում կառավարության որոշումների կայացման գործում իրենց մասնակցությանը, հանքարդյունաբերության թափանցիկությանը և թափանցիկությանը վերաբերող մյուս պարտավորությունները: ՀԿ-ների կողմից բարձրացված մեկ այլ խնդիր է ԱՄՆ Միջազգային

զարգացման գործակալությանը և ՄԱԿ-ի զարգացման ծրագրին երկու դեպքում շահագրգիռ մարմինների թվում ներառելը:

Որոշ պարտավորությունների կատարումը ենթադրում է պաշտոնական փաստաթղթերի ընդունում (կառավարության որոշումներ կամ նախարարների հրամաններ): Հարկավոր է նկատի ունենալ, որ բազմաթիվ դեպքերում Հայաստանում առկա է միջազգային լավագույն չափանիշներին համապատասխանող օրենսդրություն, որը սակայն պատշաճ կերպով չի կիրարկվում: Օգտակար կլինի, եթե պաշտոնական որոշումների և հրամանների հաստատումը դիտարկվի որպես պարտավորությունների կատարման միջանկյալ փուլ, իսկ պարտավորությունները նախատեսեն նաև նոր առաջարկվող և ընդունվող օրենսդրական ակտերի լիարժեք կիրարկում:

Կառավարության կողմից հաստատվող՝ թափանցիկությանը, հանրային մասնակցությանը և հաշվետվողականությանը վերաբերող փաստաթղթերի հետ կապված մյուս խնդիրն այն է, որ դրանք չեն նախանշում այդ փաստաթղթերի կիրարկման գործընթացի մշտադիտարկման համար պատասխանատու մարմին կամ պաշտոնյա: Նոր քաղաքականությունների և միջոցառումների մշակման գործընթացը կշահի, եթե կառավարությունն իր հաստատած կարգերի մշտադիտարկման համար նշանակի պատասխանատու մարմիններ կամ պաշտոնյաներ, նախատեսի այդ մշտադիտարկումների հիման վրա հաշվետվությունների պատրաստում և առաջարկությունների ներկայացում (օրինակ՝ պետական պետական մարմինների պաշտոնական կայքերում կառավարության որոշումով պահանջվող տեղեկատվության առկայության, պաշտոնական փաստաթղթերի նախագծերի հանրային քննարկման և այլ գործընթացների մշտադիտարկումներ):

Գործողությունների ծրագրի շրջանակը երկրի առանձնահատկությունների համատեքստում

ԲԿԳ շրջանակներում ՀՀ առաջին և երկրորդ գործողությունների ծրագրերը ճիշտ ուղղությամբ կատարված շատ կարևոր քայլեր էին: Հայաստանի ՀԿ-ները և կառավարությունը հանրության համար կարևոր հարցեր քննարկելու ընդհանուր

հիմք ունեն: Սակայն, գործողությունների երկու ծրագրերն էլ չեն ներառել կառավարության տվյալների շտեմարանները համացանցի միջոցով հանրությանը հասանելի դարձնելու պարտավորություններ: Կառավարությունը պետք է տվյալները հանրությանը հասանելի դարձնելու ուղղությամբ ավելի շատ պարտավորություններ ներառի գործողությունների ծրագրերում, բարելավվի բաց տվյալների հասանելիությունը և տվյալների տեխնոլոգիական ընթացակարգերը: Հանրության առջև հաշվետվողականության վերաբերյալ կառավարության պարտավորությունները պետք է ներկայացնեն առկա տեղեկատվության օգտագործման միջոցով փոփոխությունների հասնելու մեխանիզմները:

Հայաստանյան բազմաթիվ ՀԿ-ներ նշել են, որ ԲԿԳ շրջանակներում ՀՀ երկրորդ գործողությունների ծրագիրը բավարար հավակնոտ չէր և չի անդրադարձել այն հիմնական մարտահրավերներին, որոնք առերեսում է երկիրը: Պարտավորությունները ճիշտ ուղղությամբ, կարևոր, սակայն փոքր քայլեր են նախատեսում: ԱՀՄ հետազոտողի կարծիքով կառավարությունն անդրադառնում է առանձին որոշակի հարցերի լուծմանը՝ առանց ներկայացնելու թափանցիկության, հաշվետվողականության և հանրային մասնակցության ոլորտներում առերեսվող խնդիրների ամբողջական պատկերը: Օրինակ, չնայած Թրանսփարենսի հիթերնեշլ հակակոռուպցիոն կենտրոնը բարձրաձայնում է պետական գնումների ոլորտում հիմնարար, խոշոր խնդիրների առկայության մասին, կառավարությունը որոշել է ԲԿԳ շրջանակներում իրականացվող գործողությունների ծրագրում անդրադառնալ այդ խնդիրներից միայն մեկին (գնումների բողոքարկման խորհուրդների գործունեության թափանցիկությանը):

Պետական մարմինների և պետության կողմից ֆինանսավորվող կազմակերպությունների թափանցիկությունը, հաշվետվողականությունը և հանրային մասնակցությունը կանոնակարգող փաստաթղթերի մշակումը և դրանց պատշաճ կիրարկումը պետք է դառնա առաջնահերթություն: Հատկապես, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ ըստ տեղական և միջազգային դիտորդների՝ խնդիրը ոչ թե պետական մարմինների գործունեության թափանցիկությունը և հաշվետվողականությունը բարելավող

օրենսդրության, այլ, այդ օրենսդրությունը կիրարկելու կառավարության ցանկության բացակայության կամ անկարողության մեջ է:

Հայաստանյան ՀԿ-ները և հասարակությունն ընդհանրապես ցանկանում են տեսնել կոռուպցիայի դեմ պայքարի լայնածավալ վճռական և կտրուկ քայլեր: Չնայած ՀՀ իշխանությունները պնդում են, որ ԲԿԳ երկրորդ գործողությունների ծրագրում ներառված յուրաքանչյուր պարտավորություն և կառավարության այլ գործողությունները պարունակում են կոռուպցիայի դեմ պայքարի բաղադրիչներ և այդպիսով անուղակիորեն թիրախավորում այն, ՀԿ-ները ցանկանում են կոռուպցիայի դեմ պայքարի ավելի ուղղորդված գործողություններ տեսնել:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբն առանձնացրել է ընտրություններին մասնակցած անձանց ցուցակները հրապարակելու կարևորությունը, քանի որ նախորդ ընտրություններն ապականվել են կեղծիքներով և իշխանությունների ու ընդդիմության աջակիցների միջև հետընտրական հակամարտություններով: Ընտրությունների հետ կապված կարևորագույն խնդիրներից մեկը ընտրություններին մասնակցած անձանց ցուցակների հրապարակումն է: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԲԿԳ շրջանակներում ՀՀ հաջորդ գործողությունների ծրագիրն իրականացվելու է ընտրական հաջորդ փուլի ժամանակահատվածում (2016թ.-ին՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ, 2017թ.-ին՝ խորհրդարանական և Երևանի ավագանու ընտրություններ, և 2018թ.-ին՝ նախագահական ընտրություններ), որոշ ՀԿ-ներ կարծում են, որ ընտրությունների մասնակիցների ցուցակների հասանելիությունը կբարելավի ընտրությունների արդյունքների հանդեպ հանրային վստահությունը:

Որոշ ՀԿ-ներ նշել են նախկինում ընդունված որոշումների կատարման կարևորությունը, ինչպես օրինակ՝ սոցիալական քարտերի ներդրմանը վերաբերող: Նախկինում դոնոր հանրությունը ֆինանսավորում էր Հայաստանում սոցիալական քարտերի ներդրման գործընթացը, քանի որ նպատակ էր դրված ստեղծել տվյալների շտեմարան և մարդկանց ազատել պետական տարբեր հաստատություններ տեղեկանքներ ներկայացնելու պարտավորությունից, սակայն բազմաթիվ պետական

մարմիններ շարունակում են քաղաքացիներից տեղեկանքներ պահանջել:

Առաջարկություններ

ՀԿ-ներին և կառավարությանը ներկայացնող տարբեր շահառուների հետ քննարկումների արդյունքում ԱՀՄ հետազոտողը եկել է այն եզրակացության, որ օգտակար կլինի, եթե ՀՀ կառավարությունը՝

- Ստանձնի ՀԿ-ներին հետաքրքրող պարտավորություններ, որոնց դեպքում մեկ կամ ավելի ՀԿ ընդգրկված է որպես շահագրգիռ կողմ:
- Երկրորդ գործողությունների ծրագրի ներդրման փորձը վկայում է, որ ՀՀ կառավարությունն առավել մեծ հաջողությունների է հասել այն դեպքերում, երբ եղել է կառավարության հետ համագործակցող ՀԿ: ՀԿ-ների կողմից մշտադիտարկման չենթարկված պարտավորությունների գծով առաջընթացը բավարար չէ (օրինակ՝ առողջապահության ֆինանսավորման տեղեկատվության հանրային մատչելիության ապահովմանը վերաբերող 3-րդ կամ 10 համայնքում միկրոհարցումներ իրականացնելու վերաբերյալ 6-րդ պարտավորությունները):
- Հստակեցնի ԲԿԳ աշխատանքային խմբի լիազորությունները և հաստատի կանոնադրություն (կամ աշխատակարգ):
 - Այս ցանկության մասին նշված է նաև «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի կողմից պատրաստված քաղաքացիական հասարակության հաշվետվությունում⁴¹:

¹ On 11 September, 2015 at the 103rd plenary meeting of UN General Assembly 69th session. resolution follows up on another important resolution, initiated by Armenia and adopted by the UN Human Rights Council in Geneva on 27March, 2015.

² Ազատություն ռադիոկայան: Հարյուր տարի հետո էլ հիշում ենք և պահանջում: Հասանելի է <http://www.azatutyun.am/content/article/26976247.html> կայքէջում:

³ http://www.nytimes.com/ref/timestopics/topics_armeniangenocide.html

⁴ http://www.nytimes.com/2015/04/18/opinion/sunday/armenians-shouldnt-let-genocide-define-us.html?_r=0

⁵ Ազգային շահ (The National Interest): Հայկական ցեղասպանությունը և ավելին. Դեր Ջորի ճանապարհը (The Armenian Genocide and Beyond: The Road to Deir al-Zor) Հասանելի է <http://nationalinterest.org/feature/the-armenian-genocide-beyond-the-road-deir-al-zor-14111> կայքէջում:

⁶ 2015թ. սեպտեմբերի 11-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան կոնսենսուսով ընդունեց Հայաստանի ներկայացրած «Ցեղասպանության հանցագործության զոհերի հիշատակի և արժանապատվության և այդ հանցագործության կանխարգելման միջազգային օր» խորագրով բանաձև: Միջազգային մամուլը բազմաթիվ հրապարակումներով անդրադարձավ քաններող դարի այս սարսափելի ռճագործության հիշատակի օրվա իրադարձություններին, որի առիթով Երևան էին ժամանել չորս երկրի նախագահներ և բարձրաստիճան այլ պաշտոնյաներ:

⁷ «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին» և «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման մասին» արձանագրությունները ստորագրվել են 2009թ. հոկտեմբերի 10-ին Ցյուրիխում:

⁸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԸ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՑ ՀԵՏ Ե ՎԱՆՉՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆ-ԹՈՒՐԻԱ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, 16 փետրվարի 2015թ: Հասանելի է <http://www.president.am/hy/press-release/item/2015/02/16/President-Serzh-Sargsyan-National-Assembly/>

⁹ «Ազատություն» ռադիոկայան: «ԼՂՀ ՊՆ. Օգոստոսի 6-7-ը՝ հրադարձի 400 խախտում, 8000 կրակոց»: Հասանելի է <http://www.azatutyun.am/archive/news/20140807/2031/2031.htm?lid=26518359> կայքէջում:

¹⁰ Եվրոնյուս: «Ինչու չեն Պարսից ծոցի հարուստ երկրները հյուրընկալում Սիրիայի փախստականներին... միգրոցի հյուրընկալում են» (Why aren't rich Gulf states welcoming Syrian refugees... or are they?): Անգլերեն տարբերակը հասանելի է <http://www.euronews.com/2015/09/30/why-aren-t-rich-gulf-states-welcoming-syrian-refugees-or-are-they/> կայքէջում:

¹¹ BBC: «Սիրիայի հայերը անվտանգություն են փնտրում պատմական հայրենիքում»: (Syria's Armenians look to ancient homeland for safety): 10 սեպտեմբերի 2015թ.: Անգլերեն տարբերակը հասանելի է <http://www.bbc.com/news/world-europe-34210854> կայքէջում: Վերջին ժամանակաշրջանի կրոնական անհանդուրժողականությունը հանգեցրել է հայկական հոգևոր և մշակութային ժառանգության ոչնչացման, հայկական ծագումով բազմաթիվ մարդկան սպանության և Իրաքից ու Սիրիայից արտաքսման:

¹² BBC: «Սիրիայի հայերը անվտանգություն են փնտրում պատմական հայրենիքում»: (Syria's Armenians look to ancient homeland for safety): 10 սեպտեմբերի 2015թ.: Անգլերեն տարբերակը հասանելի է <http://www.bbc.com/news/world-europe-34210854> կայքէջում:

¹³ Ինչպես, օրինակ, Սիրիայից ժամանած հայերի համար «Նոր Հայգա» անվամբ բնակավայր կառուցելու ծրագիրը, որտեղ տարածք վերցնելու համար կանխավճարը կազմում է 5000 ԱՄՆ դոլար: «Սիրիական կոնֆլիկտից փախուստից հետո նոր կյանքի սկիզբը Հայաստանում» (“Rebuilding a life in Armenia after fleeing Syrian conflict”), Վաշինգտոն փոստ (The Washington Post), Նիկոլ Քրաուդերի հեղինակությամբ (Nicole Crowder), 25 սեպտեմբերի 2014թ.: Հասանելի է <http://www.washingtonpost.com/news/in-sight/wp/2014/09/25/returning-home-syrian-armenians-look-to-rebuild/> կայքէջում:

¹⁴ «Դու ավելի լավն ես Եվրոպայ», Նյու Յորք թայմս թերթում 2015թ. հունիսի 28-ին Նիլա Մուծինեքի հրապարակած հոդվածը (հասանելի է http://www.nytimes.com/2015/06/09/opinion/youre-better-than-this-europe.html?_r=0): 2013թ. վերջի դրությամբ Հայաստանը հյուրընկալել էր ավելի շատ սիրիացի փախստականների, քան Ֆրանսիան, Իտալիան, ԱՄՆ-ն, Իսպանիան և Գերմանիան միասին վերցրած, իսկ 2015թ. վերջում, Սիրիայից Հայաստան ժամանած փախստականների թիվը գերազանցում էր 16 հազարը, հիմնականում Տեղապատմությունից փրկված հայերի ժառանգները: ՀՀ Նախագահի ելույթը ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայում, Նյու Յորք, 2015թ. սեպտեմբերի 29 (հասանելի է <http://www.president.am/en/press-release/item/2015/09/29/President-Serzh-Sargsyansspeech-UN-General-Assembly/>), <http://thegamp.com/2013/12/13/armenia-shames-europe-in-humanitarian-aid-to-syrian-refugees/>, <http://www.inquisitr.com/2396458/29-countries-accepting-syrian-refugees/>):

¹⁵ «Ազատություն» ռադիոկայան: Կառավարությունը թանկարժեք բնակարաններ է նվիրել պետական պաշտոնյաներին: 17 փետրվարի 2015թ.: Հասանելի է <http://www.azatutyun.am/content/article/26854669.html> կայքէջում:

¹⁶ «Ընթաց» հետաքննող լրագրողներ: 241 միլիոնանոց վերանորոգում՝ կառավարությունում. Ոսկեզօծ պատեր, քանդակներ, կահույք: 13 ապրիլի 2015թ.: Հասանելի է <http://hetq.am/arm/news/59614/241-million-oc-veranorogum-karavartutyunum-oskezozs-pater-qandakner-kahuyq.html> կայքէջում:

¹⁷ «168 ժամ»: Կառավարության շենքը կրկին վերանորոգվում է: 16 օգոստոսի 2015թ.: Հասանելի է <http://168.am/2015/08/16/526198.html> կայքէջում:

¹⁸ Առաջին լրատվական: Հովիվ Աբրահամյանը 214 մլն. դրամով կառավարությունում 3 դահլիճ է վերանորոգել: 14 ապրիլի 2015թ.: Հասանելի է <http://www.1in.am/1597927.html> կայքէջում:

¹⁹ ԲԿԿ շրջանակներում ՀՀ երկրորդ գործընթացների ծրագիրը ներդրվում էր մի ժամանակաշրջանում, երբ կառավարությունը փորձում էր իրականացնել կենսաթոշակային վիճելի բարեփոխումներ, որոնք սոցիալական մեծ բողոքների պատճառ հանդիսացան: 2015թ. հուլիսի 7-ին Սահմանադրական դատարանը որոշեց, որ փոփոխված օրենքի բողոքարկող հոդվածների գերակշիռ մասը չի հակասում Սահմանադրությանը: Որոշ ՀԿ-ների կարծիքով կենսաթոշակային բարեփոխումների հետ կապված իրականացումը հնարավոր շահառուների հետ ոչ բավարար բնակարանների հետևանք էր: Հասանելի է <http://www.azatutyun.am/content/article/27115045.html> կայքէջում:

²⁰ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով: Սահմանվել են էլեկտրաէներգիայի նոր սակագներ: 2014թ. հուլիսի 1: Հասանելի է <http://www.psrc.am/am/announcements/press-release/2042> կայքէջում:

²¹ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով: Վերանայվել են էլեկտրաէներգիայի սակագները: 2015թ. հունիսի 18: Հասանելի է <http://www.psrc.am/am/announcements/press-release/2147-2015-06-18-06-51-39> կայքէջում:

²² «Ոչ թախանի» նախաձեռնության բողոքի ակցիաների մասին տեղեկատվությունը հասանելի է <http://news.yahoo.com/armenian-police-disperse-protest-over-power-price-hikes-061809094.html> <http://www.ndtv.com/world-news/10-000-rally-in-armenia-as-police-threaten-crackdown-776222> <http://www.channelnewsasia.com/news/world/6-000-rally-in-armenia/1936172.html> <http://dunyanews.tv/en/World/285767-6000-rally-in-Armenian-capital-after-police-crack> <http://news.yahoo.com/police-threaten-break-electric-yerevan-protests-tensions-rise-165132918.html> <http://news.yahoo.com/thousands-march-armenia-against-price-hikes-181719169.html> կայքէջերում:

²³ Վաշինգտոն փոստ: «Արդյոք Հայաստանում հիմա նարնջազգյուն հեղափոխություն է»: (Did Armenia just have an Orange Revolution?): Հեղինակներ՝ ժաման Անդրեասյան և Գեորգի Դերուզյան: 24 հուլիսի 2015թ. Հասանելի է <https://www.washingtonpost.com/blogs/monkey-cage/wp/2015/07/24/did-armenia-just-have-an-orange-revolution/> կայքէջում:

²⁴ ԲԿԿ անկախ հաշվետվական մեխանիզմ: Հայաստան: 2012-2013թթ. Առաջընթացի մասին հաշվետվություն: Հասու է www.opengovpartnership.am կայքէջում:

²⁵ Միևնույն ստորագրվել է Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրին Հայաստանի միանալու մասին պայմանագիրը: Հասանելի է <http://www.president.am/hy/press-release/item/2014/10/10/President-Serzh-Sargsyan-Minsk-Supreme-Eurasian-Economic-Council/> կայքէջում:

²⁶ ՀՀ արտաքին գործերի նախարարի հայտարարությունը Եվրոպական հանձնաժողովին Հայաստանի հետ բանակցությունների մանդատի տրամադրման վերաբերյալ: 13 հոկտեմբերի 2015թ.: Հասանելի է http://mfa.am/en/interviews/item/2015/10/13/min_eu/ կայքէջում:

²⁷ Հայաստանի հետ շրջանակային համաձայնագրի շուրջ բանակցությունների մանդատ տալու մասին: 13 հոկտեմբերի 2015թ.: Անգլերեն տարբերակը հասանելի է http://eeas.europa.eu/delegations/armenia/press_corner/all_news/news/2015/2015_10_13_en.htm կայքէջում:

²⁸ ՀՀ կառավարությունը և հայ հասարակությունը դրականորեն արձագանքեցին ԵՄ արտաքին հարաբերությունների խորհրդի հայտարարությանը Եվրոպական հանձնաժողովին և Բարձր ներկայացուցչին Հայաստանի հետ նոր, համապարփակ պայմանագրի վերաբերյալ բանակցություններ սկսելու թույլտվություն տալու վերաբերյալ:

²⁹ Հայաստանի Հանրապետության Նախագահի 2015 թվականի հոկտեմբերի 8-ի ՆՀ-754-Ն հրամանագիրը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվե նշանակելու մասին (հասանելի է <http://www.president.am/hy/decrees/item/2273/> կայքէջում): Սովորաբար Սահմանադրական բարեփոխումները տեղի են ունենում, երբ երկրում առկա է Սահմանադրական ճգնաժամ, որը չի կարող հաղթահարվել առանց Սահմանադրության մեջ փոփոխություններ կատարելու (չի ձևավորվում կառավարություն, կամ իշխանության տարբեր թերթի միջև հակամարտություն գոյություն ունի, որը չի կարող լուծվել ներկա սահմանադրության պայմաններում):

³⁰ Խորհրդային ժամանակների հայտնի պալատի Պարույր Հայրիկյանը Սահմանադրական փոփոխությունները կասեցնելու նպատակով դիմել էր դատարան (տեղեկատվությունը հասանելի է <http://www.azatutyun.am/content/article/27318831.html> կայքէջում), իսկ Ազգային ժողովի ընդհանուր խմբակցության ղեկավար Լևոն Զուրաբյանը, Սահմանադրական հանրաքվեն անօրինական հայտարարեց (տեղեկատվությունը հասանելի է <http://www.azatutyun.am/content/article/27310055.html> կայքէջում):

³¹ Հարցազրույց Ժուռնալիստների «Ապարեզ» ակումբի նախագահ Լեոն Բարսեղյանի հետ: «Ընտրացուցակներում առաջադրված թվեր են ստացվել»: Հասանելի է <http://www.azatutyun.am/content/article/27372352.html> կայքէջում:

³² Ֆրիդոմ հուսուը Հայաստանի մամուլի ազատության ասոցիացիան գնահատել է 61 միավոր (100-ն ամենալավ գնահատականն է): Հասանելի է <https://freedomhouse.org/report/freedom-press/2015/armenia> կայքէջում:

³³ «Ազատություն» ռադիոկայան: ԹԻ զեկույց. Հայաստանում ամենակոռումպացվածը շարունակում է մնալ դատական համակարգը: Հասանելի է <http://www.azatutyun.am/content/article/27154845.html> կայքէջում:

³⁴ ԱՄՆ դեսպան Ռիչարդ Միլիսի հարցազրույցը «Ազատություն» ռադիոկայանին: Կոռուպցիան խանգարում է մեր ընդհանուր նպատակների իրականացմանը: Հասանելի է <http://www.azatutyun.am/content/article/27252230.html> կայքէջում:

³⁵ 2013-թ-ին, կոռուպցիայի ընկալման համաթվի դասակարգման համակարգում Հայաստանը 36 միավորով գրավում է 94-րդ տեղը https://www.transparency.org/whatwedo/publication/cpi_2013

³⁶ ԵՄ պատասխան: Կոռուպցիայի և կոռուպցիայի դեմ պայքարի զեկույց: <http://bit.ly/ISNrEGM>

³⁷ Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի անդրանիկ նիստը կայացել է 2015թ.-ի հուլիսի 28-ին: Տեղեկատվությունը հասանելի է <http://gov.am/en/news/item/8039/> էջում:

³⁸ Հայաստանի կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը մեղադրվում է առատ ծախսերում, 12 օգոստոսի 2015թ. Գարրիան:

³⁹ ԲԿԿ մրցանակի վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է ՀՀ կառավարության ինտերնետային կայքում <http://bit.ly/TQmgAAY>

⁴⁰ <http://www.justice.am/en/article/1411#sthash.vA3AP40a.dpuf>

⁴¹ Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ: 2015թ. ԲԿԿ Հայաստան. Քաղաքացիական զեկույց: Հասանելի է http://ogp.am/hy/news/item/2015/09/30/FOICA_monitoring/ կայքէջում: Պատասխանվել է Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության աջակցությամբ:

VII | Մեթոդաբանությունը և աղբյուրները

VII.1: Խաչաձև առաջարկություններ

Հայաստանում ԲԿԳ գործընթացում ներգրավված մի շարք ՀԿ-ներ նշել են, որ հարկավոր է կատարել ԲԿԳ ազդեցության գնահատում՝ տեսնելու համար, թե գործողությունները, որ կառավարությունը կատարում է և պարտավորությունները, որ կառավարությունը ստանձնում է, արդյո՞ք իրական ազդեցություն են ունենում պետական տարբեր մարմինների և նրանց գործունեության վրա: Հայաստանյան ՀԿ-ները կարծում են, որ եթե ԲԿԳ չգնահատի կառավարությունների գործողությունների ծրագրերի ազդեցությունը, այն կարող է դառնալ հնչեղ անուններ ունեցող բազմաթիվ միջազգային նախաձեռնություններից մեկը, որոնք քաղաքացիների համար իրական արդյունքներ չեն ապահովում:

Գործողությունների ծրագրի մշակման ընթացքում որոշ ՀԿ-ների չէր գոհացնում այն փաստը, որ բազմաթիվ առաջարկություններ մերժվում էին միջոցների սղության հիմնավորմամբ: Իրականացման փուլում որոշ պարտավորություններ ժամանակին չեն կատարվում ֆինանսական միջոցների բացակայության պատճառով: Որոշ ՀԿ-ներ կարծում են, որ կառավարությունը յուրաքանչյուր ՀԿ-ի կողմից առաջարկվող մեկական պարտավորություն է ներառել գործողությունների ծրագրում այդ ՀԿ-ներին հաճոյանալու համար, ինչի արդյունքում, ըստ ՀԿ-ների, գործողությունների ծրագիրը դարձել է մասնատված փաստաթուղթ և ամբողջական կերպով չի անդրադառնում բազմաթիվ կարևոր

հարցերի: Այս ՀԿ-ները կարծում են, որ Հայաստանի առջև ծառայած մարտահրավերների ամբողջական լուծումները գտնելու համար կառավարությունը պետք է դիտարկի ՀԿ-ների կողմից բարձրացվող ավելի լայնածավալ խնդիրներ:

Կառավարության ջանքերը հաջողությամբ կպսակվեն, եթե այն հրապարակի թափանցիկ և բաց գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվություն, որում կբացահայտի պետական մարմինների կողմից թափանցիկության և հաշվետվողականության կառավարության սահմանած պահանջների խախտման բոլոր դեպքերը:

Հանրային իրազեկումը կառավարության կողմից իրականացվող ցանկացած բարեփոխման շատ կարևոր բաղադրիչն է: Հասարակությունն՝ ընդհանրապես, և հնարավոր շահառուները՝ մասնավորապես, պետք է տեղյակ լինեն հանրային ծառայությունների որակի բարելավման և իրենց նոր հնարավորություններ ընձեռելու ուղղությամբ կառավարության ջանքերի վերաբերյալ:

Գլխավոր կոնկրետ, չափելի, հասանելի, իմաստալից և ժամկետ նախատեսող (SMART) առաջարկությունները

ԳԼԽԱՎՈՐ ՀԻՆԳ ‘SMART’ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	
1.	Կառավարությունը կարող է Հայաստանում ԲԿԳ-ն առաջ մղել լավ նախագծված հանրային իրազեկման միջոցառումների օգնությամբ, օգտագործելով տպագիր մամուլի, ռադիոյի և հեռուստատեսության կարողությունները և ընդգրկելով շահառուների լայն շրջանակ:
2.	Մարզային ՀԿ-ների լայն շրջանակ ներգրավելու համար կառավարությունը կարող է հանդիպումներ կազմակերպել և ԲԿԳ աշխատանքային խմբի որոշ նիստեր անցկացնել մայրաքաղաքից դուրս:
3.	Գործողությունների ծրագրի մշակմանն ու իրականացմանն արդյունավետ մասնակցություն ապահովելու համար կառավարությունը պետք է պատրաստի և հանրությանը ներկայացնի ԲԿԳ գործողությունների ծրագրի միջոցառումների ժամանակացույց, որը կերաշխավորի դրա թափանցիկ և մասնակցային մշակում և իրականացում:
4.	Կառավարությունը կարող է ավելի ամբողջական մոտեցում ցուցաբերել՝ ստանձնելով այնպիսի պարտավորություններ, որոնք առավել ընդգրկուն բարեփոխումներ կապահովեն պետական գնումների և ընտրությունների ոլորտներում:
5.	Կառավարությունը կարող է վերահաստատել ԲԿԳ շրջանակներում ՀՀ առաջին գործողությունների ծրագրային բյուջետավորման ներդրման վերաբերյալ պարտավորության մինչև 2018թ.-ի իրականացումը:

VIII | Մեթոդաբանությունը և աղբյուրները

Փորձագետներն օգտագործում են ԲԿԳ անկախ հաշվետվության հարցաշարն ու ուղեցույցները՝ զուգակցելով տեղում ԲԿԳ շահառուների հետ հարցազրույցներին և առկա տվյալների ուսումնասիրությանը: Այս հաշվետվությունը փորձաքննություն է անցել ԲԿԳ ղեկավար կոմիտեի կողմից նշանակված միջազգային փորձագետների խմբի կողմից՝ բարձր որակի ապահովման և երաշխավորելու համար, որ հետազոտության ընթացքում ցուցաբերվել է պատշաճ մոտեցում:

ԲԿԳ գործողությունների ծրագրի շրջանակներում առաջընթացի վերլուծությունը հարցազրույցների, հետազոտության և ոչ կառավարական շահառուների հետ հանդիպումների ժամանակ ստացված կարծիքների համադրությունն է: ԱՀՄ հաշվետվությունը հիմնվում է կառավարության ինքնագնահատման զեկույցի և քաղաքացիական հասարակության, մասնավոր հատվածի կամ միջազգային կազմակերպությունների կողմից պատրաստված առաջընթացի վերաբերյալ ցանկացած այլ գնահատման վրա:

Իրադարձությունների ճիշտ ներկայացման նպատակով յուրաքանչյուր հետազոտող քննարկումներ է կազմակերպում շահառուների հետ: Ֆինանսական սահմանափակումների և ժամանակի սղության պատճառով ԱՀՄ-ն չի կարող խորհրդակցել բոլոր շահագրգիռ կամ ազդեցության ենթարկված կողմերի հետ: Հետևաբար, ԱՀՄ-ն ձգտում է թափանցիկորեն ներկայացնել կիրառվող մեթոդաբանությունը և հնարավորության դեպքում անդրադառնում է հետազոտության մեջ շահառուների ներգրավման վերաբերյալ մանրամասները (մանրամասները՝ հետագայում այս բաժնում): Երկրի առանձնահատկությունների համատեքստում, երբ անհրաժեշտ է չբացահայտել տեղեկատվություն տրամադրող պետական ծառայող հանդիսացող կամ չհանդիսացող անձի ինքնությունը, ԱՀՄ-ն իրեն իրավունք է վերապահում չբացահայտելու տեղեկատվությունը տրամադրողին: Ի լրումն, մեթոդի սահմանափակման պատճառով, ԱՀՄ-ն քաջալերում է

հանրությանը ներկայացված նախագծերի վերաբերյալ մեկնաբանությունների հրապարակայնացումը:

Ինչպես նշվել է վերևում, այս հաշվետվության համար անհրաժեշտ հարցազրույցները կազմակերպվել են չափազանց սեղմ ժամկետներում: Այնուամենայնիվ, խստորեն պահպանվել են ԲԿԳ ԱՀՄ ուղեցույցներով պահանջվող ընթացակարգերը և կառավարության ու քաղաքացիական հասարակության կողմից ուսումնասիրության և կարծիքների ներկայացման համար անհրաժեշտ ժամկետները:

Հարցազրույցներ և քննարկումներ ֆոկուս խմբերի հետ

Յուրաքանչյուր հետազոտող տեղեկատվություն հավաքելու նպատակով պարտավոր է առնվազն մեկ միջոցառում կազմակերպել: Պետք է ջանքեր կիրառվեն ընթացող գործընթացում արդեն իսկ մասնակցող «սովորաբար ներգրավվածների» շրջանակից դուրս շահառուներ հրավիրելու հարցում: Շահառուներից տեղեկատվություն ստանալու համար լրացուցիչ մեխանիզմների կարիք կարող է առաջանալ (օրինակ՝ առցանց հարցազրույցներ, գրավոր պատասխաններ, կրկնակի հարցազրույցներ): Ի լրումն, հետազոտողները պատասխանատու կառույցների ներկայացուցիչների հետ կարող են հարցազրույցներ ունենալ, եթե ինքնագնահատման զեկույցում կամ համացանցում ներկայացված տեղեկատվության վերաբերյալ որոշակի կոնկրետ պարզաբանումներ ստանալու անհրաժեշտություն կա:

ԲԿԳ ԱՀՄ հետազոտողը հանդիպումներ է ունեցել ՀԿ-ներ ներկայացնող երկու ֆոկուս խմբի հետ:

Առաջին հանդիպումը կայացել է 2015թ. հոկտեմբերի 12-ին Երևանում, Քաղաքացիական զարգացման և համագործակցության հիմնադրամի գրասենյակում: ԲԿԳ ԱՀՄ հետազոտողը հրավեր է ուղարկել ԲԿԳ գործընթացներում ներգրավված կամ դրա վերաբերյալ տեղյակ (որոնք նախկինում մասնակցել են ԲԿԳ միջոցառումներին) ՀԿ-ների մեծ խմբի, սակայն հանդիպմանը մասնակցել են 4 ՀԿ-ի 6 ներկայացուցիչ:

Երկրորդ հանդիպումը կայացել է 2015թ. հոկտեմբերի 19-ին Վանաձորում, ՀԿ կենտրոնի տարածքում: ԲԿԳ ԱՀՄ հետազոտողը, «Լոռու զարգացման կենտրոն» ՀԿ-ի օգնությամբ, հրավիրել է ՀԿ-ների, որոնք ներգրավված չեն եղել ԲԿԳ գործընթացներում: Հանդիպմանը մասնակցել է Վանաձորի և Գյումրիի 6 ՀԿ-ի 8 ներկայացուցիչ:

ԲԿԳ ԱՀՄ հետազոտողն առանձին հանդիպումներ է ունեցել ԲԿԳ շրջանակներում ՀՀ կառավարության ստանձնած պարտավորությունների կատարման համար պատասխանատու հետևյալ պաշտոնյաների հետ.

Պարոն Սուրեն Քրմոյան, ՀՀ արդարադատության փոխնախարար

Պարոն Վարդան Վարդանյան, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության ընդերքի վարչության պետ

Պարոն Սարո Ծատուրյան, ՀՀ առողջապահության նախարարության պետական առողջապահական գործակալության պետ

Պարոն Աշոտ Գիլոյան, ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության տեղական ինքնակառավարման վարչության պետ

Տիկին Սուսաննա Մակյան, ՀՀ կրթության և գիտության նախարարության հանրակրթության վարչության նախադպրոցական և միջնակարգ կրթության քաղաքականության մշակման և վերլուծության բաժնի պետ

Պարոն Հայկ Այունց, Գնումների աջակցման կենտրոն ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ

Պարոն Արամ Ասատրյան, ՀՀ կառավարության աշխատակազմի աշխատակից

ԲԿԳ ԱՀՄ հետազոտողը էլեկտրոնային փոստով քննարկումներ է ունեցել ԲԿԳ շրջանակներում ՀՀ կառավարության ստանձնած պարտավորությունների կատարման համար պատասխանատու հետևյալ պաշտոնյայի հետ.

Պարոն Արմեն Խուդավերդյան, Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի անդամ

ԲԿԳ ԱՀՄ հետազոտողը հանդիպումներ և/կամ հեռախոսային քննարկումներ է ունեցել հետևյալ ՀԿ-ների ներկայացուցիչների հետ.

Պարոն Վարուժան Հոկտանյան, Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն

Տիկին Սոնա Այվազյան, Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն

Տիկին Լիանա Դոյոյոյան, Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ

Պարոն Լեւոն Բարսեղյան, Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ

Տիկին Թամարա Աբրահամյան, «Արագ» բարեգործական ՀԿ

Պարոն Սուրեն Դեհերյան, Լրագրողներ հանուն ապագայի ՀԿ

Պարոն Վարազդատ Սարգսյան, Վորլդ Վիժն Հայաստան

Այլ շահառու.

Տիկին Նարինե Թադևոսյան, Համաշխարհային բանկ, ԱԱԹՆ խորհրդատու

Անկախ հաշվետվական մեխանիզմի մասին

Անկախ հաշվետվական մեխանիզմը՝ ԱՀՄ-ն, կարևոր այն գործիքն է, որի օգնությամբ կառավարությունը, քաղաքացիական հասարակությունը և մասնավոր հատվածը երկու տարին մեկ կարող են հետևել կառավարության կողմից ԲԿԳ գործողությունների ծրագրի մշակմանն ու իրականացմանը: Այս հետազոտությունների նախագծումը և որակի վերահսկողությունն իրականացվում է փորձագետների միջազգային խմբի կողմից, որը բաղկացած է թափանցիկության, հանրային մասնակցության, հաշվետվողականության և սոցիալ-հասարակական (social science) հետազոտությունների ոլորտում փորձառություն ունեցող մասնագետներից: Ներկա պահին փորձագետների միջազգային խմբում ընդգրկված են հետևյալ մասնագետները.

- Յամին Այար
- Դեբի Բադլենդր
- Հեյզել Ֆեյզենրլաթ
- Ջոնաթան Ֆոքս
- Հիլե Հինսբերգ
- Անուրաջա Ջոշի
- Լիլիան Կլաուս
- Ռոզմարի ՄըքԳի
- Գերարդո Մունկ
- Էրնեստո Վելասկո

Վաշինգտոնում տեղակայված փորձագետների փոքր անձնակազմը՝ համագործակցելով հետազոտողի հետ, կառավարում է ԱՀՄ հաշվետվությունների պատրաստման գործընթացը: Այս հաշվետվության վերաբերյալ հարցերն ու մեկնաբանությունները կարող են ուղղվել irm@opengovpartnership.org հասցեով:

¹ Հետազոտության ուղեցույցը կարելի է գտնել ԱՀՄ ընթացակարգերի ձեռնարկում, որը հասանելի է՝ <http://www.opengovpartnership.org/about/about-irm>. կայքէջում:

IX | Ընտրության չափանիշների հավելված

2012թ. սեպտեմբերին ԲԿԳ-ն որոշել է սկսել քաջալերել նախաձեռնությանը միացած կառավարություններին՝ ստանձնելու ԲԿԳ ընտրության չափանիշների պահանջներին համապատասխան հավակնոտ պարտավորություններ:

ԲԿԳ աջակցության ստորաբաժանումը յուրաքանչյուր տարի ստուգում է ընտրության չափանիշներին համապատասխանությունը: Այդ գնահատականները ներկայացվում են ստորև: ԱՀՄ հաշվետվություններն անհրաժեշտության դեպքում կանդիդատնան երկրի կոնտեքստում որոշակի չափանիշների գծով գրանցված առաջընթացին կամ հետընթացին:

Ընտրության չափանիշները: ԲԿԳ-ին անդամակցելու համար կառավարությունները պետք է հավատարմություն ցուցաբերեն բաց կառավարության սկզբունքների նկատմամբ՝ բավարարելով բաց կառավարության չափորոշիչների նվազագույն պահանջները: Յուրաքանչյուր ոլորտում երկրի զարգացումը գնահատելու համար օգտագործվել են երրորդ տարբեր կողմերի ցուցանիշներ: Լրացուցիչ տեղեկատվությունների համար կարող եք տեսնել ընտրության չափանիշների վերաբերյալ այս հաշվետվության բաժին IX, կամ այցելել <http://www.opengovpartnership.org/how-it-works/eligibility-criteria> կայքէջ:

Չափանիշները	2011	Ներկա	Փոփոխություններ	Բացատրություն
Բյուջեի թափանցիկություն ¹	ND	ND	<é=ê>	4 = Բյուջեի նախագիծը և աուդիտի հաշվետվությունը հրապարակվում է 2 = երկուսից մեկը հրապարակվում է 0 = ոչինչ չի հրապարակվում
Տեղեկատվության հասանելիություն ²	4	4	<é=ê>	4 = «Տեղեկատվության ազատության մասին» օրենք 3 = Սահմանադրությունը նախատեսում է տեղեկատվության ազատություն 1 = «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի նախագիծ 0 = Տեղեկատվության ազատության մասին օրենք չկա
Գույքի հայտարարագրում ³	3	4	<é=ê>	4 = «Գույքի հայտարարագրերի մասին» օրենք, տվյալները հասանելի են 2 = «Գույքի հայտարարագրերի մասին» օրենք գոյություն ունի, տվյալները հասանելի չեն հանրությանը 0 = Օրենք գոյություն չունի

Քաղաքացիների ներգրավվածություն (Ռոի գործակից)	3 (5.88) ⁴	3 (5.88) ⁵	<é=ê>	<i>EIU քաղաքացիների ներգրավվածության միավորը:</i> 1 > 0 2 > 2.5 3 > 5 4 > 7.5
Ընդամենը/հնարավոր (տոկոս)	10/12 (83%)	13/16 (81%)	<é=ê>	Ընտրվելու համար հարկավոր է հավաքել հնարավոր միավորների 75% -ը

¹ Լրացուցիչ տեղեկատվության համար տես աղյուսակ 1 <http://internationalbudget.org/what-we-do/open-budget-survey/>. Այս պահի դրությամբ գնահատականի համար տես <http://www.obstracker.org/>

² Օգտագործվող երկու տվյալների շտեմարանները Սահմանադրությամբ նախատեսվածներն են, որոնք հասանելի են <http://www.right2info.org/constitutional-protections> կայքէջում և օրենքներն ու օրենքների նախագծերը՝ <http://www.right2info.org/access-to-information-laws> կայքէջում:

³ Simeon Djankov, Rafael La Porta, Florencio Lopez-de-Silanes, and Andrei Shleifer, "Disclosure by Politicians," (Tuck School of Business Working Paper 2009-60, 2009): [://bit.ly/19nDEFK](http://bit.ly/19nDEFK); Organization for Economic Cooperation and Development (OECD), "Types of Information Decision Makers Are Required to Formally Disclose, and Level Of Transparency," in Government at a Glance 2009, (OECD, 2009): [://bit.ly/13vGtqS](http://bit.ly/13vGtqS); Ricard Messick, "Income and Asset Disclosure by World Bank Client Countries" (Washington, DC: World Bank, 2009): [://bit.ly/1clokyf](http://bit.ly/1clokyf); For more recent information, see <http://publicofficialsfinancialdisclosure.worldbank.org>. In 2014, the OGP Steering Committee approved a change in the asset disclosure measurement. The existence of a law and de facto public access to the disclosed information replaced the old measures of disclosure by politicians and disclosure of high-level officials. For additional information, see the guidance note on 2014 OGP Eligibility Requirements at <http://bit.ly/1EjLJ4Y>

⁴ Economist Intelligence Unit, "Democracy Index 2010: Democracy in Retreat" (London: Economist, 2010). Available at: [://bit.ly/eLC1rE](http://bit.ly/eLC1rE)

⁵ Economist Intelligence Unit, "Democracy Index 2014: Democracy and its Discontents" (London: Economist, 2014). Available at: <http://bit.ly/18kEzCt>



Independent Reporting Mechanism
Open Government Partnership
c/o OpenGovHub
1110 Vermont Ave NW Suite 500
Washington, DC 20005

Open
Government
Partnership

INDEPENDENT
REPORTING MECHANISM